

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3178



3 K 33  
L - 35

LAURELLE PRESTON SF SALES

20 NOV 2009

21 JUN 2005

Պաղլատարներ բոլոր յերկրների, միացյալ

3K33 ՄՐ  
L-35

«ԲԱՆՎՈՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 10.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. 4. 4. 4. 4. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԿԱՆ ԲԱԺՆԵ.

Ի. ՍՏԱԼԻՆ

ԼԵՆԻՆԻ  
Յ Ե  
ԼԵՆԻՆԻ ԶՄԻ ՄԱՍԻՆ

Թարգ. ՀԱՐ. ԹՈՒՇՑՈՅՆԻ

## Ե Ե Կ Ե Կ Մ Ա Ս Ի Ն \*)

Ընկերներ, ինձ ասացին, վոր ձեզ մոտ այստեղ կազմակերպված և հիշողությունների յերեկո Լենինի մասին, իսկ յես ել հրավիրված եմ այդ յերեկոյին՝ վորպես մեկը զեկուցողներից։ Յես կարծում եմ, վոր Լենինի գործունեության մասին այստեղ կապակցված զեկուցումներկայացնելու կարիք չկա։ Ինձ թվում ե, վոր լավագույնը կը լիներ սահմանափակվել մի շաբթ այնպիսի փաստերի հագործությամբ, վորոնք նիշում են Լենինի մի քանի առանձնահատկությունները վորպես մարդ և վորպես գործիչ։ Այդ փաստերի մեջ կարող ե պատահել, վոր ներքին կազմինի, բայց դա չի խանդարի կազմելու Լենինի մասին մի ընդհանուր մտապատճեր։ Համեմայն զեպս, յես հնարավոր թյուն չունեմ վերև խոստացածիցս ավելին տալու ներկայումս։

### Լ Ե Ռ Ն Ե Բ Ի Ա Ր Ծ Ի Վ Ը

Առաջին անգամ յես Լենինի հետ ծանոթացա 1903 թվականին։ Ճիշտ ե, այդ ծանոթությունը վոչ թե անձնական եր, այլ հեռվից-հեռու, նամակադրությամբ, բայց նա թողել է ինձ վրա անջնջելի տպավորություն, վորը մնաց իմ մեջ իս ամբողջ կուսակցական աշխատանքների ընթացքում։ Յես այն ժամանակ աքսորված եյի Սիրիու իմ ծանոթությունը Լենինի հեղափոխական գործունեության հետ 90. ական թվականների վերջերքից և հատկապես 1901 թվականից հետո, յերբ սկսեց հրատարակվել «Իսկրան», ինձ այն համազմանը բերեց, վոր մենք հանձինս Լենինի ունենք մի արտաքո կարգի մարդ։ Նա իմ աշքում այն ժամանակ կուսակցության մի սոսկական զեկավար չեր։ Նա այդ կուսակցության փաստական ստեղ-

\*) Ճառ, արտասանված կրեմլ ուսանողների յերեկութիւն, 1924 թ. 28 հունվարի։

ծագործողն եր, վորովհետև միայն նա հասկացավ մեր  
կուսակցության ներքին եյությունն ու նրա անհետաձգելի  
կարիքները: Յերբ յես նրան համեմատում եյի մեր կու-  
սակցության մյուս ղեկավարների հետ, ինձ շարունակ  
թվում եր, թե Լենինի զինակիցները — Պլեխանովը, Մար-  
տովը, Ակսելրոդը և մյուսները — ամբողջ զլյույ ցած են  
կանգնած Լենինից, վոր վերջինս նրանց համեմատությամբ,  
վոչ թե սովորական, այլ վեհագույն տիպի մի ղեկավար  
ե, լեռների արծիվ, վոր պայքարի մեջ չդիտե ինչ ասել ե  
յերկյուղ և համարձակ տանում ե կուսակցությունն առաջ,  
Ռուսաստանի հեղափոխական շարժման անծանոթ ուղինե-  
րով: Այդ սպավորությունը այնպես խոր զրոշմվեց իմ  
հոգում, վոր յես անհրաժեշտություն զգացի զրել նրա  
մասին այն ժամանակ տարադրության մեջ գտնվող իմ մո-  
տիկ բարեկամներից մեկին, խնդրելով նրանից հայտնիլ  
եր կարծիքը: Քիչ ժամանակ անց, — դա 1903 թվականի  
վերջին եր, — յես ստացա մի խանդավառ պատասխան իմ  
բարեկամից և Լենինից մի հասարակ, բայց բովանդակա-  
լից նամակ: Ինչպես պարզվեց, բարեկամս Լենինին ծանո-  
թացրել եր իմ նամակի բովանդակությանը: Լենինի նա-  
մակը համեմատաբար փոքր եր, բայց նա համարձակ և  
անվախ կերպով քննադատում եր մեր կուսակցության  
պրակտիկան և տալիս զարմանալիորեն պարզ ու սեղմ  
ձեռվ կուսակցության մոտուկա աշխատանքի ծրագիրը:  
Միայն Լենինը կարող եր զրել ամենախրթին բաների մա-  
սին այնպես հասարակ և պարզ, սեղմ և համարձակ ձեռվ,  
վորի յուրաքանչյուր դարձվածքը վոչ թե խոսում, այլ  
ճայթում ե: Այդ հասարակ և համարձակ իմ մեջ  
ավելի ամբապնդեց այն համոզումը, վոր հանձինս Լենինի  
մենք ունենք մեր կուսակցության լեռների արծիվը: Յես  
ինձ ամենախին չեմ կարողանում ներել, վոր Լենինի այդ  
նամակը ուրիշ շատ նամակների պես մատնեցի կրակի,  
ինչպես անում եյին հին անլեզալ դործիչները: Այդ ժա-  
մանականից սկսվեց իմ ծանոթությունը Լենինի հետ:

## ՀԱՄԵՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ յես հանդիպեցի Լենինին 1905 թ.  
գեկտեմբերին, Տամմերֆորսում (Ֆինլանդիա) տեղի ունե-  
ցած բարձրիկների կոնֆերանսին: Յես հույս ունեյի տես-  
նել մեր կուսակցության լեռների արծվին, մեծ մար-  
դուն, մեծ վոչ միայն քաղաքականապես, այլ յեթե կու-  
ղեք, նաև ֆիզիքապես, վորովհետև Լենինը իմ յերեակա-  
յության մեջ պատկերանում եր վարպես վայելչակազմ և  
պարթե հասակով մի հսկա: Վորչափ մեծ յեղավ իմ հիաս-  
թափությունը, յերբ յես տեսա ամենասովորական մի  
մարդ, միջակից ցած հասակով, վոր վոչնչով, բառացիորեն  
վոչնչով չեր տարբերվում սովորական մահկանացուներից...

Ընդունված ըան ե, վոր «մեծ մարդ» սովորաբար,  
պետք ե տշանա ժողովից, վորպեսզի ժողովի անգամները  
որտարովի սպասեն նրա յերեալուն, խկ յերբ մեծ մարդն  
արդին յերեացել ե՝ ժողովի անգամները իմաց են անում.  
«Մո... հանգիստ... նա գալիս ե»: Այս ծիսակատարու-  
թյունն ինձ ավելորդ չեր թվում, վորովհետև նա ականա  
հարգանք ե տաճ բերում, պատկառանք ներշնչում: Բայց  
վորչափ մեծ յեղավ իմ հիասթափությունը, յերբ իմացա,  
վոր Լենինը ներկայացուցիչներից շուտ ե յեկել ժողովին և  
խցկած մի անկյուն, հասարակ ձեռվ զրույց ե անում,  
սովորական մի զրույց, կոնֆերանսի սովորական ներկա-  
յացուցիչների հետ: Չեմ թագցնում, վոր այդ հանգա-  
մանքն այն ժամանակ ինձ փոքր ինչ շեղաւած թվաց վորոշ  
անհրաժեշտ կանոններից:

Միայն հետագայում յես հասկացա, վոր Լենինի այդ  
պարզությունն ու համեստությունը, այդ աննկատելի մնա-  
լու կամ համենայն դեպս աչքի չընկնելու և իր բարձր  
դիրքը շցուցադրելու ձգտումը մի զիծ ե, վոր ցույց ե  
տալիս նոր մասաների նոր տառաջնորդի, մարդկության  
«ամենասորբին» խավերի տուաջնորդի — Լենինի ամենա-  
ուժեղ կողմերից մեկը:

## ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ

Այդ կոնֆերանսին Լենինի արտասահմած յերկու ձառները՝ ընթացիկ մոմենտի և հողային խնդրի մասին՝ հրաշալի ելին։ Նոքա դժբաղդաբար չեն պահվել։ Կրակոտ ճառեր ելին նոքա, վորոնք ամբողջ կոնֆերանսի բուռն հիացմունքը առաջ բերին։ Համոզմունքի արտասովոր ուժը, պատճառաբանության պարզությունն ու անկեղծությունը, կարծ և ամենքին հասկանալի գարձակածքները, ցուցանության, տպավորություն թողնող շշմեցուցիչ ժեստերի և եփփեկամփոր ֆրազների բացակայությունը — այս ամենը շահավետ կերպով տարբերում ելին Լենինի ճառերը սովորական «պարլամենտական» հոետորների ճառերից։

Բայց ինձ հմայել եր այն ժամանակ Լենինի ճառերի վոչ այդ կողմը։ Ինձ հմայել եր արաժարանության անխորտակելի ուժը նրա ճառերի մեջ, վորը թեպետ և մի քիչ չոր ու ցամաք, բայց և այդպես ամբողջովին իշխում և լուսանի վրա, աստիճանաբար ելեքտրականացնում և և ապա բոլորավին գերում նրան։ Յես հիշում եմ, թէ ինչպես այն ժամանեակ պատգամավորներից շատերն առում ելին։ «Տրամաբանությունը Լենինի ճառերում ամենանզոր շոշափուկների յե նման։ Վորոնք բոնում են քեզ բոլոր կողմերից ազգանահերի պես և վորոնցից ազատվելու նմար չկա։ Կամ անձնառու յեղիք, կամ կրիք լիտկատար պարտություն։»

Յես կարծում եմ, վոր Լենինի ճառերի այս տռամանակությունը նրա հոետորական արվեստի ամենաժամանակակից կողմն եր հանդիսանում։

## ՏՐԾՆՉԱԼ ԶԳԻՏԵՐ

Յերկրորդ անգամ յես հանդիպեցի Լենինին 1906 թվականին, մեր կուսակցության Ստոկհոլմի համագումարի ժամանակ։ Հայսնի յե, վոր այս համագումարում բոլցիկները փոքրամանության կազմեցին, պարտվեցին։ Յես այն ժամանակ տեսա Լենինին պարտվածի դերում։

Նա ամենաշնչին չափով իսկ չեր նմանում այն դեկավարներին, վորոնք արտնջում են, լրվում պարտվելուց հետո, ընդհակառակը, պարտությունը լենինին դարձրել եր խոտացած յեռանդ։ Նա քաջալերում եր իր կողմնակիցներին և մղում նրանց գեպի նոր պայքար, նոր հաղթանակներ։ Յես խոտում եմ Լենինի պարտության մասին։ Բայց ինչ պարտություն եր այդ Պետք եր տեսնել լենինին հաղթող հակառակորդներին Ստոկհոլմի համագումարում — Պետանօվին, Ակսելրոդին, Մարտովին և մյուսներին։ Նոքա իսկական հաղթողի շատ քիչ ելին նմանում, վորովհետեւ լենինը իր անողոք քննադատությամբ, ինչպես ասում են՝ նրանց վրա առողջ տեղ չեր թողել։ Յես հիշում եմ, թէ ինչպես մենք, բոլցիկի պատգամավորներս, մոլորված խմբել ելինք միասին, նայում ելինք լենինին և նրանից խորհուրդ հարցնում։ Պատգամավորներից մի քանիսի ճառերը հոգնածություն և հուսահատություն ելին արտահայտում։ Հիշում եմ, թէ ինչպես լենինը այդպիսի ճառերից հետո դառնությամբ մրմթնում եր. «Միք արտնջա, ընկերներ, մենք անշուշտ կընազթենք, վորովհետեւ հշմարտությունը մեր կողմն ե»։ Ատելություն գեպի հուսալիքությունը մատավրականները, վատահություն և հավատ գեպի սեփական ուժերն ու ապագա հաղթանակը, — ահա ինչի մասին եր խոտում այն ժամանակ մեղ հետ լենինը։ Զգում ելինք, վոր բոլցիկների պարտությունը ժամանակավոր ե, վոր նոքա պետք և հաղթանակեն մոտ ապագայում։

«Չարանջալ պարտություն կրելուց հետո», — սա լենինի գործունեության մեջ այն առանձնահատկությունն եր, վոր ողնում եր նրան խմբելու իր շուրջը զիսովին նվիրված և իր ուժերին վատահացող բանակ։

## ԶԵՐ ՀՊԱՐՏԱՆՈՒՄ

1907 թ. Լոնգոնում տեղի ունեցած հաջորդ համագումարին բոլցիկները հաղթող դուրս յեկան։ Յես առաջին անգամ տեսա լենինին հաղթանակողի դերում։ Սովո-

բարար հաղթությունը պատեցնում է ուրիշ զեկավարների գլուխը, գարձնում է նրանց գոռող և մեծամիտ։ Նման գեղքերում ամենից հաճախ սկսում են տոնել հաղթանակը, հանգչել դափնիների վրա։ Բայց Լենինն ամենափոքր չափով իսկ նման չեր այդպիսի զեկավարի։ Բնդհակառակը, հատկապես հաղթանակից հետո նա զառնում եր առանձնապես աչալուք և զգույշ։ Հիշում եմ, ինչպես այն ժամանակ Լենինը համառ կերպով ներշնչում եր պատգամավորներին՝ «առաջին գործը պետք է լինի չհափշտակվել հաղթանակով և չհպարտանալ, յերկրորդ գործը՝ առրապնդել հաղթանակը, յերրորդը՝ բոլորվին վոչչացնել հակառակորդին, վարովնեռու նա կարող է ջախջախված լինել բայց տակավին չվոչչացած»։ Նա կծու կերպով ծաղրում եր այն պատգամավորներին, վորոնք թեթևամտորեն հավատացնում եյին, թե «հիմիկվանից մենշեկիների բանը վերջացած է»։ Նրա համար դժվար չեր ազացուցել, վոր մենշեկիները տակավին արմատներ ունեն բանվորական շարժման մեջ, վոր նրանց հետ պետք է պայքարել գիտենալ, ամենուին չգերազնահատելով սեփական ուժերը և առանձնապես չթերազնահատելով հակառակորդինը։ «Չը հպարտանալ հաղթությամբ», — սա Լենինի բնավորության հենց այն առանձնահատկությունն եր, վոր ոգնում եր նրան լրջորեն չափելու հակառակորդի ուժերը և ապահովելու կուսակցությունը հնարավոր անակնկալիներից։

## ՍԿՐՈՒՆՔԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցության զեկավարները չեն կարող թանկ չը գնահատել սեփական կուսակցության մեծամասնության կարծիքը։ Մեծամասնությունը մի ուժ է, վորին չի կարող հաշվի չառնել զեկավարը։ Լենինը այդ նույնչափ եր հասկանում, վորչափ և ամեն մի այլ կուսակցական զեկավար։ Բայց Լենինը յերբեք մեծամասնության գերին չեր դառնում, մասնավոր, յերբ ոյզ մեծամասնու-

թյունն իր վատերի տակ չուներ ոկզբունքային հիմքեր։ Մեր կուսակցության պատմության մեջ յեղել են վայրկյաններ, յերբ մեծամասնության կարծիքը կամ կուսակցության բողեական շահերը ընդհարվում եյին պրոլետարիատի արմատական շահերի հետ։ Նման գեղքերում Լենինը առանց յերկար ու բարակ մատածելու, վճռականապես կանգնում եր սկզբունքայնության կողմը, ընդգեմ կուսակցության մեծամասնության։ Ավելին՝ նման դեպքերումնաշեր վախենում հանդես գալ մենամենակամենքի դեմ, հաշվի առնելով այն, — ինչպես նա այդ առում եր հաճախ, — վոր «սկզբունքային քաղաքականությունը ամենաշմարիտ քաղաքականությունն ե»։

Այդ առաջեցած առանձնապես բնորոշ են հետեւյալ յերկու փաստերը։

**ԱՌԱՋԻՆ ՓԱՍՏ. — 1909—1911 թվականների շրջանը,** յերբ կուսակցությունը պարտված հականեղափոխությունից, կատարյալ քայլքայման վիճակ եր ապրում։ Դա կուսակցության հանդեպ գոյսություն ունեցող անհավատության շրջանն եր, յերբ կուսակցությունից փախչում եյին վոչ միայն մտավորականները, այլ մասամբ նաև բանվորները, յերբ ժխտվում եր գաղտնի աշխատանքը, դա շրջանն եր լիկիդատորության և կազմալուծման։ Վոչ միայն մենշեկիները, այլ և բոլշևիկները ներկայացնում եյին այն ժամանակ ֆրակցիաների և հոսանքների մի ամբողջ շարան, վորոնցից մեծ մասը կտրված եր բանվորական շարժումից։ Հայտնի յե, վոր նենց այդ շրջանում միտք ծագեց միանգամայն վերացնելու գաղտնի աշխատանքը և կազմակերպելու բանվորներին լեզար, լիբերալ, ստոլբինյան կուսակցության շրջանակում։ Լենինը այդ ժամանակ միակն եր, վորը չենթարկվեց ընդհանուր հոսանքին և բարձր պահեց կուսակցականության զրոյք, հավաքելով կուսակցության ցրված և ջարդված ուժերը զարմանալի համբերությամբ և չտեսնված հառտատակամությամբ, կովելով բոլոր և ամեն ձեր հակառակական

հոսանքների գեմ բանվորական շարժման մեջ, պաշտպանելով կուսակցականությունը՝ անյերևակայելի արիությամբ և անհախընթաց համառությամբ:

Հայտնի յե, վոր կուսակցականության շուրջը տեղի ունեցող այս վիճաբանություններում լենինը վերջը հաղթող հանդիսացավ:

**ՅԵՐԿՐՈՐԴ ՓԱՍՏ.—1914—1917 թվականների արշանն իմակերիալիստական պատերազմի ամենայեռուն շըրշանն եր, յերբ բոլոր, կամ զրեթե բալոր սոցիալ-գետոկրատական և սոցիալիստական կուսակցությունները, յենթարկվելով ընդհանուր հայրենասիրական ուղարքի, նվիրվեցին իրենց հայրենական իմակերիալիզմի սովորագործության գործին. Դա այն շրջանն եր, յերբ ՈՒԽտերնացիոնալը իր զրոշակները խոնարհեց կապիտալի առաջ, յերբ շոմինիստական հորձանքին չդիմացան անգամ այնպիսի մարդիկ ինչպես եյխն Պլեխանովը, Կառուցկին, Ժյուլ Գեզը և մյուսները. Լենինն մշակն եր, կամ զրեթե միտկը այն ժամանակ, վոր վճռական պայքար սկսեց սոցիալ-շովոնդմի և սոցիալ-պացիֆիզմի դեմ, մերկացրեց Գեգերի և Կառուցկիների դավաճանությունը և խարանեց անմաքուր «հեղափոխականների» յերկերեսանիությունը. Լենինը հասկանում եր, վոր նրան հետևում է չնշին փոքրամասնություն, բայց դա նրա համար վճռական նըշանակություն չուներ, վորովհետեւ նա զիտեր, վոր միակ ապագա ունեցող ստույգ քաղաքականությունը հետևողական ինտերնացիոնալիզմի քաղաքականությունն ե, վորովհետեւ նա զիտեր, վոր սկզբունքային քաղաքականությունը ամենաշխատակ քաղաքականությունն ե:**

Հայտնի չե, վոր նոր Խնտերնացիոնալի շուրջն յիշած և այս բանավեճում լենինը հաղթող դուրս յեկավ:

«Մեղրունքային քաղաքականությունն ամենաշխատակ քաղաքականությունն ե», — սա այս ձեռկերպությունն ե, վորի ողնությամբ լենինը զրոհով վերցրեց նոր «անառիկ» զիրքերը, հեղափոխական մարքուդմի կողմը քաշելով պրոլետարիատի բավարույն տարրերին:

## ՀԱՎԱՏ ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Կուսակցությունների տեսաբաններն ու զեկավարները, վորոնք գիտեն ժողովուրդների պատմությունը, ուսանել են հեղափոխությունների պատմությունը սկզբից մինչև վերջ, յերբեմն տառապում են մի անվայելուչ հիվանդությամբ. Այդ հիվանդությունը մասսաների հանդեպ ունեցած յերկուցն ե, անհավատությունը զեպի մասսաների ստեղծագործական ընդունակությունները. Այս հողի վրա յերբեմն առաջ եր գալիս զեկավարների մեջ արիստոկրատականության պես մի բան այն մասսաների վերաբերմամբ, վորոնք հեղափոխությունների պատմության մեջ չեցին փորձվել, բայց կոչված եյին վոչնչացնել հինը և կառուցել նրա տեղ նորը. Այս յերկուցը, թե տարերքը կարող ե մոլեգնիլ, թե մասսաները կարող են «ջարդել շատ ավելորդ բաներ», ցանկությունը կատարելու այն մայրեկի դերը, վորը ձգտում է ուսուցանել մասսաներին գրքերով, բայց ինքը չի կամենում մասսաներից բան սովորել, — այսպիսին և այդ տեսակի արիստոկրատականության հիմունքը. Լենինը նման զեկավարների հակառակություն եր, Յես չգիտեմ մի այլ հեղափոխական, վոր այնքան խոր հավատար պրոլետարիատի ստեղծագործական ուժերին և նրա դաստիարակույն բնագգի հեղափոխական նպատակահարմարությունը՝ ինչպես լենինը. Յես չգիտեմ մի այլ հեղափոխական, վոր այնպիս խոր հավատար պրոլետարիատի ստույգ քառության քառության և ստառաների անխմանական գործադրությունների վակիսանալիսի ինքնագուն քննադատներին, ինչպես լենինը. Նիշում եմ, թե ինչպես մի զրույցի ժամանակ ի պատասխան ընկերներից մեկի նկատողության թե՛ հեղափոխությունից հետո պետք ե ընականն կարգ սահմանվի, լենինը հեղանքով պատասխանեց՝ «գրբաղդությունն ե, յերբ հեղափոխական լինել ցանկացող մարդիկ մոռացաւթյան են տալիս, վոր պատմության մեջ ա-

մենաբնականոն կարդը — դա հեղափոխության կարգն են:  
Սրանից եր բղխում լենինի արհամարհական վիրաբեր-  
մունքը դեպի այն մարդիկ, վարսնք ձգտում եյն վերեից  
նայել մասսաների վրա և սովորեցնել նրանց գրքերով:  
Սրանից եր բղխում լենինի անխոնջ քարոզը՝ սովո-  
րել մասսաներից, հասկանալ նրանց գործողությունների  
նշանակությունը և խնամքով ուսումնասիրել մասսաների  
պայքարի գործնական փորձը:

Հավատը դեպի մասսաների ստեղծագործական ուժե-  
րը — դա այն առանձնատկությունն եր լենինի գործու-  
նեության մեջ, վորը հնարավորություն եր տալիս նրան  
հասկանալու տարերքի նշանակությունը և ուղղելու նրա  
շարժումը դեպի հեղափոխության նունը:

### ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁԱՐԸ

Լենինը ծնվել եր հեղափոխության համար:

Եա հեղափոխական բոնկումների խոկական հանճարն  
եր և մեծագույն վարպետը հեղափոխական դեկավարու-  
թյան: Վոչ մի անգամ նա իրեն այնպես ազատ և ու-  
րախ չեր զգացել, ինչպես հեղափոխական ցնցումների  
շրջանում: Յես օրանով ամենին չեմ ուզում առել, թե  
լենինը հավասարապես քաջալերում եր ամ/ն տեսակի  
հեղափոխական ցնցումները կամ թե նա մշտապես և ա-  
մեն պարագայում հեղափոխական բանկումների կողման-  
կից եր: Ամենին: Սրանով յես միայն կամենում եմ ա-  
ռել, թե վոչ մի անգամ լենինի հանճարեղ հայեցազու-  
թյունը այնպես կատարյալ և վորոշակի ձեռվ չեր զրսե-  
վորվում, ինչպես այդ աեղի յեր ունենում հեղափոխա-  
կան բոնկումների ժամանակ: Հեղափոխական իրավար-  
ձությունների որերին նա բառացիորեն փթթում եր, զառ-  
նում եր սրատես, նախագուշակում եր դասակարգերի  
շարժումները և հեղափոխության հավանական զիգ-  
զագները, կարծես իր բոլ մեջ տեսնելով այդ ամենը:  
Իզուր չեն առում մեր կուսակցական շնչաններում, թե

«Լենինը կարողանում եր լողալ հեղափոխության  
հորձանքներում, ինչպես ձուկը ջրում»:

Այսաեղից ե բղխում լենինի տակտիկական լողանզ-  
ների «ապշեցուցիչ» պարզությունը և հեղափոխական  
գիտավորությունների համարձակությունը:

Հիշում եմ հատկապես յերկու բնորոշ փաստեր, վո-  
րոնք նիշում են լենինի այդ առանձնահատկությունը:

ԱՌԱՋԻՆ ՓԱՍՏ. — Հոկտեմբերյան հեղափոխության նա-  
խաչըշանում, յերբ միլիոնափոր բանվորները, զյուղացի-  
ները և զինվորները ստեղծված ձկնաժամի ազգեցության  
տակ, թե թիկունքում և թե ճակատում պահանջում եյն  
խաղաղություն և ազտառություն. յերբ գեներալիտեալը և  
բուրժվագիան զինվորական զիկտատուրա եյն նախա-  
պատրաստում «պատերազմը մինչև վերջ» վարելու հա-  
մար. յերբ ամբողջ այսպես կոչված հասարակական կար-  
ծիքը, բոլոր այսպես կոչված սոցիալիստական կուսակ-  
ցությունները կանոնած եյն բոլշևիկների զեմ, անվանե-  
լով նրանց գերմանական լրտեսներ. յերբ կերենսկին հար-  
կադրում եր անցնելու նկողային գործունեության և  
մասամբ հաջողել եր այդպես անել ստիպելու բոլշևիկտ-  
կան կուսակցության, յերբ տակավին ավտորշ-գերմանա-  
կան կողիցիայի հզոր և կարգապահ բանակները կանո-  
նած եյն մեր հովնած և կազմալուծված բանակների զեմ,  
իսկ Արևմտյան Յելլուպայի «սոցիալիստները» շարունա-  
կում եյն միացյալ գործունեություն առնել կառավա-  
րությունների հետ հանուն «պատերազմի մինչև նրա կա-  
տարյալ հաղթանակը»...

Ի՞նչ կնշանակեր այդ վայրկյանին ապստամբություն  
բարձրացնել: Այդպիսի հանգամանքներում ապստամբու-  
թյուն բարձրացնել կընշանակեր ամեն ինչ թղթախաղի մեջ  
զներ: Բայց լենինը չեր վախենաւ ոիսկ անել, վորտիւ-  
տի նա զիտեր, անեսել եր իր օրատես հայացքով, վար  
ապստամբությունը անխուսափելի յէ, վար ապստամբու-  
թյունը կհաղթանակի, վոր ապստամբությունը մաւա-

տանում կընախապատրաստի իմպերիալիստական պատերազմի վախճանը, կըցնցի Արեմուտքի տաճգված մասսաներին, կըփոխի իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի, վոր ապստամբությունը կըտախորհուրդների հանրապետությունը կըդառնա ամբողջ աշխարհի նեղափոխական շարժման պատվարը:

Հայոնի յե, վոր Լենինի այս հեղափոխական նախատեսությունը հետագայում իրականություն դարձավ չըտեսնված ճշությամբ:

✗ ՅԵՐԿՐՈՐԴ ՓԱՍՏ. - Առաջին որերը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ Փողովրդական Կոմիսարների Խորհուրդը փորձում էր ստիպել ապստամբ գլխավոր հրամանատարին, գեներալ Դուխոնինին, գագարեցնել ուղական գործողություններն ու սկսել գերմանացիների հետ խաղաղության բանակցությունները: Հիշում եմ, թե ինչպես Լենինը, Կրիլենկոն (ապագա գլխավոր հրամանատարը) և յես ուղևորվեցինք Պետրովրադ—Գլխավոր շտաբը Դուխոնինի հետ բանակցություններ վարելու համար: Բոպեն յերկյուղալի յեր: Դուխոնինը և Գլխավոր կայանը վճռականապես հրաժարվում եյին կատարել Փողկոմխորհի հրամանը: Բոնակի հրամանատարական կազմը գանձում էր ամբողջապես Գլխավոր կայանի ձեռքում: Ինչ վերաբերում է զինվորներին՝ մեզ համար անհայտ եր, թե ինչ կասի 12 միլիոնանոց բանակը, վոր հպատակում էր այսպիսի կոչված զուգագած կազմակերպություններին, վորոնք Խորհրդային Խիստության հակառակ եյին արամազրված: Հենց իր՝ Պետրովրադի մեջ, ինչպես հայոնի յե, հասունանում էր այդ ժամանակ յունկերների ապստամբությունը: Բացի դրանից, Կերենսկին շաբթվում էր Պետրովրադի վրա: Հիշում եմ, թե ինչպես կարճ պատվայից հետո, հետախոսի մոտ, Լենինի գեմքը հանկարծ պայծառացավ մի ինչ-վոր արտասովոր փայլով: Պարզ եր, վոր նա արդեն վորոշում կայացրել եւ: «Գնանք բաղիո-կայան,

—ասաց Լենինը, —նա մեզ կոգնի. մենք մի հատուկ հրամանով կընեռացնենք գեներալ Դուխոնինին, կընշանակենք նրա աեղը գլխավոր հրամանատարը ընկեր Կրիլենկոյին և հրամանատարական կազմի գլխավոր կըդիմենք զինվորներին՝ կոչ անելով ձերբակալել գեներալներին, դադարեցնել սազմական գործողությունները, միանալ ավատրութերմանական զինվորների հետ և սեփական ձեռքերի մեջ անել հաշտության գործը:

Սա մի թոփչը եր գեպի անհայտություն: Բայց Լենինը չեր վախենում այդ «թոփչից», ընդհակառակը, նուրան ընդառաջ եր գնում, վորովհեակ գիտեր, վոր բանակը խաղաղություն և կամենում և նա այդ խաղաղությունը ձեռք կըբերի վոչնչացնելով խաղաղության ճանապարհին ընկած բոլոր խոչընդուները, վորովհեակ նա գիտեր, վոր խաղաղության հաստատման այդպիսի յեղանակը ի զար չի անցնի ավատրութերմանական զինվորների համար, վոր նա բոլոր ճակատներում, առանց բացառության, դարկ կը տա խաղաղության ձգտումներին:

Հայոնի յե, վոր Լենինի այս հեղափոխական նախատեսությունն ես իրականացավ հետագայում լիակատար ճշությամբ:

Հանձարեղ հայեցողությունը, մոտեցաղ գեպերի ներքին իմաստն արագ ըմբռնելու և զուշակելու ընդունակությունը Լենինի այն հատկություններն եյին, վորոնք ոգնում եյին նրան զծելու ձիշտ սարատեզիա և վորոշ վարքագիծ հեղափոխական շարժման իրադարձությունների ըջանում:

Մարտ  
Հունի 1917  
Տարբերակ  
Դարձում

## ԼԵՆԻՆԻՑՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դասախոսություններ, կարգացված Ավերպոլի համալսարանում:

## ԼԵՆԻՆԻՑՄԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լենինիզմի հիմունքները՝ զա մեծ նյութ ե, զորք սպառելու համար անհրաժեշտ ե մի ամբողջ գիրք։ Ավելի ճիշտը՝ զրքերի մի ամբողջ շարան։ Ռևոլ ընական ե, վոր իմ՝ դասախոսությունները չեն կարող լինել լենինիզմի վերջնական մեկնությունը։ Լավագույն զեպքում նոքա կարող են լինել սասկ լենինիզմի հիմունքների սեղմ համառաջընթացներ։ Այսուամենայնիվ յես ոգաակար եմ համարում մեկնել այդ համառաջընթացներ, նողաաակ ունենալով մի քանի անհրաժեշտ հիմնական յելակետներ տալ լենինիզմը հաջող կերպով ուսումնասիրելու համար։

1499 | Մեկնել լենինիզմի հիմունքները՝ զա տակավին չի նշանակում մեկնել լենինի աշխարհահայացքի հիմունքները։ Լենինի աշխարհահայացքը և լենինիզմի հիմունքները՝ դաքա իրենց ծավալով միենույն բանները չեն։ Լենինը մարքուսա ե և նրա աշխարհահայացքի հիմունքն ել իհարկե մարքսիզմն ե։ Սակայն սրանից ամենին չի կարելի յեղբացներ, թե լենինիզմի մեկնությունն ել պետք ե ոկովի մարքսիզմի հիմունքների մեկնությունից։ Մեկնել լենինիզմը այդ նշանակում ե մեկնել լենինի աշխատասիրությունների մեջ այն առանձնահատուկը և նորը, վոր մուծել ե լենինը մարքսիզմի ընդհանուր կանձարանը և ընականորեն կապված ե նրա անվան հետ։ Լենինիզմի հիմունքների մասին իմ՝ դասախոսությունների մեջ յես այս ուղղությամբ ել պետք ե խոսեմ։

Այժմ ինչ բան ե լենինիզմը:

Վորանք առում են, թե լենինիզմը մարքսիզմի գործադրությունն է Ռուսաստանի առանձնահատուկ պայմաններում: Այս բացարության մեջ կա ճշմարտության վորոշ բաժին, սակայն նա չի սպառում ամբողջ ճշմարտությունը: Լենինը իրոք գործադրել է մարքսիզմը Ռուսաստանի իրականության մեջ և գործադրել է չափազանց վարպետորեն: Սակայն յեթե լենինիզմը լիներ սոսկ մարքսիզմի գործադրությունը Ռուսաստանի առանձանատուկ պայմաններում, այդ գեղքում նա կը լիներ զուտ ազգային և միայն ազգային, զուտ սուսական և միայն սուսական յերեւյթ: Մինչդեռ մենք գիտենք, վոր լենինիզմը ինտերնացիոնալիստական, միջազգային յերեւյթ է, չե թե միայն սուսական: Ահա թե ինչու յես համարում եմ այդ բացարությունը միակողմանի:

Որիշներն ել առում են, վոր լենինիզմը մարքսիզմի XIX-րդ դարի 40-ական թվականների հեղափոխական առքերի վերածնությունն ե, տարբերելով այդ ժամանակա մարքսիզմը հետագա տարբիների մարքսիզմից, յերբ նա երբ թե գարձել եր չափավոր և վոչ հեղափոխական: Յեթե մի կողմ զնելու լինենք Մարքսի ուսմունքի այս ախտար և գուեհիկ բաժանումը հեղափոխական և չափավոր մարքսիզմների, ապա պետք ե խստավանենք, վոր մինչև իսկ այս միանդամայն անբավարար և պակասավոր բացարության մեջ կա ճշմարտության վորոշ բաժին: Ճշմարտության այդ բաժինը կայանում է նրանում, վոր լենինը իրոք վերականգնել է մարքսիզմի հեղափոխական բովանդակությունը, վոր պարագակել է ինը և ինտերնացիոնալիստական բաժինը լենինիզմի առանձնահատուկ պատճենները: Բայց դա ճշմարտության միայն մի մասն է: Ամբողջ ճշմարտությունը լենինիզմի մասին կայանում է նրանում, վոր լենինիզմը վոչ միայն վերականգնել է մարքսիզմը, այլ և մի քայլ ել զեռ առաջ ե անցնել, շարունակելով գարգացնել մարքսիզմը կապիտալիզմի և պրոլետարատի պատճենական պայքարի նոր պայքարներում:

Վերջապես ինչ բան ե լենինիզմը:

Լենինիզմը ի մպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի մարքսիզմն է: Ավելի ճիշտ՝ լենինիզմը — դա ընդհանրապես պրոլետարական հեղափոխության և ուսումնական ձևամանակաշրջանում (մենք նկատի ունենք այսուեղ պրոլետարական հեղափոխությունը), այն ժամանակի, յերբ տակամին զարգացած չեր իմպերիալիզմը, յերբ պրոլետարիատը նախաղաղարաստավորությունը եր հեղափոխության և յերբ պրոլետարական հեղափոխությունը դեռ ևս ուղղակի գործնական անհրաժեշտաւթյուն չեր սեպգում: Իսկ լենինը, Մարքսի և Ենդեկտի աշակերտը, գործում եր զարգացած իմպերիալիզմի, ծափալվազ պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունը արդեն հազթանակել եր մի յերկրում, չափշախել բուրժուական գեմակրատիան և բաց արել պրոլետարական դեմոկրատիայի գարագլուխը, խորհուրդների գարագլուխը:

Ահա ինչու լենինիզմը հանդիսանում է մարքսիզմի հետագա զարգացումը:

Մատնանշում են սովորաբար լենինիզմի բացառիկ ուղղմական և բացառիկ հեղափոխական բնույթը: Դա միանդամայն ճիշտ է: Բայց լենինիզմի այդ առանձնահատկությունը բացարկում է հետեւյալ յերկու պատճեններով, նախ՝ նրանով, վոր լենինիզմը զարդ է յեկել պրոլետարական հեղափոխությունից, վորի թուղթ հետքը նույնի կարող իր վրա չկրել, ապա նրանով, վոր նա աճել է և ամրացել և ինտերնացիոնալի սովորայունիզմի հետ ոնեշցած գոտեմարտում, պայքարը վորի զեմ յեղել է և և կոպիտալիզմի հետ մղվող կափի հաջողության անհրաժեշտ նախաղայմանը: Զօրեար և մասնակ, վոր մի կողմից Մարքսի և Ենդեկտի, իսկ մյուս կողմից լենինի միջն ընկած է

Ա Խստերնացիոնալի ոպորտյունիզմի ինքնագլուխ տիրապետության մի ամբողջ շերտ, անողոք պայքարը վորի դեմ չեր կարող չկազմել լենինիզմի կարևորագույն ինդիւներից մեկը:

Կառավարություն  
ՀՅԴ 1925 Տ. 1

### I. ԼԵՆԻՆԻՑՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ.

Լենինիզմը աճել է և կերպարանավորվել իմպերիալիզմի պայմաններում, յերբ կապիտալիզմի ներհակությունները հասել եյին ծայրահեղ կետի, յերբ պրոլետարական հեղափոխությունը դարձել եր անմիջական գործունեության խնդիր, յերբ բանվոր դասակարգի հեղափոխության հին շրջանը դարգացել եր և դարձել կապիտալիզմի դեմ ուղղակիորեն պրոներու մի նոր շրջան:

Լենինը իմպերիալիզմը «մեռնող կապիտալիզմ» եր անվանում: Ինչու Վորովինեակ իմպերիալիզմը կապիտալիզմի ներհակությունները հասցնում ե իրենց վախճանական կետին, իրենց ծայրահեղ սահմաններին, վորից դենը սկսվում ե հեղափոխությունը: Այս ներհակություններից յերեքը պետք ե համարել ամենից կարևորը:

ԱՌԱՋԻՆ ՆԵՐՀԱԿՈՒԹՅՈՒՆ. — Սա կապիտալի և աշխատանքի մեջ գոյություն ունեցող ներհակությունն է: Իմպերիալիզմը՝ արգյունաբերական յերկրներում գոյություն ունեցող մոնոպոլիստական արեսաների և սինդիկատների, բանկերի և ֆինանսական ոլիգոպրեսիայի ամենազոր լինելը կընշանակե: Այս ամենազոր ույժի դեմ բանվոր դասակարգի կողմից գործադրվող կովի սովորական յեղանակները — արհեստակցական միություններն ու կոոպերատիվները, պարլամենտական կուսակցություններն ու պարլամենտական պայքարը — միանգամայն անբավարար գուրս յեկան: Կամ քեզ հանձնիր կապիտալի գողորմածության, սասիր առաջգա նման և ընկղթմիլը

ցած կամ թե գիմիր նոր զենքիս Այսպես և հարցը դրնում խմբերի լիքմբ պրոլետարիատի միլիոնավոր մասսաների առաջ իմպերիալիզմը մատեցնում է բանվոր դասակարգին հեղափոխության:

**ՅԵՐԿՐՈՐԴԻ ՆԵՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ.** — Սա զանազան ֆինանսական խմբակցությունների և իմպերիալիստական ոլետությունների մեջ տեղի ունեցող պայքարի ստեղծում ներհակությունն եւ նում նյութերի ազգյառաներ և սուար հողամասեր գրավելու համար իմպերիալիզմը — գակապիտայի արտածումն և գեպի հում նյութերի ազգյառաները, կատաղի պայքարը այդ պղբյալներին միահեծան իշխելու, պայքարը մի անգամ արդեն բաժանված աշխարհը վերաբաժանելու համար, պայքարը, վոր մղվում և կատաղաբար նոր ֆինանսական խմբակցությունների և ոլետությունների կողմից «արեգակի տակ» տեղ ունենալու համար, ընդդեմ հին խմբակցությունների և պետությունների, վորոնք ամուր պահում են իրենց հափշտակածք: Այս կատաղի պայքարը, վոր տեղի ունի կապիտալիստների զանազան խմբակցությունների մեջ, նշանակալից և այն աւասակեաից, վոր նա վորպես անխոսափելի տարր իր մեջ կրում և իմպերիալիստական պատերազմները, պատերազմներ՝ գրավելու համար ուրիշների տերրիտորիաները: Այս հանգամանքն ել իր հերթին նշանակալից և այն տեսակեաից, վոր նա փոխադարձաբար թուլացնում է իմպերիալիստներին, թուլացնում և ընդհանրապես կապիտալիզմի գիրքերը, մատեցնում և պրոլետարական հեղափոխության վայրկյանը և տանում գեպի այդ հեղափոխության գործնական անհրաժեշտությունը:

**ՅԵՐԿՐՈՐԴԻ ՆԵՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ.** — Սա «քաղաքակրթագում» մի բուռը տիրապետող ազգերի և աշխարհիս հարյուրափոք միլիոն գաղութային և հպատակ ժողովուրդների մեջ զայտթյուն ունեցող ներհակությունն է: Իմպերիալիզմը — գա ամենալիտի շահագործումն է, ամենատրմարդի կեղեքումը լայնածավալ գաղութների և հպատակ

յերկրների բազմամիլիոն ազգաբնակության: Քամել վերջին հյութերը — ահա այդ շահագործման, այդ բանության նպատակը: Բայց շահագործելով հանդերձ այդ յերկրներին, իմպերիալիզմը հարկադրված է շինել նույն տեղերում յերկաթուղագծեր, իմնել Փարբիկաներ և գործարաններ, արդյունաբերական և տնտերական կենտրոններ: Պրոլետարական դասակարգի և տեղական մտավորականության հրապարակ գալլ, ազգային ինքնազիտակցության արթնացումն ու ազտագրական շարժման ուժեղացումը — սոքայն այդ «քաղաքականության» անխոսափելի հետեանքները: Հեղափոխական շարժման ուժեղացումը բոլոր զաղութներում և հպատակ յերկրներում, տանց բացառաթյան, ակների կերպով այդ և վկայում: Այդ հանգամանքը պըստատարիատի համար կարեար և այն տեսակեաից, վոր նա հիմնովին քայքայում և կապիտալիզմի գիրքերը՝ իմպերիալիզմին սեղերվ ծառայող զաղութները և հպատակ յերկրները պրոլետարական հեղափոխության սեղերվ գարձնելով:

Սոքայն ընդհանրապես իմպերիալիզմի զիստափը ներհակությունները, վորոնք հին «ծաղկյալ» կապիտալիզմը գարձնում են մահացող կապիտալիզմ:

Մրանից 10 տարի առաջ տեղի ունեցած իմպերիալիստական պատերազմի նշանակությունն ի միջի այսոց նրա մեջ և կայանում, վոր նա անփոփեց այս բոլոր ներհակությունները մի հանգույցի մեջ ու ձգեց կշոր նրաը, այդպիսով արագացնելով և հեշտացնելով պրոլետարիատի հեղափոխական կոիվը:

Այլ կերպ ասած, իմպերիալիզմը վոչ միայն գործնական անխոսափելիություն գարձրեց հեղափոխությունը, այլ և առեղծեց նպատառավոր պայմաններ կապիտալիզմի ամրություններն անմիջական գրոնի յենթարկելու համար:

Սոքայն այն միջազգային պայմանները, վորոնք առեղծեցին լինիսիզմը:

Այդ ամենը շատ լավ, կարող են ասել մեզ, ինչ գործ ունի սակայն այստեղ Ռուսաստանը, վորը չե վոր չի յեղել և չերել կարող լինել իմպերիալիզմի կլասիքական յերկիր. ինչ գործ ունի այստեղ լինինը, վորը աշխատել և ամենից առաջ Ռուսաստանում և Ռուսաստանի համար ինչու յե հատկապես Ռուսաստանը գարձել լինինիզմի ոջախը, պրոլետարական հեղափոխության տեսության և տակտիկայի ծննդավայրը:

Վորովինեակ Ռուսաստանն է յեղել իմպերիալիզմի այդ բոլորներհակությունների հանգույցավայրը:

Վորովինեակ Ռուսաստանն եր միայն, վոր հզի յե յեղել հեղափոխությամբ ավելի, քան վոր և ալ յերկիր և այդ պատճառով միայն նա ի վիճակի յեր լուծելու այս ներհակությունները հեղափոխական ձանապարհով:

Սկսել նրանից, վոր ցարական Ռուսաստանը ոջախն եր ամեն տեսակի հարստահարությունների —և կապիտալիստական, և գաղութային, և զինվորական, —իրենց ամենամարդի և բարբարոսական յեղանակներով վերցրած:

Ում հայտնի չե, վոր Ռուսաստանում ամենազոր կապիտալիզմը ձուլված եր ցարական բանապետության հետ, ուստական նացիոնալիզմի ազրեսիվությունը՝ ցարիզմի դահճության հետ, հանգեպ վոչ ուստ ժողովուրդների ամբողջ շրջանների —Տաճկաստանի, Պարսկաստանի, Զինաստանի —կեղեքումը ցարիզմի ձեռքով այս շրջանների հափշտակության և նվաճողական պատերազմների հետ. Լենինը լրավացի յեր ասելով, թե ցարիզմը ռուպմաֆեոզական իմպերիալիզմն եւ: Ցարիզմը իմպերիալիզմի ամենաբացասական կողմերի լինարոնացումն եր իր վրա բազմապատկած:

Հետո: Ցարական Ռուսաստանը արևմտյան իմպերիալիզմի մեծագույն ռեզերվը եր վոչ միայն այն մտքով, վոր նա ազատ մտաք եր տալիս արտասահմանյան կապիտալին, վորը պահում եր իր ձեռքում Ռուսաստանի ժողովրդական անտեսության այնպիսի վճռողական ճյու-

ղեր, ինչպես վառելանյութի և մետաղազործության ճյուղերն եյին, այլ և այն մտքով, վոր նա կարողանում եր հոգուա արևմտյան իմպերիալիստների զինվորներ տրամադրել, Հիշեցեք 12 միլյոնանոց ուսւական բանակը, վոր թափեց իր արյունը իմպերիալիստական պատերազմի ամկատներում, անգլո-ֆրանսական կապիտալիստների կատաղի շահերը ապահովելու համար:

Ցարիզմը վոչ միայն իմպերիալիզմի պահապան զամփըն եր Յեփրոպայի արևելքում, այլ և հանգիստնում եր արևմտյան իմպերիալիզմի ազենտուրան, ազգայնակությունից կորդելու համար Փարիզում, Լոնդոնում, Բերլինում և Բրյուսելում նրան արված փոխառությունների հարյուրավոր միլյոն տոկոսները:

Վերջապես ցարիզմը արևմտյան իմպերիալիզմի ամենահավատարիմ դաշնակիցն եր բաժանելու համար Տաճկաստանը, Պարսկաստանը, Զինաստանը և այն: Ում հայտնի չե, վոր ցարիզմը իմպերիալիստական պատերազմը վարում եր միացած Անտանտայի իմպերիալիստներին, վոր Ռուսաստանը այդ պատերազմի եյտական տարրն եր կազմում:

Ահա ինչու ցարիզմի և արևմտյան իմպերիալիզմի շահերը հյուսվեցին իրար հետ և վերջ ի վերջո ձուլվեցին ու գարձան իմպերիալիզմի միասնական շահերի մի կծիկ: Կարող եր արևմտյան իմպերիալիզմը հաշտվել այնպիսի հզոր նեցուկի, ուժերի և միջոցների այնպիսի հարուստ շտեմարանի կորսայան հետ, վորպիսին հին, ցարական, բուրժուական Ռուսաստանն եր, չփորձելով իր բովանդակ ուժերը մահացու կոիվ սկսելու Ռուսաստանի հեղափոխության զիմ ցարիզմի պաշտպանության և պահպանության համար: Իհարկե չեր կարող:

Բայց գտ նշանակում ե, վոր ով կամենում եր հարվածել ցարիզմը, նա անխուսափելիորեն պետք և ձեռք բարձրացներ նաև իմպերիալիզմի վրա, ով ապատամբում եր ցարիզմի դեմ նա պետք և ապատամբեր նաև իմպերիալիզմի

դեմ, վորովհետեւ ով առ պալել եր ցարիզմը՝ նա պետք է տա պալեր նաև իմպերիալիզմը. յեթե նա իսկապես մտածում եր փոչ միայն շախչախել ցարիզմը, այլ և վոչնչացնել նրան, չթողնելով նրանցից և փոչ մի հետք: Հեղափոխությունը ցարիզմի գեմայսպիսով մտածում եր և պետք է զարգանար ու գտնար հեղափոխություն բնդդեմ իմպերիալիզմի, գտնար պրոլետարական հեղափոխություն:

Մուսասատանում բարձրացել եր մեծագույն ժողովրդական հեղափոխությունը, վորին պլուխ եր կանգնած աշխարհիս ամենահեղափոխական պրոլետարիատը, ունենալով իր արամազրության տակ այնպիսի լուրջ գաշնակից, վորպիսին Մուսասատանի հեղափոխական պյուղիությունն եր:

Կարիք կա ապացուցելու, վոր նման հեղափոխությունը չեր կարող կանգ առնել կիսաճամբին, վոր նո հաջողության դեպքում պետք է անցներ ավելի հեռուն, ապասամբության դրոշ պարզելով իմպերիալիզմի դիմ:

Ահա թե ինչու Մուսասատանը պետք է գտնար իմպերիալիզմի ներհակությունների չափույցը փոչ միայն այն պատճառով, վոր այդ ներհակությունները հատկապես Մուսասատանում ավելի հեշտությամբ հայտնաբերվեցին, շնորհիվ նրանց առանձնապես այլանդակ և անհանդուրժելի բնափորության, և փոչ միայն այն պատճառով, վոր Մուսասատանը արևմտյան իմպերիալիզմի չարկորագույն նեցուկն եր հանդիսանում, միացնելով Սրբմուտքի Փինանսական կապիտալը Արևելքի գաղութների հետ, այլ և այն պատճառով, վոր միայն Մուսասատանում գոյություն ուներ այն ուեալ ույժը, վորը կարող եր լուծել իմպերիալիզմի ներհակությունները հեղափոխական ճանապարհով:

Բայց դա նշանակում է, վոր հեղափոխությունը Մուսասատանում չեր կարող չգտնալ պրոլետարական, վոր նա իր զարգացման առաջին իսկ որերից չեր կարող չընդունել միջազգային բնույթ, վոր նա չեր կարող այդպի-

ով չցնցել համաշխարհային իմպերիալիզմի խկական հիմունքները:

Կարող եյին ուսու կոմունիստները իրերի այս վիճակում սահմանափակվել իրենց աշխատանքների մեջ ուսուական հեղտոփոխության նեղագային շրջանակներով: Ի հարկե, վոչ: Էնդհամառակը, թե ներքին (հեղափոխական ծանր ճգնաժամքը) և թե արտաքին (պատերազմը) բոլոր հանգամանքները ստիպում եյին նրանց իրենց աշխատանքների այդ շրջանակից դուրս դար պայքարը տեղափոխել միջազգային ասպարեզ, բաց անել իմպերիալիզմի խոցերը, ապացուցել կապիտալիզմի անխուսափելի կրախը, ջարդ ու փշուր անել սոցիալ-շովինիզմը և սոցիալ-պացիֆիզմը, վերջապես տապալել սեփական յերկրում կապիտալիզմը և կաել պրոլետարիատի համար պայքարի նոր զենք՝ պրոլետարական հեղափոխության ուսությունն ու տակտիկան, թեթևացնելու նպատակով բոլոր յերկրների պրոլետարիատի համար կապիտալիզմը իսրաւելու գործը: Մուսասատանի կոմունիստները այլ կերպ չեյին կարող վարվել վորովհետեւ միայն այս ճանապարհով կարելի յեր վորոշ փոփոխություններ առաջ բերել տիրող միջազգային պայմաններում, վորոնք կարողանային ապահովել Մուսասատանը բուրժվական կարգերի վերահաստատումից (բեստավրացիայից):

Ահա ինչու Մուսասատանը դարձավ լենինիզմի ոջախը, խել Մուսասատանի կոմունիստների առաջնորդ լենինը՝ նրա ստեղծագործողը:

Մուսասատանի և լենինի հետ այստեղ «պատահեց» մուսափորապես նոյն բանը, ինչ վոր Գերմանիայի և Մարքս-Ենգելսի հետ պատճենել եր անցած դարի քառասունական թվականներին: Գերմանիան այդ ժամանակ, ինչպես և Մուսասատանը ՀՀ դարի սկզբում, հղի եր բուրժվական հեղափոխությամբ: Մարքսը այդ ժամանակ և կոմունիստական Մանիֆեստումը գրում եր:

«Կոմունիստները իրենց պիտագոր ուշադրությունը

դարձնում են Գերմանիայի վրա այն պատճառով, վոր նոտիժում և բուրժվական հեղափոխության նախորյակին, վոր նոտ այդ հեղաշրջումը կիրադործի յելքովական քաղաքակրթության ավելի պրոգրեսիվ պայմաններում և ավելի զարգացած պրոլետարիատի հետ, քան այդ տեղի ունեցավ Անգլիայում ԽVII-րդ և Ֆրանսիայում ԽVIII-րդ դարերում։ Հետեւապես գերմանական բուրժվական հեղափոխությունը կարող է լինել միայն պրոլետարական հեղափոխության անմիջական նախերդանքը»։

Այլ կերպ ասած, հեղափոխական շարժման կենտրոնը տեղափոխվել եր Գերմանիա։

Անշուշտ, հենց այդ հանգամանքը, վորի վրա մատնանշում և Մարքսը մեր վերոհիշյալ մեջ՝ գարձել և հավանական պատճառը, վորպեսզի հատկապես Գերմանիան համարվի գիտական սոցիալիզմի հայրենիքը, իսկ գերմանական պրոլետարիատի առաջնորդներ Մարքսի և Ենգելսը—նրա ստեղծագործողները։

Նույնը պետք է ասել, բայց ավելի մեծ չափով, ՀՀ-րդ դարի սկզբի Ռուսաստանի համար։ Ռուսաստանը այս ժամանակաշրջանում գտնվում եր բուրժվական հեղափոխության նախորյակին։ Նա պետք է կատարեր այդ հեղափոխությունը Յեվրոպայում տիրող տիերի պրոգրեսիվ պայմաններում և ավելի զարգացած պրոլետարիատի հետ, քան Գերմանիան (չխոսելով դեռ Անգլիայի և Ֆրանսիայի մասին)։ Բոլոր տվյալներն առում եյին, վոր Ռուսաստանի այս հեղափոխությունը պետք է ծառայի պրոլետարական հեղափոխության թիմսորը և նախերդանքը։ Պատահականության արդյունք չի կարելի համարել այն փաստը, վոր Լենինը դեռ ևս 1902 թվին, յերբ ուսական հեղափոխությունը տակալիքն նոր եր սկսվում, իր ռենչ անելք բրոշյուրի մեջ հետեւյալ ծանրակշիռ տուղերն եր գրում։

«Պատմությունը ուսու ժարքախոսաներին առաջադրել և մի ամենամոտիկ խնդիր, ավելի հեղափոխական, քան վորեն

մի այլ յերկրի պրոլետարիատի բոլոր ամենամոտիկ խնդիրները, վոր այդ խնդրի իրագործումը—վոչ միայն յելքովական, այլ և ասիական ուսակցիայի ամենազոր պատնեշի խորտակումը—կրդարձներ ուսական պրոլետարիատը միջազգային պրոլետարական հեղափոխության առաջապահը»։

Այլ կերպ ասած, հեղափոխական շարժման կենտրոնը պետք է տեղափոխվեր Ռուսաստան։

Հայտնի չե, վոր Ռուսաստանի հեղափոխության ընթացքը արդարացրեց Լենինի գուշակությունը լիովին։

Այս բոլորից հետո միթե զարմանալի չե, վոր այդպիսի հեղափոխություն կատարած և նման պրոլետարիատ ունեցող յերկրը զարձել է պրոլետարական հեղափոխության տեսության և տակոմիկայի ծննդավայրը։

Զարմանալի չե միթե, վոր այդ պրոլետարիատի առաջնորդ Լենինը դարձել է միաժամանակ այդ տեսության և տակոմիկայի սահմանադրություն ու միջազգային պրոլետարիատի ղեկավարը։



XII. Ա Ե Թ Ո Դ Ը.

Վերի յես ասացի, վոր մի կողմից Մարքսի և Ենդիլսի, իսկ մյուս կողմից Լենինի միջև ընկած և Ռուտերնացիոնալի ոպորտյունիզմի տիրապետության մի ամբողջ շերտ։ Ճշտության համար յես ոկտոք և ավելացնեմ, վոր խառը այստեղ ոպորտյունիզմի վոչ թե ձետերն, այլ միայն նրա փաստական տիրապետության մասին է։

Չեականորեն Ռուտերնացիոնալի գլուխ եյին կանոնած «ուղղափառ» մարքսիստներ, «որթոզոլիս» կառուցին և ուրիշները։ Երականության մեջ սակայն Ռուտերնացիոնալի հիմնական աշխատանքը տարգում եր ոպորտյունիզմի գծով։ Ոպորտյունիստները իրենց հարմարվող գործառնության մասն բուրժուական բնության շնորհիվ հարմարվում եյին բուրժուականին, իսկ «ուղղափառներն» ել իրենց հերթին հարմարվում եյին ոպորտյունիստներին հանուն «ամբողջության պահպանության», հանուն «կուսակցության ներքին համերաշխության»։ Հետեանքը լինում եր ոպորտյունիզմի տիրապետությունը, վարովնեան բուրժուակայի քաղաքականության և «ուղղափառների» քաղաքականության մեջ ընկնազ շղթան զուրս յեկավ վոր միացած է։

Սա կապիտալիզմի համեմատաբար խաղաղ զարգացման շրջանն եր, այսովես ասած նախառազմական շրջանը, յերբ իմպերիալիզմի ձակատազրական ներհակությունները իրենց լիսկատար մերկությամբ տակալին յերեան չեյին յեկել, յերբ բանվարների սնառեսական գործադրությունները և արհեստական թիւթյունները զարգանում եյին ովելի

կամ պակաս «նորմալ», յերբ ընտրական պայքարը և պարլամենտական ֆրակցիաները «ՀՀմեցնող» հաջողություններ եյին ունենում, յերբ պայքարի լեզու յեզանակները վառարանվում եյին մինչ յերկինք և լեզությամբ «սպաներ» եյին կամենում կապիտալիզմը, — մի խոսքով, յերբ Ա Ինտերնացիոնալի կուսակցությունները ճարպակալել եյին և ցանկություն չկար լուրջ մտածելու վոչ պրոլետարական գիկտառուրայի, վոչ հեղափոխության և վոչ ել մասսաների հեղափոխական գաստիարակության մասին։

Մի ամբողջական հեղափոխական ակտության փախորեն՝ իրար հակառակ տեսական դուռթյուններ և տեսության բեկորներ, վոր պոկիել եյին մասսաների հեղափոխական կենդանի պայքարից և դարձել հեացած զորմաներ։ Առերես, ի հարկե, հիշում եյին Մարքսի ակտությունը, բայց միայն նրա համար, վորպեսզի զուրս քաշեն նրանից կենդանի հեղափոխական վագին։

Հեղափոխական քաղաքականության փոխարեն՝ մեզկ Փիլիստերություն, հարպիկի պոլիտիկանություն, պարտամենտական գիվանագիտություն և պարլամենտական կոմբինացիաներ։ Առերես, ի հարկե, ընդունում եյին «հեղափոխական» վարչականներ և լսունդներ, բայց նրա համար վորպեսզի ծածկեն նրանց մահուցի աւակ։

Կուսակցություններին փոխանակ ձիշտ հեղափոխական առկատիկայի ուսուցանելու և զաստիքակերու, հենվելով սեփական սխանների վրա, — խնամքով աչքաթող եյին անում ցավոտ խնդիրները, նույսացնում և սրսում եյին նրանց։ Առերես զեմ չեյին, ի հարկե, խոսելու այդպիսի ցավոտ խնդիրների մասին, բայց միայն նրա՝ համար, վորպեսզի վակեն նրանց վրանց վակեն և օկառչու կյա» բանաձեռվ։

Ահա ինչպիսին եր Ա Ինտերնացիոնալի դեմքը, նրա աշխատանքի մեթոզը, նրա արտենալը։

Արդեն մստենում եր իմպերիալիստական պատերազմ-

ների և պրոլետարիատի հեղափոխական պատմաբարտի նոր շրջանը։ Պայքարի հին յեղանակները ֆինանսական ամենամղոր կապիտալի հանդեպ պարզապես անբավարար և անզոր գուրս եկան։

Անհրաժեշտ եր վերաբննել և ինտերնացիոնալի բովանդակ աշխատանքը, նրա գործունեության մեթոդը, դուրս վանելով նրանից ֆիլիստերությունը, նեղճակատությունը, պոլիտիկանությունը, հավատափոխությունը, ուցիալ-շովինիզմը և սոցիալ-պացիֆիզմը։ Անհրաժեշտ եր սառուցածության յենթարկել և ինտերնացիոնալի ամրագլարանը, գուրս նեստելով բոլոր ժանդուածը և ճնացածը ու կոել զենքի նոր տեսակներ։ Առանց այսպիսի նախապատրաստական աշխատանքի ավելորդ կը լիներ կազիտալիզմի դեմ պատերազմի դուրս գալ։ Առանց որան պրոլետարիատը սիսկ եր անուում նոր հեղափոխական կոիվների հանդեպ լինելու անբավարար զինված կոմ մինչեւ իսկ բոլորովն անդեն։ Ինտերնացիոնալի ընդհանուր վերանորոգության և նրա ավդիասյան ախոռների լինդաւուր մաքրման այս պատիվը լինինիզմին բաժին ընկալ։

Առա ինչպիսի հանգամանքներում ծնվեց ու ամբացակ լինինիզմի մեթոդը։

Այս մեթոդի պահանջները վորոնք են։

Առաջին՝ վերստուգել և ինտերնացիոնալի տեսական գոգմանները մասսաների հեղափոխական կովի, կենդանի պրակարիկայի հնացում, այսինքն վերականգնել տեսականի և գործնականի խանգարված միանականությունը, նրանց միջի ձեղքվածքը վերացնել, վորովհետեւ միայն այդ պիտով կարելի յե ստեղծել իսկական պրոլետարական կուսակցություն զինված հեղափոխական տեսությամբ։

Յերկրորդ՝ վերստուգել և ինտերնացիոնալի կուսակցությունների քաղաքականությունը գոչ թե նիմք ընդունելով նրանց լողունքներն ու բանահերը (վորոնց չի կարելի հավատալ), այլ նրանց գործերն ու դորձողությունները աչքի առաջ ունենալով, վորովհետեւ միայն

այդ միջոցով կարելի յե գրավիլ պրոլետարական մասսաներին և նրանց վասանությունը շահել։

Յերրորդ՝ վերստուգել կազմել կուսակցական ամրող աշխատանքը նոր հեղափոխական ձևով, մասսաներին հեղափոխական կովի համար գաստիարակելու և նախայատրատելու վոգով, վորովհետեւ միայն այցպիսով կարելի յե մասսաներին պրոլետարական հեղափոխության համար նախապատրաստակել։

Չորրորդ՝ պրոլետարական կուսակցությունների ինքնառաջական մեթոդը հիմնվելով սեփական սփառների վրա գաստիարակել և կրթել նրանց, վորովհետեւ միայն այս միջոցով կարելի յե պատրաստել կուսակցության խկական կազրեր և իսկական առաջնորդներ։

Սոքա յեն կազմում լինինիզմի մեթոդի հիմունքն ու եյությունը։

Դործնականում բնչպես եր կիրարելում այս մեթոդը և ինտերնացիոնալի ուղորժունիստները անեն մի շարք տեսական գոգմաններ, վորոնցից նոքա մշաապես սպազում են, վերցնենք դրանցից մի քանիսը։

Առաջին գոգմա. — Պրոլետարիատի ձեռքով վշխանությունը զբավելու պայմանները։ Ուղորժունիստները հավատացնում են, թե պրոլետարիատը չի կարող և չպետք է վերցնի իշխանությունը, յեթե նա ինքը մեծամասնություն չի կազմում յերկրում։ Ապացուցներ — ամենին, վորովհետեւ անկարելի յե արդարացնել այս անհեթեթ գրությունը թե տեսականորեն և թե գործնականորեն ընդունենք, վոր այդպես և, պատասխանում ե լինինը և ինտերնացիոնալի պարագներին Բայց յեթե պատմական հանգամանքներն այսպես են դասավորվել (պատերազմ, ազգարային տագնապ և այլն), վոր ազգարնակության փոքրամանությունը կազմող պրոլետարիատը նարափորություն ունի ժողովելու իր շուրջն աշխատավորական մասսաների խոշոր մեծամասնությունը — ինչու նա չվերցնի իշխանությունը, ինչու պրոլետարիատը չողտագործի մի-

ջաղգային և ներքին բարեհաջող հանգամանքները կապիտալի ֆրոնտը ճեղքելու և ընդհանուր վախճանը արագացնելու համար: Միթե Մարքսը չի ասել դեռ ևս անցյալ դարի 50-ական թվականներին, թե պրոլետարական հեղափոխության գործը Գերմանիայում կարող էր լինել «Երաշալիվ», յեթե նար լիներ պաշտպանել պրոլետարական հեղափոխությունը «այսպես ասած, զյուղացիական պատերազմի յերկրորդ հրատարակությամբ»: Միթե հայտնի չե ամենքին և յուրաքանչյուրին, վոր պրոլետարիատը Գերմանիայում այն ժամանակ համեմատարար ավելի պակաս եր, քան որինակ Ռուսաստանում 1917 թվին: Միթե Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության պրակտիկան ցույց չտվեց, վոր 11 ինտերնացիոնալի հերսոների այս սիրեցյալ գողման գուրկ եր բոլորովին կենսական նշանակությունից պրոլետարիատի համար: Միթե պարզ չե, վոր մասսաների հեղափոխական պայքարի պրակտիկան զարկում եր և փշրում այս խարխուլ գողման:

Յերկրորդ գողմա: — Պրոլետարիատը իշխանությունը չի կարող պահել, յեթե նա չունի բավարար քանակությամբ պատրաստի կուլտուրական և վարչական կազրեր, վոր ընդունակ լինելին կառավարելու յերկիրը, — անհրաժեշտ ենախ և առաջ պատրաստել այդպիսի կաղըեր կապիտալիզմի պայմաններում, ապա վերցնել իշխանությունը, Յենթագրենք, թե այդպես եր, պատասխանում ել ինինը, բայց ինչու չի կարելի գործը այնպիս շուռ տար, վոր նախ գրավվի իշխանությունը, ստեղծվի պրոլետարիատի դարձացման բարեհաջող պայմաններ, իսկ հետո քայլել առաջ յոթմղնանոց քայլերով, աշխատավոր մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացնելու և բանվորներից զեկավարների ու ազմինիստրատորների բազմաթիվ կադրեր նախապատրաստելու համար: Միթե Ռուսաստանի պրակտիկան ցույց չտվեց, վոր զեկավարների կաղըերը բանվորներից առում են պրոլետարական իշխանության ժամանակ հարցուր անդամ ավելի արագ և հաս-

տատուն, քան կապիտալի իշխանության որոք: Միթե պարզ չե, վոր մասսաների հեղափոխական պայքարի պրակտիկան անսովոր կերպով ջախջախում և սովորաբանությունների նաև այս տեսական գողման:

Յերրորդ գողմա: — Ընդհանուր քաղաքական գործությունի մեթոդը պրոլետարիատի համար ընդունելի չե, վորովհետեւ նա տեսականորեն անամնել ե (տես՝ Ենդելովի քննադատաթյունը), գործնականորեն վասնգավոր (կարող ե խանգարել յերկրի տնտեսական կյանքի սովորական ընթացքը, կարող ե զատարկել արհեստական միությունների գրամարկը), չի կարող փոխարինել պայքարի պարագաներին յեղանակներին, վորոնք ներկայացնում են պրոլետարիատի զատակարգային կովի գլխավոր յեղանակները:

Լով, պատասխանում են լենինականները: Բայց, առաջին՝ Ենդելով քննադատում եր վոչ ամեն տեսակի ընդհանուր գործադուլը, այլ միայն ընդհանուր գործադուլի վորոշ տեսակը՝ անարիխատների ընդհանուր տնտեսական գործադուլը, վոր նորա տուած ելին քաշում պրոլետարիատի քողաքական պայքարի փոխարին, — ել ինչ գործունի այստեղ քաղաքական պայքար ական ընդհանուր գործադուլի մեթոդը: Յերկրորդ՝ ով ե վորտեղ ե ապացուցել, թե պայքարի պարլամենտական յեղանակը պրոլետարական պայքարի գլխավոր յեղանակն ե: Միթե հեղափոխական շարժման պատմությունը ցույց չի տալիս, վոր պարլամենտական պայքարը միայն գործոց ե և սժանուակությունը պրոլետարիատի արտապարլամենտական ոլայքարը կազմակերպելու համար, վոր կապիտալիզմի ժամանակ բանվորական շարժման հիմնական խնդիրները վճռվում են ուժով, պրոլետարական մասսաների անմիջական կովի նրանց ընդհանուր գործադուլի, նրանց ապստամբությամբ: Յերրորդ՝ վորտեղից ցուրս բերին պարլամենտական պայքարը ընդհանուր քաղաքական գործադուլի մեթոդով փոխարինելու հարցը: Ընդհանուր քաղաքական գոր-

ծագուլի կողմնակիցները յԵրբ և վնրաեղ փորձեցին փոխարինել սլայքարի սլարլամենտական յեղանակները արտապարլամենտական պայքարի յեղանակներով։ Չորրորդ՝ միթե Ռուսաստանի հեղափոխությունը չապացուցեց, փորընդհանուր քաղաքական գործադուլը մեծագույն դպրոցն է պրոլետարական հեղափոխության և անվոխարինելի միջոցը պրոլետարական ընդարձակ ժամաների գորահավաքի և կազմակերպման համար՝ կապիտալիզմի ամրությունները զրոնի յենթարկելու նախորյակին, — ել ինչի համար եր ֆիլիստերական վողբը տնտեսական կյանքի ոռվրական ընթացքին խանգարման և արհեստակցական միտթյունների գրամարկների գատարկման մասին։ Միթե պարզ չե, փոք հեղափոխական կովի պրակտիկան տակնուրա յե անում ոսկրայունիստների և այս դոգման։

Յեվ այլն և այն։

Անա ինչու եր Լենինն ասում, թե «հեղափոխական աեսությունը դոգմա չե», թե «նա ձեւափորվում ե վերջնականապես միայն սերտ կերպով կատված լինելով իուկական մասսայական և իուկական հեղափոխական շարժման պրակտիկայի հետ» («Մանկական հիմնդությունը»), վորովինեաւ տեսությունը պետք ե ծառայի պրակտիկային, վորովինեաւ տեսությունը պետք ե պատասխան տա այն հարցերին, վորոնց հրապարակ և հանում պրակտիկան» («Ժողովրդի բարեկամները»), վորովինեաւ նու պետք և սրբազրվի պրակտիկայի տվյալներով։

Ինչ վերաբերում ե Ո Ինտերնացիոնալի կոռսակցությունների քաղաքական լոգո կողներին և քաղաքական վրձիններին՝ այսպեղ բավական և միայն հիշել ոպատերագմին պատերազմ» լոգունդի հետ տեղի ունեցած պատմությունների հասկանալու համար այդ կուսակցությունների քաղաքական պրակտիկայի ամբողջ կեղծիքը և բովանդակ փատածությունը, կուսակցություններ՝ վորոնք քողարկում են իրենց հականեղափոխական գործը հականեղափոխական փքուն լոգունդներով և բանաձևերով։ Ամենքը հիշում

Բաղելի կոնգրեսում Ո Ինտերնացիոնալի փքուն ցույցը ուղղված իմպերիալիստների հասցեյին, լի ապստամբության բոլոր տեսակի սարսափների սպառնանքով (յեթե իմպերիալիստները վճռեն սկսել պատերազմը) և «պատերազմին պատերազմ» խրոխա լոգունդով։ Բայց ով չի հիշում, փոք կարձ ժամանակից հետո, հենց պատերազմի սկզբին, Բաղելի բանաձևը դրին մահուդի տակ, իսկ բանգորներին նոր լոգունդ հրամցրին՝ վոչնչացնել միմյանց ի փառս կապիտալիստական հայրենիքի։ Միթե պարզ չե, փոք հեղափոխական լոգունդներն ու բանաձևերը մի գրոշ չարժեն, յեթե նոքա չեն ամրապնդվում գործով։ Բավական և միայն իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխելու լենինյան քաղաքականությունը համեմատել Ո Ինտերնացիոնալի պատերազմի ուրիշի դավաճանական քաղաքականության հետ՝ հասկանալու համար ոսկրայունիգմի պոլիստիկանների քաղաքականության ամբողջ ասորությունը և լենինիզմի մեթոդի ամբողջ վիճությունը։ Զեմ կարող չըերել այսուեղ լենինի «Պոլիստարական հեղափոխությունը և հավատափոխ կառցկին» գրքից մի տեղ, ուր լենինը անողոք կերպով ձաղկում ե Ո Ինտերնացիոնալի լիդեր Կ. կառցկու ոսկրայունիստական փորձը՝ դատել կուսակցություններին վոչ թե ըստ նրանց գործերի, այլ նրանց թղթե լոգունդների և փատուազրերի համաձայն։

«Կառցկին վարում և ախպիկ մեշշանական ֆիլիստերական քաղաքականությունը յերկայելով, իբր թե լուզուն գ հրապարակ հանելը կերպարանափոխում ե գործը։ Բուրժվական զեմոկրատիստի ամբողջ պատմությունը մերկացնում ե այդ ցնորքը։ Փողովրդին խարելու համար բուրժվական զեմոկրատները ամեն անդամ առաջ են քաշել և միշտ առաջ են քաշում ուզածդ որպունդները։ Հենց բանն ել նրանումն ե, փոք պետք ե ուսուգ ել նրանց անկեղծությունը, փոք պետք ե իսուրերի հետ համեմատել գործը, փոք պետք ե չըավականաւ-

նալ իդեալիստական կամ շարժատանական ֆրագով, այլ պետք է հասու լինել դասակարգային իրավությանը...

Յես գեռ չեմ խոսում ՈՒ Խոտերնացիոնալի կուսակցությունների ինքնաքննադատության վախի մասին, նրանց սովորության մասին՝ ծածկելու սեփական սխալները, նսեմցնելու ցավոտ հարցերը, քողարկելու իրենց պակասությունները կեղծ բարեկարգություն ցուցահանելով, վորբթացնում և կենդանի միտքը և կաշկանդում կուսակցության հեղափոխական դաստիարակությունը հենված սեփական սխալների վրա, մի սովորություն, վորին ծաղրել և և խայտառակության սյունին գամել կենինը:

Ահա ինչ եր զրում կենինը պրոլետարական կուսակցությունների ինքնաքննադատության մասին իր «Մանկական հիմքներությունը» բրոշյուրի մեջ:

«Քաղաքական կուսակցության վերաբերմունքը դեպի իր սխալները կուսակցության լրջության և նրա կողմից սեփական դասակարգության մասն երի հանգեց իր պարտականությունները գործով կատարելու կարևորագույն և ամենաուղիղ շափանիչներից մեկն ե, իր սխալը բացահայտորեն խոստավանելը, նրա պատճառները յերեան բերելը, նրան ճնող հանդամանքները վերլուծելը, սխալը ուղղելու համար ուշադիր կերպով միջոցներ խորհնելը, — ահա վորն ելուրջ կուսակցության հատկությունը, վորն և նրա պարտականությունների կատարումը, վորը դասակարգի և ապա մասսայի դաստիարակությունն ու կրթությունը»:

Վոմանք ասում են, թե սեփական սխալները յերեան հանելը և ինքնաքննադատությունը վտանգավոր են կուսակցության համար, վորովհետեւ նոցա կարող են ոգտագործել հակառակորդները պրոլետարիատի կուսակցության դեմ: Կենինը նման պատճառաբանությունները համարուեր անհիմն և միանգամայն սխալ: Ահա ինչ եր ասում նա այդ մասին դեռ ևս 1904 թվին իր «Մի քայլ առաջ»

բրոշյուրի մեջ, յերբ մեր կուսակցությունը տակավին թույլ եր և աննշան:

«Նոքա, այսինքն մարքսիզմի հակառակորդները, չարախնդում են ու ծամածություններ անում, տեսնելով մեր վեճերը. նոքա կը կամենան, ի հարկե, քաղել իրենց նպատակների համար մեր կուսակցության պակասություններին և թերություններին նվիրած իմ բրոշյուրից վորոշ տեղեր: Ուստասանի մարքսիստները բավականաշափ արդեն մարզիկներից, շարունակելու համար հակառակ նման կմասոցներից, շարունակելու համար հակառակ նրանց իրենց ինքնաքննադատության և սեփական մինուսները անխնա կերպով մերկացնելու աշխատանքը, մինուսներ՝ վորոնք անպայմանորեն և անխուսափելիորեն պետք ե զերազանցեն բանվորական շարժման զարգացմանը...»

Սոքա յեն ընդհանուր առմամբ լենինիզմի մեթոդի բնորոշ գծերը:

Այս, ինչ տալիս ե կենինի մեթոդը, իր հիմնականում արգեն յեղել և Մարքսի ուսմունքի մեջ, վորը, Մարքսի խոսքերով, ոիր եյտթյամբ քննադատական և հեղափոխական: Հենց այս քննադատական ու հեղափոխական վագով ել ներշնչված ե կենինի մեթոդը սկզբից մինչև վերջը:

Բայց սխալ կը լիներ կարծել, թե կենինի մեթոդը ներկայացնում ե իրենով հասարակ վերականգնումն այն բանի, ինչ տվել ե Մարքսը: Հիրավի, կենինի մեթոդը հանդիսանում ե վոչ միայն վերականգնումն, այլ և Մարքսի քննադատական և հեղափոխական մեթոդի, նրա մատերիալիստական դիալեկտիկայի կոնկրետիզացիան և հետագա զարգացումը:

*Հայոց պատմություններ*

Միաց իւստի  
Դեմքն

~~III.~~ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Այս նյութից յես կը վերջնեմ յերեք խնդիր. ա) տեսության նշանակությունը պրոլետարական շարժման համար, բ) տարերայնության «տեսության» քննադատությունը և գ) պրոլետարական հեղափոխության տեսությունը:

1. ՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. — Վոմանք կարծում են, թե լենինիզմը պրակտիկայի գերակայությունն է տեսության հանդեպ, այն մտքով, վոր զիսավարը՝ նրա մեջ մարքսիստական դրությունները գործ դարձնելն է, այդ գրությունները «կատարելը», իսկ ինչ վերաբերում է տեսության՝ այդ հարցի նկատմամբ լենինիզմը իրը թե բավականին անտարբեր է: Հայտնի յես, վոր Պետականվը հաճախ հաճախ հաճախ նեղնում եր Լենինի «անտարբերությունը» զենքի տեսությունը և հատկապես փիլիսոփայությունը: Հայտնի յե նույնպես, վոր ներկայիս գործնական լենինականներից շատերը այնքան ել չեն գուրգուրում տեսությունը, առանձնապես նկատի ունենալով գործնական աշխատանքի այն անսահմանությունը, վոր հանգամանքների բերումով ստիպված են նորա տանել: Յես պետք է հայտարարեմ, վոր այս ավելի բան տարորինակ կարծիքը Լենինի և Լենինիզմի մասին բոլորովին սիալ և վոչ մի կերպ չի համապատասխանում իրականության, վոր պրակտիկների ձգումը խռոսափել տեսությունից՝ հակառամ և լենինիզմի ամրող վոգուն և հզի յե մեծամեծ վասնգներով գործի համար:

Տեսությունը բարոր յերկրների բանվորական շարժ-

ման փորձն ե, իր ընդհանուր ձևովը վերցրած: Տեսությունը դասնում է անառարկայական, յեթե նա չի կապվում հեղափոխական պրակտիկայի հետ, ճիշտ այսպես, ինչպես վոր պրակտիկան դասնում է կույր, յեթե նա իր ձանապարհը չի լուսավորում տեսության միջոցով: Բայց տեսությունը դասնում է բանվորական շարժման հղորագույն ուժը, յերբ նա ձևավորվում է կապված լինելով անխօնիորեն հեղափոխական գործունեության հետ: Նման տեսությունը միայն կարող է տալ շարժմանը վատահություն, հասկանալու ույժ և շրջապատող գեպքերի ներքին կապի ըմբռնութիւն, նա և միայն նա կարող է ոզնել պրակտիկային հասկանալու վոչ միայն ինչպես և ուր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլ և այն՝ թե ինչպես և ուր պետք է շարժվեն նոքա մերձավոր ապագայում: Միայն Լենինն է ասել ու կրկնել տասնյակ անգամ այն հայտնի գրությունը, թե՝

«Առանց հեղափոխական տեսության չի կարող լինել նաև հեղափոխական շարժումը (տես՝ «Ի՞նչ անել»): Նոր ցըսամեն»:

Լենինը ավելի քան վորեկ և մեկ ուրիշը հասկացավ տեսության կարևոր նշանակությունը հատկապես այնպիսի մի կուսակության համար, վորպիսին մերն և, նըրկատի առնելով միջազգային պրոլետարիատի մարտիկի այն զեկավար դերը, վորպիսին բաժին և ընկել նըրան, այլև նկատի առնելով նրան շրջապատող ներքին և արտաքին հանգամանքների բարդությունը Նախազուշակելով մեր կուսակցության այս հատուկ գերը զեռ ևս 1902 թվականին, նա հարկ համարեց արդեն իսկ այն ժամանակ հիշեցնել, վոր՝

«Առաջնորդող մարտիկի զերը կտր ե կատարել այն կուսակցությունը, վորին զեկավարում է առաջնորդող տեսությունը (տես՝ «Ի՞նչ անել»): Նոր ցըսամեն»:

Ապացուցերու պետք չկա, վոր ներկայումս, յերբ

արդեն Լենինի նախագուշակությունը մեր կուսակցության դերի մասին իրագործվել է կյանքի մեջ, Լենինի այս դրությունը ձեռք է բերում հատուկ ուժ և նշանակություն:

Թերեւս ավելի ցայտուն արտահայտությունը այն բարձր նշանակության, վորպիսին տվել է Լենինը տեսության՝ պետք է վոր համարվի այն փաստը, վոր միայն Լենինը ձեռնարկեց իրագործելու մի ամենալուրջ խնդիրը՝ ընդհանրացնել մատերիալիստական փիլիսոփայության վերաբերյալ ամենակարևորը նրանից, ինչ տվել է գիտությունը ենգելսից Լենինին բաժանող ժամանակամիջուցում, և բազմակողմանիորեն քննադատելու մարքսիստների շրջանում գոյություն ունեցող հակամատերիալիստական հոսանքները: Ենգելսն ասում էր թե՝ «Մատերիալիզմը ստիպված կլինի ընդունել նոր տեսք յուրաքանչյուր նոր մեծ գյուտից հետո»: Հայտնի չե, վոր այս խնդիրը իրագործեց իր ժամանակի համար միայն Լենինը, իր «Մատերիալիզմը և եմպիրիոկրիտիզմը» նշանագործքով: Պլեխանովը, վոր սիրում եր հեգնել Լենինի «անտարբերությունը» փիլիսոփայության հանդեպ՝ չեր համարձակում անդամ լուրջ կերպով ձեռնարկել այդպիսի մի խնդրի:

2. ՏԱՐԵԲԱՅՆՈՒԹՅԱՆ «ՏԵՍՈՒԹՅԱՆ» ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐ ԱՌԱՋԱՊԱՀԻ ԴԵՐԸ ՇԱԲՄԱՆԻ ՄԵՋ. — Տարերայնության «տեսությունը» — զա սպորայունիզմի տեսությունն ե, բանվորական շարժման տարերայնության յերկրագու տեսությունը, բանվոր զասակարգի առաջապահի (ավանդարգի), նրա կուսակցության գեկավար դերը փաստորն ժիառող տեսությունը:

Տարերայնության յերկրագու տեսությունը վճառկանապես դեմ և բանվորական շարժման հեղափոխական ընույթին, նա հակառակ է, վոր շարժումը ընթանա կապիտալիզմի հիմունքների դեմ ուղղված պայքարի գծով:

Նա կամենում է, վոր այդ շարժումը գնա կապիտալիզմի համար «իրագործելի» և «ընդունելի» պահանջների գծով նա ամբողջապես «դիմագարձության ամենաթույլ գծի» կողմն է: Տարերայնության տեսությունը արեդ-լունիոների գաղափարախոսությունն է:

Տարերայնության յերկրագու տեսությունը տարերային շարժմանը գիտակցական, պլանաչափ բնույթ տալուն վճռապես դեմ է, նա դեմ է, վոր կուսակցությունը վնա բանվոր դասակարգի առաջից, վոր կուսակցությունը վեր բարձրացնի մասսաներին մինչև գիտակցության աստիճանը, վոր կուսակցությունը իր յետելից տանի շարժումը: Նա կամենում է, վոր շարժման գիտակից տարբերը չխանդարեն շարժմանը ընթանալու իր ուղիղով, նա կամենում է, վոր կուսակցությունը միայն հնագանդվի շարժման տարբերայնությանը և պոչի պես քարշ գա նրա յետելից: Տարերայնության տեսությունը շարժման գիտակցական տարբեր գերը նվազագույն գարձնող տեսությունն է, «պոչականության» գաղափարախոսությունը, տրամարանական հիմունքը ամ է նույն ակի սպորտյունիզմի:

Եյս տեսությունը, վոր նրագարակ է յեկել դեռ ևս նախ քան Ռուսաստանի առաջին հեղափոխությունը, գործնականորեն այն տեղն եր հացնում, վոր նրա հետեւըգները, այսպես կոչված «տնտեսագետները» ժրխտում եյին ինքնուրույն բանվորական կուսակցության անհրաժեշտությունը Ռուսաստանում, դեմ եյին դուրս գալիս բանվոր զասակարգի հեղափոխական կովին, վոր նոպատակ ուներ խորտակելու ցարիզմը, քարոզում եյին արեդ-լունիոնիստական քաղաքականություն վարել շարժման մեջ և ընդհանրապես մատնում եյին բանվորական շարժումը լիբերալ բուրժվագիայի գերիշխանության:

Հին «Խոկրայի» («Կայծ») պայքարը և «պոչականության» տեսության փայլուն քննադատությունը, վոր կատարել եր Լենինը իր «Ի՞նչ անել» բրոշյուրի մեջ, վոչ

միայն չախջախեցին այսպես կոչված «անտեսականությունը» այլ և ստեղծեցին Ռուսաստանի բանվոր դասակարգի իսկական հեղափոխական շարժման տեսական հիմունքները:

Առանց այս պայքարի իզուր եր անդամ մտածել Ռուսաստանում ինքնուրույն բանվորական կուսակցություն հիմնելու և հեղափոխության մեջ նրա ունենալիք դեկազար դերի մասին:

Սակայն տարերայնության յերկրպագու տեսությունը միայն ուսւական յերևութ չե: Նա լայն չափերով տարածված ե, ճիշտ և մի քիչ ավելի տարբեր ձևով, լ ինտերնացիոնալի բոլոր կուսակցությունների մեջ տունց բացառության: Յես նկատի ունեմ լ ինտերնացիոնալի տուաշնորդների կողմից գուենկացրած այսպես կոչված «արտադրողական ուցիչների» տեսությունը, վորը արդարացնում ե ամեն ինչ և հաշտեցնում ամենքին, վորը պարզաբանում ե փաստերը և բացատրում նրանց այն ժամանակ, յերբ նոքա արգեն զզվեցրել են ամենքին, և պարզաբանելով հանգստանում են զրանով:

Մարքսն ասում եր, թե մատերիալիստական տեսությունը չի կարող սահմանափակվել բացատրելով միայն աշխարհը, թե նա պետք ե նաև փոփոխի նրան: Բայց կառուցին և ընկերությունը գործ չունեն որու հետ, նոքա գերազանում են Մարքսի ձեւին բարպարագության առաջին մասը: Ահա մեկը այդ «տեսության» կիրարկման բազմաթիվ որինակներից:

Առում են թե՝ իմպերիալիստական պատերազմից առաջ լ ինտերնացիոնալի կուսակցությունները սպասնում ենին հայտարարել «պատերազմին պատերազմ», յեթե իմպերիալիստները պատերազմ ակսեն: Առում են թե՝ պատերազմի ամենասկզբին այս կուսակցությունները մահուցի տակ ծածկեցին «պատերազմին պատերազմ» լոգունգը և մտցրին կյանքի մեջ նրան հակառակ լողունգը՝ «պատերազմ իմպերիալիստական հայրենիքի համար»: Ա-

սում են թե՝ լողունգների այս փոփոխության հետևանքով միլիոնավոր զոհեր յեղան բանվորներից: Բայց ուստի կը իմպերիալիստներ կարծել, թե այսաեղ կան մեղավորներ, թե վորի և մեկը դավաճանել ե բանվոր դասակարգին և մասնել նրան: Բնավ, վոչ: Ամեն ինչ տեղի յե ունեցել այնպես, ինչպես և պետք ե տեղի ունենար: Առաջին վորովհետեւ ինտերնացիոնալը «խաղաղության վործիք ե» և վոչ թե պատերազմի: Յերկրորդ՝ վորովհետեւ այն ժամանակ յեղած արտադրողական ուժերի մակարդակը ուրիշ վոչ մի բան թույլ չեր առ ձեռնարկել: «Մեղավոր են» արտադրողական ուժերը: Այս բանը «մեղ» հեշտորեն բացատրում ե պարօն կառուցելու «արտադրողական ուժերի աեստթյունը»: Իսկ ով չի հավատում այդ «տեսության»՝ նա մաքսիստ չե: Կուսակցությունների գերը: Ելքրանց նշանակությունը շարժման մեջ: Բայց ինչ կարող ե անել կուսակցությունը այնպիսի վճռական գործոնի հանդեպ, վորպիսին «արտադրողական ուժերի մակարդակին ե»...

Մարքսիզմի խեղաթյուրման այսպիսի որինակներ կարելի յեր մի ամբողջ կույտ առաջ բերել:

Ապացուցելու պետք չկա, վոր այս խեղաթյուրված «մարքսիզմը», վորը կոչված ե քողարկելու ոպորտյունիզմի մերկությունը, հանդիսանում ե լոկ կերպարանափոխությունն ըստ յերազական հաշակի նույն այն «արշականության» ակսության, վորի զեմ մարտընչել ե լենինը դեռ ևս մինչե Ռուսաստանի առաջին հեղափոխությունը:

Ապացուցելու հարկ չեմ ակսում, վոր կործանումը այս ակսական խեղաթյուրման՝ Արևուտքում խսկաննեղափոխական կուսակցությունների ստեղծման նախապայմանն ե հանդիսանում:

3. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Պրոլետարական հեղափոխության լենինյան ակսությունը բխում է յերեք հիմնական դրությունից:

**ԱՌԱՋԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ.** — Ֆինանսական կապիտալի տիրապետությունը կապիտալիզմի առաջավոր յերկրներում, արժեթղթերի եմիսիան, փորպես ֆինանսական կապիտալի կարևորագույն ոպերացիա. կապիտալի արտածությունը դեպի հում նյութերի աղբյուրները, փորպես մեկը խմբերիզմի հիմունքներից. ֆինանսական ոլիգոպարխիայի ամենազոր լինելը, փորպես հետեւանք ֆինանսական կապիտալի ափրապետության, — այս ամենը յերկան և հանում մոնոպոլիստական կապիտալիզմի գոենիկ մակարուծական ընավորությունը, դարձնում ե հարյուր անգամ ավելի զգալի կապիտալիստական արեսաների և սինդիկատների ճնշումը, ուժեղացնում ե բանվոր դասակարգի զայրությը կապիտալիզմի հիմունքների դեմ, առաջնորդում մասներին զեպի սրբութարական հեղափոխություն, փորպես միակ փրկությունը (տես՝ Լենինի «Խմակերիալիզմը»):

**Այսուղից հանում ենք առաջին յեզրակացությունը — սրվում ե կապիտալիստական յերկրների նեղափոխութան տագնապը, մեծ չափով աճում են պայմուցիկ տարրերը «մայր յերկրների» ներքին պրոեւտարական ճակատում:**

**ՅԵՐԿՐՈՐԴ ԴՐՈՒԹՅՈՒՆ.** — Կապիտալի ուժեղ արտածումն զեպի զայրութային և հպատակ յերկրները. ընդունածակումն «աղղեցության շրջանների» և զայրութային տիրապետությունների՝ մինչև բովանդակ յերկրագնդի նըսվածումն. աշխարհի բնակչության հսկայական մեծամասնության վերաբերմամբ կապիտալիզմը ֆինանսական ըոտրկացման և զայրութային ճնշման համար շարժին սիստեմա դառնով, — այս ամենը մի կողմից դարձրին առանձին աղղային անտեսությունները և աղգային տերրիտորիաները մի ըուռը «առաջավոր» յերկրների ձեռքով, — այս ամենը մի կողմից դարձրին համաձին աղղային միացյալ շղթայի ողակները, փորկուչում և համաշխարհային անտեսություն, իսկ մյուս կողմից յերկրագնդին աղղային անտեսությունը բաժանեցին յերկու բանակի՝ մի ըուռը «առաջավոր» կապիտալիստական յերկր-

ները, փորոնք շահագործում են և ճնշում ընդարձակ գաղութային և հպատակ յերերներին, իսկ մյուսը՝ գաղութային ու հպատակ յերկրների հսկայական մեծամասնությունը, փոր հարկադրված ե պայքար մղել աղպատագրվերու համար իմպերիալիստական հարստահարություններից (Տես՝ «Իմպերիալիզմը»):

**Այսուղից հանում ենք յերկրորդ յեզրակացությունը — սրվում են նեղափոխական տագնապները գաղութային յերկրներում, ուստանում են ապստամբական տարրերը իմպերիալիզմի դեմ՝ արտաքին զայրութային ճակատում:**

**ՅԵՐԿՐՈՐԴ ԴՐՈՒԹՅՈՒՆ.** — «Աղղեցության շրջաններին» և զայրություններին միահեծան իշխելը. զանազան կապիտալիստական յերկրների անհամաչափ զարգացումը, փոր առաջ ե բերում կատարի մի կորից աշխարհը վերաբաժանելու համար այն յերկրների միջի, փորոնք գրաված ունեն տերրիտորիաները և այն յերկրների միջի, փորոնք կամենում են ստանալ իրենց «բաժինը». իմպերիալիստական պատերազմները, փորպես միակ միջոցը վերականգնելու խանգարված «հավասարակշռությունը», — այս ամենը տանում ե զեպի յերրորդ ճակատի ուժեղացումը, — միջկապիտալիստական ճակատի, փոր թուլացնում և իմպերիալիզմը և նեշտացնում յերկու առաջին ճակատների՝ նեղափոխական-պրոլետարական ճակատի և զայրութային-աղղափոխական ճակատի միացումը իմպերիալիզմի դեմ (տես՝ «Իմպերիալիզմը»):

**Այսուղից հանում ենք յերկրորդ յեզրակացությունը — անխափանելի յեն պատերազմները իմպերիալիզմի ժամանակ և անխուսափելի Յեփրոպայի պրոլետարական նեղափոխության միությունն Արեկելիք գաղութային նեղափոխության հետ, նեղափոխության մի միացյալ համաշխարհային ճակատ ստեղծելու համար՝ ընդդեմ իմպերիալիզմի համաշխարհային ճակատի:**

**Բոլոր այս յեզրակացությունները Լենինի մոտ միանում են մի ընդհանուր յեզրակացության մեջ այն մա-**

սին, թե «խմբերիալիզմը» սոցիալիստական նախահեղափոխությունն ե» (տես՝ «Խմբերիալիզմը»):

Սրան համաձայն փոխվում ե և ինքը՝ պրոլետարական հեղափոխության խնդրին մոտենալու յեղանակը, հեղափոխության բնույթը, նրա ծավալը, խորությունը, սխեման ընդհանրապես: \*

Առաջներում պրոլետարական հեղափոխության նախադրյալների վերլուծությանը մոտենում էին սովորաբար այս կամ այն առանձին յերկրի անտեսական վիճակի տեսակետից: Այժմ այդ տեսակետից մոտենալը այլևս անբավարար ե համարվում: Այժմ գործին պետք ե մոտենալ բոլոր յերկրների կամ նրանց մեծ մասի անտեսական վիճակի տեսակետից, համաշխարհային անտեսության վիճակի տեսակետից, վերտինին առանձին յերկրները և առանձին ազգային անտեսությունները դադարել են ինքնամփոփ միավորներ լինելուց, նորա դարձել են այն միացյալ շղթայի ողակները, վոր համաշխարհային անտեսությունն ե կոչվում, վորովհետեւ հին «կուլտուրական» կապիտալիզմը դերաձել դարձել ե իմպերիալիզմ, իսկ իմպերիալիզմը գինանսական ստրկության և մի բուռ «առաջավոր» յերկրների ձեռքով աշխարհիս բնակչության հսկայական մեծամասնությունը գաղութային ճընշման յենթարկելու համաշխարհային սիստեման ե:

Առաջներում ընդունված եր խոսելու պրոլետարական հեղափոխության որեկտիվ պայմանների գոյության կամ բացակայության մասին առանձին յերկրներում, կամ ավելի ճիշտ այս կամ այն զարկացած յերկրում: Այժմ այս տեսակետն այլու անբավարար ե նկատվում: Այժմ պրոլետարական հեղափոխությունը պետք ե յերկրների բարեկարգացնելու վարդեկ համաշխարհային սիստեմայի մեջ զոյտայուն ունեցող ներհակությունների զարգացման, վորպես նետեանք համաշխարհային իմպերիալիստական ձակատի շղթայի պատուման այս կամ այն յերկրի մեջ:

Հի կարտդ անխափանելի խոչընդուռ ծառայել հեղափոխության համար, յեթե սիստեման ամբողջովին, կամ ավելի ճիշտ, — վորովհետեւ սիստեման ամբողջովին արդեն հասունացել ե հեղափոխության համար:

Առաջներում ընդունված եր խոսելու այս կամ այն զարգացած յերկրի պրոլետարական հեղափոխության մասին, իրու առանձին ինքնամփոփ մեծության, հակազրկվելով կապիտալի տառանձին աղղային ճակատին, վորպես նրա հակառնյան: Այժմ այդ տեսակետն արդեն անբավարար ե նկատվում: Այժմ պետք ե խոսել համաշխարհային սպրոլետարական հեղափոխության մասին, վորովհետեւ կապիտալի տառանձին աղղային ճակառները զարձել են այն միացյալ շղթայի ողակները, վոր կոչվում ե իմպերիալիզմի համաշխարհային ճակատ և վորին պետք ե հակազրկվի բոլոր յերկրների հեղափոխական շարժման ընդհանուր ճակատը: *Աօրինական պարզ*

Առաջներում պրոլետարական հեղափոխությունը դիտում եին, վորպես նետեանք տվյալ յերկրի բացառապես ներքին զարգացման: Այժմ այդ տեսակետը արդեն անբավարար ե նկատվում: Այժմ պրոլետարական հեղափոխությունը պետք ե զիսել նախ և առաջ, վորպես նետեանք իմպերիալիզմի համաշխարհային սիստեմայի մեջ զոյտայուն ունեցող ներհակությունների զարգացման, վորպես նետեանք համաշխարհային իմպերիալիստական ձակատի շղթայի պատուման այս կամ այն յերկրի մեջ:

Վորտեղ կը կսկի հեղափոխությունը, վորտեղ, վոր յերկրում ամենից առաջ կարող ե ճեղքվել կապիտալի ճակատը:

— Անտեղ, ուր ամենից շատ ե զարգացած արդյունաբերությունը, ուր պրոլետարիատը կազմում ե մեծամասնություն, ուր ամենից շատ ե կուլտուրականությունը, զեմոկրատիան, — պատասխանում եին սովորաբար առաջներում:

— Վո՞չ, — առարկում ե հեղափոխության լինինյան

տեսությունը, — վոչ անպատճառ այնտեղ, ուր արդյունաբերությունը ավելի յէ զարգացած և այն կապիտալի ճակատը կը ճեղքի այնտեղ, ուր իմպերիալիզմի շրջան ավելի թույլ է, փորովհետեւ պրոլետարական հեղափոխությունը հետեանք և համաշխարհային իմպերիալիստական ճակատի շղթայի պատումն նրա ամենից թույլ տեղում։ Ռւսակի կարող և պատահել, վոր հեղափոխություն սկսող, կապիտալի ճակատը ճեղքող յերկիրը լինի կապիտալիստական տեսակետից ավելի պակաս զարգացած, քան մյուս, ավելի զարգացած յերկրները, վորոնք, չնայելով դրան, մնում են կապիտալիզմի շրջանակներում։

1917 թվին իմպերիալիստական համաշխարհային ճակատի շղթան դուրս յեկավ վոր Ռուսաստանում ավելի թույլ է, քան մնացած յերկրներում։ Այնտեղ ել նա կը տրվեց, յելք տալով պրոլետարական հեղափոխության։ Ինչու Վորովինակ Ռուսաստանում ծավալվում եր մեծագույն ժողովրդական հեղափոխությունը, վորին առաջնորդում եր հեղափոխական պրոլետարիատը, իր հետ ունենալով այնպիսի լուրջ դաշնակից, վորպիսին կալվածատերերի ձեռքով կեղեգված և ճնշված բազմամիլիոն դյուզացիությունն եր։ Վորովինակ հեղափոխության դեմ այնտեղ կանգնած եր իմպերիալիզմի մի այնպիսի զարքելի ներկայացուցիչ, վորպիսին ամեն տեսակի բարոյական կշիռ կորցրած և բնակչության ընդհանուր ատելության արժանացած ցարիզմն եր։ Ռուսաստանում շղթան ավելի թույլ դուրս յեկավ, թեպետ և Ռուսաստանը կապիտալիստական տեսակետից ավելի պակաս զարգացած եր, քան ասենք՝ Ֆրանսիան և Գերմանիան, Անգլիան կամ Ամերիկան։

Վորտեղ կը պատովի շղթան մոտավոր ապագայում։ Քարձյալ այնտեղ, ուր նա ավելի թույլ է։ Հնարագոր և, վոր շղթան պատովի, ասենք՝ Հնդկաստանում։ Ինչու Վորովինակ այնտեղ կա յերիտասարդ ռազմական-հեղափոխական պրոլետարիատ, վորն ունի այնպիսի դաշնակից,

փորպիսին ազգային ազատագրուկան շարժումն է, — անկասկած մեծ և լուրջ մի զաշնակից։ Վորովինակ հեղափոխության հանդեպ այնտեղ կանգնած է մի այնպիսի հանրահայտ ճակասակորդ, վորպիսին ուսարցերկրյա իմպերիալիզմն է, զուրկ բարոյական վարկից և արժանացած Հնդկաստանի կեղեգվող ու ճնշվող մասսաների ատելության։

Միանգամայն հնարագոր և նույնպես, վոր շղթան պատովի Գերմանիայում։ Ինչու Վորովինակ այն զօրծուները, վորոնք գեր են խաղում, ասենք՝ Հնդկաստանում, սկսում են զործել նաև Գերմանիայում։ Այսուղի, հասկանալի յէ, վոր զարգացման մակարդակի այն անգին տարբերությունը, վոր գոյություն ունի Հնդկաստանի և Գերմանիայի միջև չի կարող իր գրումը չգնել Գերմանիայի հեղափոխության ընթացքի և հետեանքի վրա։

Ահա ինչու Լենինն առում է, թե՝

«Արևմտյան Յեվրոպայի կապիտալիստական յերկրները կը բոլորեն իրենց զարգացումը գեպի սոցիալիզմ վոչ թե նրանց մեջ սոցիալիզմի համաշափ «հասունացմամբ», այլ պետականական մասը մյուս մասի կողմից շահազործվելու միջոցով, իմպերիալիստական պատերազմում տուաջին պարտված պետության շահագործման միջոցով, միացած բովանդակ Արևելքի շահագործման հետ, վոր Արևելքը մյուս կողմից վերջնականացես հեղափոխական շարժման և անցել հենց այդ առաջին իմպերիալիստական պատերազմի հետեանքով և վերջնականացես մտել և համաշխարհային հեղափոխական շարժման շրջանառության մեջ» (տես՝ «Ավելի լավ ե քիչ...»)

Կարձ իմպերիալիստական ճակատի շղթան, վորպես կարգ, պետք և պատովի այնտեղ, ուր այդ շղթայի ողակներն ավելի թույլ են, և համենայն գեպս վոչ անպայման այնտեղ, ուր կապիտալիզմն ավելի յէ զարգացած, ուր պրոլետարիան այսքան առկոս են կազմում, իսկ զյուղացիներն այնքան և այսպես շարունակ։

Ահա ինչու վիճակագրական հաշվառումները բնակչության պրոլետարական կազմի տոկոսային թվերի մասին առանձին յերկրում, պրոլետարական հեղափոխության հարցը վճռելիս, կորցնում են այն բացարիկ նշանակությունը, վորպիսին հաճույքով տալիս ելին նրանց 11 ինտերնացիոնալից ելած փոխասացները, վորոնք չեն հանկանում իմպերիալիզմը և վախենում են հեղափոխությունից ինչպես ժամկախալից:

Հետու 11 ինտերնացիոնալի հերոսները սինդում ելին (և շարունակում են պնդել), թե մի կողմից բուրժվական գեմոկրատական հեղափոխության և մյուս կողմից պրոլետարական հեղափոխության միջև զոյտություն ունի անդունդ, կամ համենայն զեպս չինական պատ, վոր բաժանում ե մեկը մյուսից ավելի կամ պակաս տեսող ժամանակամիջոցով, վորի ընթացքում իշխանության հասած բուրժվագիան զարգացնում է կապիտալիզմը, իսկ պրոլետարիատը կուտակում է իր ուժերը և պատրաստվում «գնացական կամի» կապիտալիզմի դեմ։ Այս ժամանակամիջոցը սովորաբար հաշվում են բազմաթիվ տամնամյակներ, յեթե վոչ ավելի։ Հարկ չկա ապացուցելու, վոր չինական պարսպի այս աեսությունը զուրկ է ամեն զիտական իմաստից իմպերիալիզմի պայմաններում, վոր նա հանդիսանում է և չի կարող չհանդիսանալ սոսկ քողը, զարդարանքը բուրժվագիայի հականեղափոխական նկրտումների։ Հարկ չկա ապացուցելու, վոր բախումներով և պատերազմներով հղի իմպերիալիզմի պայմաններում, «ոսցիալիստական նախահեղափոխության» պայմաններում, յերբ «փթթող» կապիտալիզմը դառնում է «մեռնող» կապիտալիզմ, իսկ հեղափոխական շարժումը զարգանում է աշխարհիս բոլոր յերկրներում, յերբ իմպերիալիզմը միանում է առանց բացառությունը, նույն այդ միջոցով զարձնելով անհրաժեշտ բոլոր հեղափոխության թափի մասին իրենց ունեցած զատողությունների և բանաձերի մեջ»։

Խական ուժերի միացումը՝ սկսած Արևմուտքի պրոլետարական շարժումներից սինչե Արևելքի ազգային-ազատագրական շարժումները, յերբ Փեոլալական ճորտատիրական կարգերի մնացորդների վոչնչացումը դասնում է անհնար առանց իմպերիալիզմի դեմ պատերազմելու, — հարկ չկա ապացուցելու, վոր այդպիսի պայմաններում բուրժվական գեմոկրատական հեղափոխությունը ավելի կամ պակաս զարգացած յերկրում պետք է մոտենա պրոլետարական հեղափոխության, վոր առաջինը պետք է ամի և գառնա յերկրորդ։ Մուսաստանի հեղափոխության պատմությունն ակներև կերպով ապացուցեց այս գրության ճշտությունը և անվիճելիությունը։ Իզուր չե Լենինը տակավին 1905 թ., ուսւական հեղափոխության նախորյակին, իր «Յերկու տակտիկա» ըրոշյուրի մեջ զծել բուրժվական-գեմոկրատական հեղափոխությունը և սոցիալիստական հեղաշրջումը, վորպես միհնույն շըզթայի յերկու ողակը, վորպես ուսւական հեղափոխության թափի միացյալ և ամբողջական պատկերը։

«Պրոլետարիատը պետք է իր վախճանին հասցնի զեմոկրատական հեղաշրջումը, իրեն միացնելով գյուղացիական մասսան, վորպեսզի ույժի միջոցով ջախջախի ինքնակալության դիմադրձությունը և չեղոքացնի բուրժվագիայի անկայունությունը։ Պրոլետարիատը պետք է կատարի սոցիալիստական հեղաշրջում, միացնելով իրեն բնակչության կիսապրոլետարական տարրերի մասսան, վորպեսզի ույժի միջոցով ջարդի բուրժվագիայի գիմագարձությունը և չեղոքացնի գյուղացիության ու մանր բուրժվագիայի անկայունությունը։ Սորա յեն պրոլետարիատի ինդիբրները, վորոնց այնպես նեղ են պատկերացնում նոր իսկրայականները հեղափոխության թափի մասին իրենց ունեցած զատողությունների և բանաձերի մեջ»։

Յես այլիս չեմ խոսում Լենինի մյուս, ավելի ու ժամանակի աշխատանքների մասին, ուր բուրժվական հե-

դափոխությունը պրոլետարականի փոխելու գաղափարը յերևան և գալիս ավելի ցայտուն, քան «Յերկու տակտիկայի» մեջ, լինելով մնկը լենինյան հեղափոխական տեսության անկյունաքարերից:

Բանից գուրս ե գալիս, վոր ընկերներից վոմանը յենթագրում են, թե Լենինը այս գաղափարը կազմել է միայն 1916 թվին, թե մինչ այդ նա իբր թե կարծում եր, վոր հեղափոխությունը Ռուսաստանում կրսահմանափակի բուրժվական շրջանակներով, վոր իշխանությունը հետևապես պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրայի որդանի ձեռքից կանցնի բուրժվազիայի և վոչ թե պրոլետարիատի ձեռքը: Ասում են, թե այս պրագումը մուտք ե գործել նաև մեր կոմունիստական մամուլի մեջ: Յես պետք ե ասեմ, վոր այս պնդումը բուրժվին ոխալ ե, վոր նա ամենին չի համապատասխանում իրաւկանության:

Յես կարող ելի փաստ բերել Լենինի հայտնի ճառը կուսակցության III համագումարում (1905 թ.), ուր նա պրոլետարիատի և գյուղացիության դիկտատուրան, այսինքն դեմոկրատական հեղափոխության հաղթանակը, վորակեց վոչ վորպես «կարգի կազմակերպություն», այլ վորպես «պատերազմի կազմակերպություն» (տես՝ Լենինի աշխ. VI հատոր):

Յես այնուհեան կարող ելի փաստ բերել Լենինի հայտնի հոդվածները «Փամանակագոր կառավարության» մասին (1905 թ.), ուր նա պարզելով ուսւսական հեղափոխության ծավալման հեռանկարը, կուսակցության առաջադրում և հետեյալ խնդիրը՝ «պետք ե ձգտել, վոր ուսւսական հեղափոխությունը դառնա վոչ թե մի քանի ամիսների շարժում, այլ բազում տարիների շարժում, վորպեսզի նրա հետևանքը միայն բարձրագույն իշխանությունների չնշին դիջումները ըլինեն, այլ մինի այդ իշխանությունների բովանդակ տապալումը», ուր նա այսահետեւ պարզելով այդ հեռանկարը և կապելով նշան

Յեփրոպայի հեղափոխության հետ, շարունակում ե.

«Իսկ յեթե այդ հաջողվի՝ այն ժամանակ... այն ժամանակ Յեփրոպայում կըքոնկի հեղափոխության հրդեհը, բուրժվական ուսակցիայից ուժասուլառ յեփրոպական բանվորը վոտքի կըկանգնի իր հերթին և ցույց կըտա մեզ, թե «ինչպես ե կատարվում այդ», այն ժամանակ Յեփրոպայի հեղափոխական վոգեսրությունը հակադարձ ներգործություն կունենա Ռուսաստանի վրա և հեղափոխության մի քանի տարիների շրջանը կըդարձնի մի քանի տասնամյակների գարաշրջան»... (տես՝ նույնը):

Յես կարող ելի ապա փաստ բերել Լենինի 1915 թ. նոյեմբերին հրատարակած հայտնի հոդվածը, ուր նա զբում է.

«Պրոլետարիատը կովում է և պետք ե կովի անձնը վիրությամբ իշխանությունը նվաճելու, հանրապետության, հոդերի բնագրավման համար և «վոչ պրոլետարական ժողովրդական մասսաները» մասնակից գարձնելու բուրժվական մեջուսաստանի ազատագրությանը-ուազմաֆեոդական «իմպերիալիզմից» (ցարիկմից): Յեփրիզմից ու կալվածատերերի հողային իշխանությունից բուրժվական մեջուսաստանի այս ազատագրությամբ պրոլետարիատը կոդավի անմիջապես, վոչ թե ոգնելու հարուստ գյուղացիներին պայքար մղելու համար գյուղական բանվորների գեմ, այլ սոցիալիստական հեղափոխություն կատարելու՝ միացած Յեփրոպայի պրոլետարիատին» (տես՝ «Հոսանքի գեմ»):

Յես կարող ելի վերջապես փաստ բերել Լենինի «Պրոլետարական հեղափոխությունը և հավատափոխ կառագիկն» բըոշուրի մի հայտնի տեղը, ուր նա հենվելով «Յերկու տակտիկայից» բերած վերելիք մեջքերման վրա՝ ուսւսական հեղափոխության թափի մասին՝ վալիս և հետեյալ յեղբակացության:

«Պարբար յեկավ ճիշտ այնպես, ինչպես մենք ասել ելինք: Հեղափոխության բնթացը հաստատեց մեր զա-

տողության ճշտությունը։ Սկզբում «ամբողջ» գյուղացիության հետ միապետության, կալվածստերերի, միջնադարի դեմ (վորչափով հեղափոխությունը մնում է բռնքվական, բուրժվադեմոկրատական)։ Ապա ամենաաղքատ գյուղացիության, կիսապրոլետարիատի, բոլոր կեղեքվողների հետ կապիտալիզմի դեմ, գյուղական հարուստների, կուտակների և սպեկուլիանտների դեմ, վորչափով հեղափոխությունը դառնում է սոցիալիստական։ Փորձել արհեստականորեն չինական պատքաշել մեկի և մյուսի մեջ, բաժանել նրանց իրարից վոր և այլ բանով, բացի պրոլետարիատի պատրաստության և գյուղական չքափորության հետ նրա միանալու աստիաններից՝ կը լինի մարքսիզմի աղավաղումը, նրա այլանդակումը, փոխարինումը լիբերալիզմով»։

Կարծեմ բավական եւ։

Լավ, կասեն մեզ, այդ դեպքում ել ինչու յեր կովում լենինը «պերմանենտ հեղափոխության» գաղտփարի դեմ։

Վորովինեակ լենինը առաջարկում եր «սպասել» գյուղացիության հեղափոխական ընդունակություններն և ողտազործել մինչեւ ծայր նրա հեղափոխական եներզիան ցարիզը լիովին վերացնելու և պրոլետարական հեղափոխության անցնելու համար, մինչդեռ «պերմանենտ հեղափոխության» կողմանիցները չելին ըմբռնում գյուղացիության լուրջ դերը ուուական հեղափոխության մեջ, թերագնահատեցին գյուղացիության հեղափոխական եներզիայի ուժը և այդպիսով գժվարացրին գյուղացիության գործը դուրս գալու բուրժվագիայի ազգեցության առկից և համախմբվելու պրոլետարիատի շարքը։

Վորովինեակ լենինը առաջարկում եր հեղափոխության գործը պատկել պրոլետարիատին իշխանության գլուխ կարգելով, մինչդեռ «պերմանենտ» հեղափոխության կողմանիցները մտածում ելին գործը սկսել ուղղակի պրոլետարիատի իշխանությունից, չհասկանալով, վոր հենց այդպիսով նոքա աչք են զոցում այնպիսի

«չնչին» բաների վրա, ինչպիսին ձորատիրական մնացորդներն եյին և հաշվի չեն առնում այնպիսի մի լուրջ ուժ, վորպիսին ուու գյուղացիությունն ե, չհասկանալով, վոր նման քաղաքականությունը կարող է միայն կաշկանդել գյուղացիությունը պրոլետարիատի կողմը քաշելու գործը։

Հետեապես լենինը կովում եր «պերմանենտ» հեղափոխության կողմանիցների հետ վոչ թե անընդհատության ինդրի համար, վրովինեակ լենինը ինքը կանդնածեր անընդհատ հեղափոխության տեսակետի վրա, այլ պրոլետարիատի մեծագույն ոեզերվը հանդիսացող գյուղացիության գերը նրանց կողմից թերագնահատելու համար։

«Պերմանենտ» հեղափոխության գաղափարը նոր գաղափար չեւ նրան առաջին անգամ հրապարակ եւ հանել Մարքսը քառամասկան թվականների վերջին «Կոմունիստների միության» ուղղած իր հայտնի «Գիմումի» մեջ (1850 թ.)։ Այս փաստագրից ել վերցրել են մեր «պերմանենտականները» հեղափոխության անընդհատության գաղափարը։ Արժե նկատել, վոր «պերմանենտականները» վերցնելով նրան Մարքսից, մի քիչ կերպարանափոխել են և կերպարանափոխելով «փչացրել» են նրան, դարձնելով անպետք պրակտիկ գործածության համար։ Հարկավորվեց լենինի փորձված ձեռքը շտկելու համար այդ սխալը, վերցնելու Մարքսի անընդհատ հեղափոխության գաղափարը իր անսպարաց ձևով և գարձնելու նրան իր հեղափոխության տեսության անկյունագրերից մեկը։

Ահա ինչ և ասում Մարքսը անընդհատ հեղափոխության մասին իր «Գիմումի» մեջ, մի շաբք հեղափոխականնեմոկրատական պահանջներ թվելուց հետո, վորոնց նըլգաման համար նույն մասին իր գիրքները անպետք պրակտիկ գործածության համար։ Հարկավորվեց լենինի փորձված ձեռքը շտկելու համար այդ սխալը, վերցնելու Մարքսի անընդհատ հեղափոխության գաղափարը իր անսպարաց ձևով և գարձնելու նրան իր հեղափոխության տեսության անկյունագրերից մեկը։

«Այն ժամանակ, յերբ գեմոկրատական մանր բուրժվագները կիրարկելով վերոհիշյալ պահանջները հնարավորին չափ մեծ քանակով, կամենում են ավելի արագ վերը

չացնել հեղափոխությունը, մեր շահերը և մեր նպատակը կայանում է նրանում, զորպեսզի գարձնենք հեղափոխությունը անընդհատ, մինչև վոր ավելի կամ պակաս ունենալոր դաստկարգերը հեռացված կըլինեն իշխանությունից, մինչև վոր պրոլետարիատը կըգրավի պետական իշխանությունը, մինչև վոր պրոլետարիատի միությունները վոչ միայն մեկ յերկրում, այլ և աշխարհիս բոլոր տիրապետող յերկրներում կըզարգանան այն չափով, վոր մրցումը այս յերկրների պրոլետարների միջն կըզարգարի և զլխափոր արտադրողական ուժերը կըկենարունանան պրոլետարիատի ձեռքում»:

### Այլ կերպ ասած՝

ա) Մարքսը ամենին չեր առաջարկում ուկուել հեղափոխության գործը Գերմանիայում 50-ական թվականներին ուղղակի պրոլետարական իշխանությունից, հակառակ մեր ուսուական «պերմանենտականների» ծրագրի:

բ) Մարքսը առաջարկում եր սոսկ պատկել հեղափոխության գործը պրոլետարական պետական իշխանությամբ, վայր գլորելով քայլ առ քայլ իշխանության բարձրությունից բուրժվավելիքի մեկ ֆրակցիան մյուսի յետեկից, պայմանով, վոր պրոլետարական իշխանությունը ձեռք ձգելուց հետո՝ բռնկի հեղափոխությունը բոլոր յերկրներում, — վորը լի ապես համապատասխանում է այն ամենին, ինչ ուսուցել է Լենինը և ինչ նա կիրարկել է կյանքի մեջ մեր հեղափոխության ընթացքում, հետեւելով պրոլետարական հեղափոխության իր աեսությանը իմպերիալիզմի պայմաններում։

Դուքս ե զալիս, վոր մեր ուսուական «պերմանենտականները» վոչ միայն թերագնահատեցին գյուղացիության զերը ուսուական հեղափոխության մեջ, այլ և կերպանափոխեցին (դեպի վատը) մարքսյան «պերմանենտ» հեղափոխության գաղափարը, նրան պրակտիկայի համար անպետք դարձնելով։

Ահա ինչու Լենինը ծաղրում եր մեր սպերմանենտականների» տեսությունը, համարելով այն «որիգինալ» և «հիանալի» ու մեղաղբելով նրանց այն բանի մեջ, վոր չեն կամենում «մտածել այն մասին, թե ինչ պատճառների հետեանքով ամբողջ տասը տարի կյանքը հակասեց այս հիանալի տեսության» (Լենինի հոդվածը գրված 1915 թ., «պերմանենտականների» տեսությունը Ռուսաստանում հրապարակ գալուց 10 տարի հետո):

Ահա ինչու Լենինը այս տեսությունը համարում եր կիսամենշենկական, ասելով, թե նա «վերցնում է բոլշեվիկներից պրոլետարիատի վճռական հեղափոխական կովի ու նրա կողմից քաղաքական իշխանությունը գրավելու կոչը; իսկ մենշենկներից — գյուղացիության գերի «բացասաւմը»» (տես՝ Լենինի հոդվածը — «Հեղափոխության յերկու ուղղությունների մասին», «Հոսանքի գեմ» ժողովածվի մեջ):

Այսպես ե Լենինի գաղափարը բուրժվական-գեմոկրատական հեղափոխությունը պրոլետարականի վերածելու, «անմիջապես» պրոլետարական հեղափոխությանը ձեռնարկելու համար՝ բուրժվական հեղափոխությունը ողտագործելու մասին։

Շարունակենք: Առաջներում հեղափոխության հաղթանակը միայն մի յերկրի մեջ համարում ելին անհնար, կարծելով, թե բուրժվագիտային հաղթելու համար անհրաժեշտ ե բոլոր առաջավոր յերկրների կամ գոնե այդ յերկրների մեծամասնության պատկանող պրոլետարների միահամուռ հանգես գալը: Այժմ այդ տեսակետը այլիս չի համապատասխանում իրականության։

Այժմ պետք ե ընդունել նման հաղթանակի հարավորությունը, վորովինետե տարբեր կապիտալիստական յերկրների զարգացման անհամաշափ և վոստյունածե ըլուութը իմպերիալիզմի պայմաններում, դեպի անխուսափելի պատերազմները մղող ճակատագրական ներհակությունների զարգացումը իմպերիալիզմի ներսում, հեղափոխական շարժման զարգացումը աշխարհիս բոլոր յեր-

կըրներում,—այս ամենը ստեղծում են առանձին յերկր-ների համար վոչ միայն պրոլետարական հաղթանակի հնարավորություն, այլև անհրաժեշտություն:

Ըստսաստանի հեղափոխության պատմությունը այդ  
բանի անմիջական ապացույցն է։ Անհրաժեշտ է այստեղ  
միայն հիշել, վոր բուրժվագիայի տապալումը կարող է  
հաջողությամբ զլուխ դալ միայն այն դեպքում, յեթե  
զոյտթյուն ունեն մի քանի միանդամայն անհրաժեշտ  
պայմաններ, վորոնց բացակայության դեպքում իզուր  
կրկիներ մտածել պրոլետարիատի կողմից իշխանությունը  
գրավելու մասին։

Ահա ինչ եւ տառմ կենինը այդ պայմանների մասին  
իր «Մանկական հիվանդությունը» բրոշյուրում:

տությունն է նրա համար պատրաստ լինի մեռնելու, յերկրորդ՝ վորպեսզի իշխող գասահարդերը ապրեն կառավարական տափնապ, վորը քաղաքականության մեջ և քաշում անգամ ամենահետամմաց մասսաներին, ջատում և կառավարության ուժերը և ճնարավորություն ստեղծում հեղափոխականների հոմար արագորեն տապալելու նըրանք...

Սակայն, խորտակել բուրժվագիտի իշխանությանն ու  
հաստատել պրոլետարիատի իշխանությունը մի յերկրում  
տակավիճն չի նշանակում ապահովել սոցիալիզմի լիակա-  
տար հաղթանակը։ Սոցիալիզմի դիմավոր խնդիրը — սոցիա-  
լիստական արտագրության կազմակերպությանը — մնում է  
դեռ ապագային։ Կարելի յե արդյոք լուծել այս խնդիրը,  
կարելի յե արդյոք սոցիալիզմի վերջնական հաղթանակը  
ձեռք բերել մի յերկրում, առանց մի բանի առաջտվոր  
յերկրների պրոլետարների միանամուս ջանքերի վահա-  
անկարելի յե։ Բուրժվագիտին տապալելու համար բավա-  
կան է մի յերկրի ջանքերը, — այս հաստատութ և մեր  
հեղափոխության պատմությունը։ Սոցիալիզմի վերջնական  
հաղթանակի, սոցիալիստական արտագրության կազմա-  
կերպման համար մեկ յերկրի ջանքերը և հատկապես  
այնպիսի մի զյուղացիական յերկրի, վորպիսին Ռուսաս-  
տանն եւ արդեն բավական չե։ Արա համար անհրաժեշտ  
են մի քանի առաջավոր յերկների պրոլետարների ջան-  
քերը։ Այս պատճառով հեղափոխության զարգացումը և  
պաշտպանությունը մյուս յերկրներում հանդիսանում է  
հական պահանջ հաղթանակաղ հեղափոխության համար։  
Այս պատճառով հաղթանակող յերկրի հեղափոխու-  
թյունը պետք է համարե իրեն վոչ վորպես ինքնամփուփ մի  
մեծություն, այլ ինչպես ոժանդակություն, ինչպես մի-  
ջոց արագացնելու համար պրոլետարիատի հաղթանակը  
մյուս յերկրներում։

Հենինը այս միտքը արտահայտել ե յերկու խռովով  
թե հաղթանակող հեղափոխության նպատակն ե կիրար։

կել ոիըագործելիի մաքսիմումը մի յերկրում՝ հեղա-  
փոխությունը զարգացնելու, պաշտպանելու և առաջ բե-  
րելու համար բոլոր յերկրներումը (աես՝  
«Պրոլետ. հեղ.»):

Մոքա են ընդհանուր առմամբ պրոլետարական հեղա-  
փոխության լենինյան տեսության բնորոշ գծերը:

#### IV. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԱՆ.

Այս նյութից յես կըվերցնեմ յերեք հիմնական խըն-  
դիր. ա) պրոլետարիատի դիկտատուրան, վորպես գործիք  
պրոլետարական հեղափոխության. բ) պրոլետարիատի  
դիկտատուրան, վորպես պրոլետարիատի իշխանություն  
բուրժվագիայի վրա. գ) Խորհրդային իշխանությունը,  
վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև:

1. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԱՆ, ՎՈՐՊԵՍ ԳՈՐ-  
ԾԻՔ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ. — Պրոլետարա-  
կան դիկտատուրայի հարցը նախ և առաջ պրոլետարա-  
կան հեղափոխության հիմնական բավանդակության հարցն  
է: Պրոլետարական հեղափոխությունը, նրա շարժումը,  
թափը, նրա նվաճումները միս ու արյուն են դառնումը,  
միայն պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով: Պրոլե-  
տարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխու-  
թյան գործիքն ե, նրա որգանը, նրա կարևորագույն հե-  
նակեար, վոր կոչված և կյանքի նրա համար, վորպեսզի  
նախ՝ ճգմի ~~պապալված~~ շահագործողների դիմադրձու-  
թյունը, ամրապնդի իր նվաճումները, ապա հասցնի իր  
վախճանին պրոլետարական հեղափոխությունը, հասցնի  
հեղափոխությունը սոցիալիզմի կոտարյալ հաղթանակին:  
Հեղափոխությունը կարող է հաղթել բուրժվագիային,  
առապալել նրա իշխանությունը նաև առանց պրոլետա-  
րիատի դիկտատուրայի: Սակայն ջախջախել բուրժվա-  
գիայի դիմադրձությունը, պահել հաղթությունը և  
շարժվել առաջ դեպի սոցիալիզմի վերջնական հաղթանակը,  
հեղափոխությունը արդեն չի կարենա, յեթե նո չոտեղծի

իր զարգացման վարոշ առտիճանի վրա մի հատուկ որդան  
նման պրոլետարիատի զիկտատուրային, իրեն հիմնական  
նեցուկ լինելու համար:

«Հեղափոխության հիմնական խնդիրը իշխանության  
խնդիրն ե» (Լենին): Սա արդյոք նշանակում է, թե բա-  
նը վերջանում է այստեղ իշխանությունը վերցնելով,  
նրա զրագմամբ: Վոչ, այդ չի նշանակում: Իշխանության  
զրագումը - դա տակալին գործի ակիզըն է: Բուրժվա-  
զիան տապալված լինելով մի յերկրում, բազմաթիվ  
պատճառների ուժով գեռ յերկար ժամանակ մնում է  
ավելի ուժեղ իրեն տապալող պրոլետարիատից:

Այդ պատճառով ամրող գործը նրանումն է, վոր  
կարելի լինի պահել իշխանությունը, ամրապնդել նրան,  
զարձնել նրան անպարտելիու Այս նպատակին համարու  
համար ինչ է հարկավոր: Սրա համար անհրաժեշտ է ի-  
րագործել գեթ հետեւյալ յերեք գլխավոր խնդիրները, վո-  
րոնք ծառանում են պրոլետարիատի զիկտատուրայի տ-  
ուած հաղթանակի հենց հետեւյալ որբա:

ա) Զախշախել տապալված և հեղափոխության կող-  
մից եքսպրոլետիացիայի յենթարկված կալվածատերերի և  
կապիտալիստների գիմադարձությունը, չեզքացնել նը-  
րանց բոլոր և ամեն տեսակի վորձերը կապիտալի իշ-  
խանությունը վերահաստատելու համար.

բ) Կազմակերպել շինարարությունը բոլոր աշխատա-  
վորներին պրոլետարիատի շուրջը համախմբելու վոզով և  
տանել այս աշխատանքը այն ուղղությամբ, վոր նախա-  
պատրաստում է դաստկարգերի լիկվիդացիան, վոչնշա-  
ցումը.

գ) Սպառագինել հեղափոխությունը, կազմակերպել  
հեղափոխության բանակը ճակատելու համար արտաքին  
թշնամիների և իմակերիալիզմի դեմ:

Պրոլետարիատի զիկտատուրան այս խնդիրները  
կիրարելու, իրագործելու համար է:

«Անցումը կապիտալիզմից գեղի կոմունիզմ, - ա-

սում է լենինը, - մի ամրող պատմական զարաշրջան է:  
Քանի տակալին նա չի վերջացել՝ շահագործողների մեջ  
տնխուսափելիորեն հույսեր են մնում հեղաշրջման, իսկ  
այդ հույսերը այնուհետեւ փոխվում են հեղաշրջման  
փորձերի: Յեզ առաջին լուրջ պարտությունից հետո  
տապալված շահագործողները, վորոնք չեյին սպասում  
թե իրենք կարող եյին տապալվել, չեյին հավասում զը-  
րան, անզամ թույլ չեյին տալիս իրենց մտածելու այդ  
մասին, տամասապատկիված յեռանգով, կատաղի կրքուսո-  
մյամբ և հարյուրավանիկ ատելությամբ նետվում են կոմի-  
տեջ իրենցից խորած «գրախոր» յետ զարձնելու, իրենց  
բնանիքների համար, վորոնք ապրում եյին այնպիս յեր-  
շանիկ և վորոնց այժմ «որիկու սամիկ ժողովուրդը» զա-  
տապարատում է ավերման և աղքատություն (կամ թե  
«հատարակ» աշխատանիքի...): Իսկ շահագործող կաղիպատ-  
իւսների յետեից ձգվում է մանր բարժվագիտայի ըն-  
դորձուկ մասսան, վորի մտուն բոլոր յերկրների տառ-  
նյակ տարբիների պատմական վորձը վկայում է, վոր նա  
տառանվառ է և տարակուսում, այսոր գնում է պրոկե-  
տարիատի յետեից, վազը հեղաշրջման գժվարություննե-  
րից վախենում է ու առաջին իսկ անհաջողությունից կամ  
բանվորների կիսապարտությունից յենթարկվում ան ու  
սարսափի, զղայնանում, զլուխը ծեծում, վոզրում ու մի  
բանակից մյուս բանակը վազում» (աևա «Պրոլետ, հեղ.»):

Իսկ բուրժվագիտան իր հիմքերն ունի հեղաշրջման  
վորձեր անելու համար, վորովհետեւ նա իր տապալումից  
հետո տակալին յերկար ժամանակ մնում է ուժեղ իրան  
տապալող պրոլետարիատից:

«Յեթե շահագործողները չախշախիված են միայն մի  
յերկրում, - առում է լենինը, - իսկ սա ի հարկե տի-  
պիկ գեղին է, վորովհետեւ միաժամանակ հեղափոխու-  
թյունը մի շարք յերկրներում հաղվագյուտ բացառու-  
թյուն է, - առա նոքա մնում են այնուամենայնից  
ուժեղ շահագործողներից» («Պրոլետ, հեղ.»):

ինչի մեջ և տապալված բուրժվագիտայի ուժը՝  
Առաջին՝ և միջազգային կապիտալի ուժի ու բուրժվա-  
գիտայի միջազգային կապերի և ուժի ամրության մեջ («Մանկական հիվանդությունը»):

Յերրորդ՝ նրանում, վոր «շահագործողները յերկար ժամանակ հեղաշրջումից հետո անխուսափելիորեն պահպանում են մի շարք խոշոր փաստական առավելություններ, — նրանց մոտ մնում է վոր (փողերը միանգամբ վո-  
շնչացնել անկարելի յե), այս կամ տյն չափով և հաճախ մեծ շարժական գոյք, մնում են կապերը, կաղմա-  
կելուու և կառավարելու փորձը, կառավարելու բո-  
լոր «գաղտնիքների» (սովորությունների, ձեռքի, մի-  
ջացների, հսարավորությունների) ծանօթությունը, մը-  
նում է ավելի բարձր կրթությունը, մոտիկությունը  
տեխնիքական բարձր (բուրժվայորեն ապրող և մտածող)  
պերսոնալի հետ, մնում է ուսպանական արվեստի անչափ մեծ փորձը (սա շատ կարեսր ե) և այլն, և այլն» («Պրո-  
լետ. հեղ.»):

Յերրորդ՝ «սովորութիւն և մանր արտադրու-  
թյան ուժի մեջ, մանր արտադրությունը դժբաղղաբար  
մնացել և տակավին յերկրիս վրա չափաղանց շատ, իսկ  
մանր արտադրությունը ծնոււմ է կապիտալիզմ և  
բուրժվագիտ մշտագետ, ամեն որ, ամեն ժամ, տարերայ-  
նորեն և մասսայական չափով... վոչնչացնել դասակարգերը  
— կընշանակե վոչ միայն վոնդել կալվածատերերին և կա-  
պիտալիստներին, — այլ բանը մենք համեմատաբար հեշ-  
տությամբ իրազործեցինք, — վա կընշանակե նույնպես  
վոչնչացնել մանր տպրանքաբարտադրողներին,  
իսկ նրանց չի կարելի վռնդել չի կարելի ջախջա-  
խել, նրանց հետ պետք է հարմարվել, նրանց կարելի յե  
(և պետք ե) վերակազմել, վերադաստիարակել, միայն  
շատ յերկարատե, ծանր և զգոյշ կազմակերպչական  
աշխատանքով» («Մանկական հիվանդությունը»):

Անա ինչու յե կենին առում, թե՝

«Պրոլետարիատի դիկտատորան նոր գասակարգի  
ամենանձնութաց և ամենանողոք պատերազմն և ավե-  
լի հզոր թշնամու՝ բուրժվագիտայի դեմ, վորի դիմագար-  
ձությունը առանողապահում և նրա առագակումը, թե՝  
ու պրոլետարիատի դիկտատորան համառ կոխի են տ-  
րյունանեղ և անարյուն, բոնի և խաղաղ, սուբմական և  
անահսական, մանկավարժական և վարչական՝ հին հասա-  
րակության ուժերի և արագիցիաների դեմ» («Մանկ.  
հիվանդությունը»):

Ավելորդ ե աղացուցել, վոր այս խնդիրները կործ  
ժամանակամիջնոցում, մի քանի տարիների ընթացքում  
իրազործելու վոչ մի հսարավորություն չկա: Այդ պատ-  
ճառով պրոլետարիատի դիկտատորան և անցումը կապի-  
տալիզմից կումունիզմ պետք ե դիտել վոչ վորպես «հե-  
ղափոխական» մի շարք ակտերի և գերեաների վաղան-  
ցուկ մի ժամանակաշրջան, այլ վորպես պատմական մի ամ-  
բողջ գարաջրջան, լիբը քաղաքացիական պատերազմներով  
և արտաքին բախումներով, համառ կաղմակերպչական  
աշխատանքով և անտեսական շինարարությամբ, հարձա-  
կումներով և հաճանջներով, հաղթանակներով և պարտու-  
թյուններով: Այս պատմական դարաշրջանը անհրաժեշտ է  
վոչ միայն նրա համար, վորպեսզի կարելի լինի ստեղծել  
սոցիալիզմի լիակատար հաղթանակի անտեսական և կուլ-  
տուրական նախագրյաներ, այլ և նրա համար, վորպեսզի  
հսարավորություն տրվի պրոլետարիատին առաջին՝ զա-  
տիքարակել և փորձել վորպես յերկիրը կառավարելու  
բնորունակ մի ուժ և յերկրորդ՝ վերակրթել և վերակազ-  
մել մանր բուրժվական խափերը, ապահովելու նպատակով  
սոցիալիստական արտադրության կազմակերպման գործը:

«Դուք, — առում եք Մարքսը բանվորներին, — պետք ե  
ապրեք քաղաքացիական և միջազգային պատերազմների  
15, 20, 50 տարիներ վոչ միայն նրա համար, վորպեսզի  
փոփոխեք հարաբերությունները, այլ և նրա համար, վոր-  
պեսզի փոփոխեք ինքներդ ձեզ և ընդունակ

դասնաք քաղաքական տիրապետության համար» (Մարքսի և Ենգելսի աշխատաձու, համար III):

Շարունակելով զարգացնել այնուհետև Մարքսի այդ զաղաքարը՝ և նինը զբուժ է:

«Պոլիետարիատի զիկտատուրայի ժամանակ պետք է վերակրթել միլիոնավոր զյուզացիներին, մասն անահետառերին, հարյուր հազարավոր ծառայողներին, պաշտոնյաներին, բուրժվական մասվարականներին, պետք է յինթարկել նրանց բոլորին պրոլետարիատի պիտությանը և զեկավարությանը, հաղթահարել նրանց մեջ զոյտություն անեցող բուրժվական սովորություններն ու ավանդությունները», այնպես, ինչպես փոր անհրաժեշտ կրինի «...վերակրթել պրոլետարիատի զիկտատուրայի շրջանում յերկարատև մաքառման ճանապարհով և իրենց՝ պրոլետարներին, փորոնք սեփական մասն բուրժվական նախապաշտունքներից չեն կարող ազատվել միանդամից, փոչ հրաշքով, փոչ առտվածմասը հրամանով և փոչ խոկ լուսնովի, բանաձիր և զեկրեատի թելազրանքներով, այլ մղելով յերկարատև և ծանր մասսայական պայքար մասն բուրժվական մասսայական ազգեցությունների վեմ» («Մանկ, հիվանդությունը»):

2. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ, ՎՈՐՊԵՍ ՊՐԱԼԵՏԱՐԻԱՏԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻ ԲՈՒՐԺՎՅՈԶԻԱՅԻ ՎՐԱ. — Ասածներից արդեն պարզ է, փոր պրոլետարիատի զիկտատուրան անձնավորությունների հասարակ փոփոխություն չե կառավարության մեջ, «կարինետի» փոփոխություն և այն, թողնելով անձեռնմխելի հին անահետառեան և քաղաքական կարգերը:

Բոլոր յերկրների մեջ կիրակներն և ոպուրայունիստները, փորոնք վախենում են զիկտատուրայից, ինչպես կրակից և վախենալուց զիկտատուրա հասկացողությունը փոխարինում են «գրավումն իշխանության» հասկացողությունը, սովորաբար «իշխանության գրավումը» դարձնում են «կարինետի» փոփոխություն, իշխանության գլխին նոր

մինիստրություն կարգելու խնդիր այնպիսի մարդկանցից, ինչպիսին Շեյզեմանն ու Նուկեն և, Մակդոնալդն ու Գենդերսոնը: Բացատրելու կարիք չկա, փոք կարինետի այսպիսի և սոցա նժան փոփոխությունները վոչ մի ընդհանուր բան չունեն պրոլետարիատի դիկտատուրայի հետ, իսկական իշխանությունը իսկական պրոլետարիատի ձեռքով զրագելու հետ:

Իշխանության գլխին կանգնած Մակդոնալդներն ու Շեյզեմանները և նրանց այսպես կոչված կառավարությունները, թողնելով հին բուրժվական կարգերն անձնումինի, ուրիշ բան չեն կարող լինել բացի բուրժվագիտայի ձեռքին ոժանդակ ապարատ լինելուց, բացի իմադերիտիզմի խոցերը շղարշող քող զառնալուց և ճնշվող ու հարստահարվող մասսաների հեղտվորական շարժման զեմքուրժվագիտայի ձեռքին գործիք ծառադիր ծառադիր ծառադիր: Նոքա, այդ կառավարությունները, կապիտալին պետք են փորպես շիրմա, յերր նրա համար անհարմար է, ձեռնատ չե, զրժվար և ճնշել և կեղեքել մասսաներին առանց շիրմայի Անշտաշտ, նման կառավարությունների յերեան գալը ցույց և տալիս, փոր «նրանց մոտ այնահեղ» (այսինքն կապիտալիստների մոտ), «Շիպկայի վրա» հանգիստ չե, բայց չնայելով զրան այդ տեսակի կառավարություններն անխոսափելիորեն մնում են կապիտալի շպարզած կառավարություններ: Մակդոնալդի և Շեյզեմանի կառավարությունից մինչե պրոլետարիատի ձեռքով իշխանության գրավումը նույնքան հեռու յի, վորչափ յերկինքը յերկրից: Պրոլետարիատի զիկտատուրան կառավարության փոփոխություն չե, այլ նոր պետություն, կենարունի և շրջանների իշխանության նոր որդաններով, պրոլետարիատի պետություն, փոր ստեղծվել և հին պետության, բուրժվական պետության վլատակների վրա:

Պրոլետարիատի զիկտատուրան ստեղծվում և վոչ թե բուրժվական կարգերի շրջանում, այլ նրանց ջախջախման ընթացքում, բուրժվագիտային տապալելուց հետո, կարված-

տերերին և կապիտալիստներին եքսպրոպրիացիայի, իսկ արտադրության հիմնական գործիքներն եւ սիջոցները սուցիալիզացիայի յենթարկելու և պրոլետարիատի բռնի հեղափոխության ընթացքում։ Պրոլետարիատի դիկտատուրան հեղափոխական իշխանություն եւ, վոր հենվում է բուրժուազիայի վերաբերմամբ գործադրվող բռնության վրա։

Պետությունը տիրող գասակարգի ձեռքում մի մեքենայ յեւ վոչնչացնելու համար իր գասակարգային հակառակորդների գիտագրածությունը։ Այս տեսակ է տից պրոլետարիատի դիկտատուրան ըստ եյտիթյան վոչնչով չի տարբերվում բոլոր այլ գասակարգերի գիտատուրայից, վորովհետեւ պրոլետարական պետությունը մի մեքենա յեւ բուրժուազիային ճգմելու համար Բայց այսուղ մի եւ ական տարբերություն կա։ Այդ տարբերությունը կայտնում է նրանում, վոր բոլոր մինչեւ այժմ գոյություն ունեցած գասակարգային պետությունները հանդիսանում եյին շահագործող փոքրամասնության գիտատուրան շահագործվող մեծամասնության վրա, մինչդեռ պրոլետարիատի դիկտատուրան շահագործող մեծամասնության դիկտատուրան է շահագործվող փոքրամասնության վրա։

Կարձակ պրոլետարիատի դիկտատուրան որենքով անսահմանափակ է բռնության վրա հենց վոր պրոլետարական իշխանությունն եւ բուրժուազիայի վրա, մի իշխանություն, վոր վայելում է աշխատավորների և շահագործվող ժամանական երի համակրանքն ու պաշտպանությունը («Պետություն և հեղափոխություն»)։

Սրանից ըդհում է յերկու հիմնական յեկարակացություն։ ԱՌԱՋԻՆ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. — Պրոլետարիատի դիկտատուրան չի կարող լինել «լիակատար» գեմոկրատիա, գեմոկրատիա ամենքի համար, և հարուստների, և աղքաների համար հավասարապես։ Պրոլետարիատի դիկտատուրան «պետք է լինի նոր տեսակի գեմոկրատական պետություն, — պրոլետարիատի և

ընդհանրապես ընչազուրկների համար ու նոր տեսակի դիկտատություն, պետություն, — բուրժուազիայի գեմ»... («Պետություն և հեղափոխություն»), Կառցկու և ընկերության խոսակցություններն ընդհանուր հավասարության, «անխառն» և «խակական» գեմոկրատիայի մասին և այլն բուրժուազիան քողարկումն եւ այն անժխտելի փաստի, թե հավասարություն շահագործողների և շահագործվողների միջև անկարելի յեւ։

«Մաքուր» գեմօկրատիայի տեսությունը բանվոր գասակարգի վերինների տեսությունն եւ, վորոնք իմպերիալիտական կողապտիչների ձեռնասուններն են, նրանցից կաշառվածները։ Նա կոչված է կյանքի պարտակելու կապիտալիզմի խոցերը, շպարելու իմպերիալիզմը և նրան բարոյական ուժ ներչնչելու՝ շահագործվող մասսաների գեմ կովելու համար։ Կապիտալիզմի ժամանակ չեն լինում և չեն կարող լինել շահագործվողների համար իրական «ազատությունները», թեկուղ հենց այն պատճառով, վորշենքերը, տպարանները, թղթի պահեստները և այլն, վորոնք անհրաժեշտ են «ազատությունները» ոգտագործելու համար, կազմում են շահագործողների մենաշնորհ։ Կապիտալիզմի ժամանակ չի լինում և չի կարող լինել շահագործվող մասսաների իրական մասսակցություն յերկիրը կառավարելու գործին, թեկուղ հենց այն պատճառով, վոր ամենազեմոկրատական կարգերի ժամանակ, կապիտալիզմի պայմաններում, կառավարությունները նշանակվում են վոչ թե ժողովրդի, այլ Բուաչիլդների և Ստինենների, Բուկֆելերների և Մորգանների կողմից։ Դիմոկրատիան կապիտալիզմի ժամանակ կապիտալիզմի առաջի ալիս տական դիմոկրատիա յեւ, շահագործվող փոքրամասնության դիմոկրատիա, վոր հենվում է շահագործվող մեծամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված է այդ մեծամասնության դիմ։ Միայն պրոլետարական դիկտատուրայի ժամանակ հնարավոր և իրական «ազատություններ» շահագործվողների համար և պրոլետարների ու գյուղացիների իրական մասսակցություն յերկիրը կառավա-

բելու գործին: Դեմոկրատիան պրոլետարիատի գիկտատուրայի ժամանակ պը ոլեա տարտկան զեմոկրատիայի շահագործվող մեծամասնության զեմոկրատիա, վորհենվում ե շահագործող փոքրամասնության իրավունքների սահմանափակման վրա և ուղղված ե այդ փոքրամասնության դեմ:

**ՅԵՐԿՐՈՐԴ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.** — Պրոլետարիատի գիկտատուրան չի կարող ծնվել բուրժվական հասարակության և բուրժվական զեմոկրատիայի խաղաղ գարզացման հետևանքով, — նա կարող է ծնվել սոսկ բուրժվական պետականության մեքենայի, բուրժվական զօրքի, բուրժվական պաշտոնեան թյան առաջարարականության հատուկիանության ջախջաման հետևանքով:

«Յանվոր գասակարգը չի կարող պարզապես զրովել պատրաստի պետական մեքենան և նրան զործի զնել իր սեփական նպատակների համար» , — ասում են Մարքսն ու Էնդելու «Քաղաքացիական պատերազմի» հաստիքանում , պրոլետարական հեղափոխությանը պետք է «...մի ձեռքից մյուս ձեռքը չհանձնի բյուրոկրատական» սադմական մեքենան, ինչպես այդ աեզի յեր ունենում չայժմ, այլ պետք է կոտրի նրան... — Այս նախնական պայմանը ամեն մի ճշմարիտ ժողովրդական հեղափոխության, նախնական ոլայմանը կանոնինատի վրա», — ասում ե Մարքսը 1871 թվին Կողելմանին գրած իր նամակի մեջ:

Մարքսի սահմանափակող զարձվածքը կանոնինատի մասին, առիթ ամեց լոլոր յերկրների ոպորտյունիսամերին և մենշեփեներին պառակ, թե Մարքսը հետեապես հարրավոր ե համարում բուրժվական զեմոկրատիայի խաղաղ գարզացումն և անցումը պրոլետարական զեմոկրատիային համենայն զեպս մի քանի յերկրների համար, վորոնք չեն մանում Յելլոպական կոնտինենտի կազմի մեջ (Անգլիա, Ամերիկա), Մարքսն իսկապես ընդունում եր նման հնարափորությունը և նու հիմք ուներ այդպիսի

յենթագրություն անելու անցած դարի 70-ական թվականների Անգլիայի և Ամերիկայի վերաբերյալ, յերբ զես ևս գոյություն չուներ մանուպուտական կապիտալիզմն ու իմպերիալիզմը և չկար այդ յերկրներում, նրանց զարգացման հատուկ պայմանների շնորհիվ, զարգացած զինվորականություն և բյուրոկրատիզմ: Դրությունն այսպես եր մինչև զարգացած իմպերիալիզմի յերեան գալը: Բայց հետո, 30-40 տարի անց, յերբ զործերի զրությունն այս յերկրներում արմատապես փոխվեց, յերբ իմպերիալիզմը զարգանալով կլանեց առանց բացառության բոլոր կապիտալիստական յերկրները, յերբ զինվորականությունը ու բյուրոկրատիզմը յերեան յեկան նաև Անգլիայում և Ամերիկայում անհետացան, — սահմանափակումն այդ յերկրների նկատմամբ պետք է վերանար ինքն բառ ինքյան: 

«Եյմ, — ասում ե Լինինը, — 1917 թվին, առաջին մեծ իմպերիալիստական պատերազմի զարաշրջանում Մարքսի այս սահմանափակումը վերանում է մեջ աեզից: և Անգլիան, և Ամերիկան՝ զինվորականության և բյուրոկրատականության բացակայության տեսակետից ամենախոշը և վերջին ներկայացուցիչներն անգլո-սաքսոնական «ազատության» ամբողջապես զլորվեցին բյուրոկրատական սազմական հիմնարկությունների համակըրութական կեզառ և արյանուս ձահիճը, հիմնարկություններ, վորոնք ամեն ինչ յենթարկում են իրենց, ամեն ինչ ձնչում իրենց ցով: Այժմ թե Անգլիայում և թե Ամերիկայում շամեն մի ճշմարէտ ժողովրդական հեղափոխության նախնական պայմանը» հանդիսանում է «պատրաստված 1914—1917 թվականներին, մինչև «յելլոպական» համակմպերիալիստական կատարելությունը» պետական մեքենայի խորտակումը և կործանումը» («Պետություն և հեղափոխություն»):

Այլ կերպ ասած, պրոլետարիատի բռնի հեղափոխու-

թյան որենքը, բուրժվական պետական մեքենայի խոր-  
տակման որենքը, վարպետ նախնական պայմանն այդողի-  
սի հեղափոխության, դառնում եւ աշխարհիս իմպերիա-  
լիստական յերկրների հեղափոխական շարժման անխո-  
ռափելի որենքը:

Ի հարկե, հեռավոր ապագայում, յերբ պրոետարիա-  
տը կը հաղթի կապիտալիզմին ամենանշանավոր յերկրնե-  
րում և յերբ ներկայիս կապիտալիստական շրջապատը կը  
փոխվի սոցիալիստական շրջապատի, այդ պարագաներում  
միանգամայն հնարավոր և զարգացման «խաղաղ» ըն-  
թացքը մի քանի կազմակիստական յերկրներում, ուր  
կապիտալիստները միջազգային «անբարեհաջող» հանգա-  
մանքների հետեւանքով նպատակահարմար կը գտնեն «հո-  
գածարկամ» կերպով մի շարք լուրջ զիջումներ անել պրո-  
լետարիատին: Բայց այս յենթագրությունը վերաբերում է  
լոկ հեռավոր և հնարավոր ապագային: Մոռավոր ապա-  
գայի համար այս յենթագրությունը չունի պարզապես  
և վոչ մի հիմք:

Ուստի Ենինը իրավացի յե, յերբ ասում ե.

«Պրոլետարական հեղափոխությունը հնարավոր չե-  
տուանց բուրժվական պետական մեքենայի բռնի խոր-  
տակման և առանց նրան նոր մեքենայով փոխարինելու»  
(«Պրոլետարական հեղափոխություն»),

3. ԽՈՐՀԾԴԱՅՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐԳԵՍ ՊՐՈ-  
ԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԶԵՒ. — Պրոլետա-  
րիատի դիկտատուրայի հաղթանակը բուրժվագիտայի շախ-  
ջախումն և, բուրժվական պետական մեքենայի խորսո-  
ւումը, բուրժվական զեմոկրատիայի փոխարինումն պրո-  
լետարական զեմոկրատիայով: Սա պարզ է: Բայց վորոնք  
են այն կազմակերպությունները, վորոնց ողնությամբ  
կարելի յե իրագործել այս հսկայական աշխատանքը: Վոր  
պրոլետարիատի կազմակերպության ըն ձեւը, վորոնք  
զարդարել են բուրժվական պարլամենտարիզմի շրջանում,  
այսպեսի մի աշխատանքի համար անբավարար են՝ դրա

մասին գմբար թե կարելի լինի կառկածել:

Վորոնք են պրոլետարիատի կազմակերպության այն  
նոր ձեւը, վոր ընդունակ են խաղալու բուրժվական  
պետական մեքենայի գերեզմանափորի դեր, ընդունակ են  
վոչ միայն խորտակելու այդ մեքենան և վոչ միայն փո-  
խարինելու բուրժվական զեմոկրատիան պրոլետարական  
զեմոկրատիայով, այլ և հիմք դառնալու պրոլետարական  
պետական իշխանության:

Պրոլետարիատի կազմակերպության այս նոր ձեւը  
խորհուրդներն են:

Ինչի մեջ և կայանում խորհուրդների ուժը կազմա-  
կերպության հին ձեւերի հետ համեմատած:

Նրանում, վոր խորհուրդները պրոլետարիատի ամե-  
նից շատ հանրաքաղաքական կազմակեր-  
պություններն են հանդիսանում, վորովհետեւ նոքա և  
միայն նոքա յեն, վոր իրենց մեջ են առնում բոլոր բան-  
փորներին առանց վորե և բացառության:

Նրանում, վոր խորհուրդները միակ մասսայական  
կազմակերպություններն են, վորոնք ընդունելում են բո-  
լոր ճաշգաներին ու կեղեգվաճներին, բանվորներին և  
գյուղացիներին, զինվորներին և նավասահներին և ուր  
այդ պատճառով մասսաների պայքարի քաղաքական դե-  
կավարությունը մասսաների առջապահի՝ պրոլետարիա-  
տի ձեւով կարող և իրագործվել ավելի հեշտ և լիակա-  
տար ձեւով:

Նրանում, վոր խորհուրդները հանդիսանում են մաս-  
սաների հեղափոխական կովի, քաղաքական ընդունելու-  
թի և ապատամբությունների հզորագույն որդանու-  
ները, ընդունակ խորտակելու ֆինանսական կազմակա-  
լի և նրա քաղաքական արբանյակների ամենակարսղ  
ուժը:

Նրանում, վոր խորհուրդները հանդիսանում են հենց  
իրենց մասսաների անմիջական կազմակերպություններն,  
այսինքն ամենազեմոկրատականը և, կընշանակի, ամե-

նահեղինակավրը մասսաների համար, վոր գերազույն չափով դյուրացնում են նրանց մասնակցությունը նոր պետության կարգավորման և նրա կառավարման գործին և թոփշք հազորդում մասսանների հեղափոխական եներգիային, նախաձեռնությանը և ստեղծագործական ընդունակություններին հին կենցաղակերպը կործանելու և նոր պրոլետարական կենցաղակերպ ստեղծելու համար:

Խորհրդային իշխանությունը տեղական խորհուրդների մեջունն ու կերպավորումն եւ մի ընդհանուր պետական կազմակերպության՝ պրոլետարիատի պետական կազմակերպության մեջ, վորպես առաջապահը ձնշված և կեղեգված մասսաների և վորպես իշխաղ դասակարգը, — միությունը Խորհրդադների Հանրապետության մեջ:

Խորհրդային իշխանության եյտթյունը կայանում է նրանում, վոր հենց կապիտալիստների ու կարգածառերի ձեռքով հարստանարգած դասակարգերի ամենից շատ մասսայական և ամենից շատ հեղափոխական կազմակերպություններն են, վոր այժմ հանդիսանում են ամշտական և միակ հենակետը ամբողջ պետական իշխանության և պետական տպարատի համար, վոր «հենց այն մասսաները, վորսնք ամենազեմուկան հանրապետություններում անգամ», լինելով ըստ որենքի իրավահավասար, «իրականության մեջ զանազան միջոցների և մեքենայությունների սպնությամբ հեռացվում ելին քաղաքական կյանքի մասնակցությունից և գեմուկրատական իրավունքներն ու ազատություններն ողագործելուց՝ ներկայում մզգում են մշտական, անտրպեկ և վճռուղական մասնակցության պետության գեմուկրատական կառավորության մեջ» (Լենինի աշխատությունների ԽVI. բղ. հասոր):

Այս ինչու Խորհրդային իշխանությունը հանդիսանում է պետական կազմակերպության նոր ձեւ, սկզբունքը ուղղել է ին բուրժուատական և պարամետրական ձերբից, պետության մի նոր տիպ, վոր հար-

մարեցրված և վոչ թե աշխատավոր մասսաների կեղեքման և ձնշման նպատակներին, այլ նրանց լիակատար ազատության պահանջներին ամեն տեսակի ձնշումներից և հարստանարություններից, պրոլետարիատի դիկտատուրայի պահանջներին:

Լենինը ճիշտ և ասում, թե Խորհրդային իշխանության յերեան գալով «բուրժուատական պարլամենտարիզմի գարաշըանը վերջանում է և սկսվում է համաշխարհային պատմության նոր զրագոլ՝ պրոլետարական դիկտատուրայի գարաշըանը»:

Ինչի՞ մեջ և կայանում Խորհրդային իշխանության ընորոշ զծերը:

Երանում, վոր Խորհրդային իշխանությունը դասակարգերի գոյության պայմաններում ամեն տեսակի պետական կազմակերպություններից ամենից շատ մասսայական և գեմուկրատական պետական կազմակերպությունն ե, վորովհետեւ նա լինելով բանվորների և շահագործվող գյուղացիների շաղկապի և համագործակցության ասպարեզը շահագործակցների գեմ մզգուղ պայքարում և հենվելով իր աշխատանքների մեջ այս շաղկապի և համագործակցության վրա՝ հենց զրանով ել հանդիսանում և բնակչության մեծամասնության իշխանությունը փոքրամասնության վրա, ոյդ մեծամասնության պետությունը, նըրա դիկտատուրայի արտահայտությունը:

Երանում, վոր Խորհրդային իշխանությունը դասակարգային հասարակության բոլոր տեսակի պետական կազմակերպություններից ամենից շատ ինտերնացիոնալիստականն ե, վորովհետեւ նա վոչնչացնելով ամեն ձեր ազգային ձնշումները և հենվելով տարբեկ ագրությունների աշխատավորական մասսաների զարծակցության վրա, հենց այդպիսով ել հեշտացնում և այդ մասսաների միավորվելը մի միացյալ պետական միության մեջ:

Երանում, վոր Խորհրդային իշխանությունը հենց իր կառացվածքով հեշտացնում և ձնշված և հարստանարգած

մասսաների զեկավարության գործը այդ մասսաների առաջապահի՝ պրոլետարիատի ձեռքով, փորպես խորհրդների տռավել զիտակից և միախմբված կորիզը:

«Ճնշված գասակարգերի բոլոր շարժումների փորձը, — առում ե Լենինը, — համաշխարհային սոցիալիստական շարժման փորձը սովորեցնում է մեզ, փոք միայն որովհատիատին և վերապահված միախմբելու աշխատավորության և շահագործվող բանփորության ցրված և հետամնաց խափերը և առնելու նրանց իր յետեկից» (Լենինի աշխ. XV հատոր): Խորհրդային իշխանության կառուցվածքը հեշտացնում է այդ փորձից ըզիսդ ցուցմունքների կիրարկումը կյանքում:

Նրանում, փոք Խորհրդային իշխանությունը միացնելով օրենսդրական և կատարողական իշխանությունները մի միացյալ պետական կազմակերպության մեջ և փոխարինելով տերրիտորյալ ընտրական շրջաններն արտադրական միավորներով՝ գործ արաններով և ֆարբիկաներով, — անմիջականորեն կապում ե բանվարական և ընդհանրապես աշխատավորական մասսաներին պետական կառավարության ապարատների հետ, սովորեցնում է նրանց կառավարելյերկիրը:

Նրանում, փոք միայն Խորհրդային իշխանությունն և ընդունակ ազատելու բանակը բուրժվական հրամանատարությանը հպատակվելուց և դարձնելու ժողովրդի ճնշման գործիր բանակը (վորպիսին և նա բուրժվական կարգերում), ժողովրդի ազատության բանակը սեփական և ստար բուրժվագիայի լծից:

Նրանում, փոք «միայն պետության խորհրդային կազմակերպությունը կարող է կործանել միանգամից և վերջնականապես հին, այսինքն բուրժվաչինովնիկական և դատարանական ապարատը» (տես՝ նույնը):

Նրանում, փոք միայն խորհրդային վարչածեր, փոք ապահովում ե աշխատավորների և շահագործողների կազմակերպությունների մշտական և անպայմանական մաս-

նակցությունը պետական կառավարության մեջ, ընդունակ ե նախավարապետությունը պետականության այն մահր, փորը հանդիսանում է մեկը ապագա անպետություն կոմունիստական հասարակության հիմնական տարրերից:

Խորհրդների Հանրապետությունը այսպիսով այն վորոնված և վերջապես զանված քաղաքական ձեն ե, փոքի շրջանակներում պետք ե աեղի ունենալ պրոլետարիատի մնականական ազատազրությունը, սոցիալիզմի լիակատար հաղթանակը:

Փարիզի Կոմունան այս ձեր սաղմն եր: Խորհրդային իշխանությունը՝ նրա զարգացումը և կատարելու թյունը՝ Ահա ինչու Լենինն առում է, թե՝

«Բանվորների, Զինվորների և Գյուղացիների Խորհրդների Հանրապետությունը փոչ միայն դեմոկրատական հիմնարկությունների ամենից բարձր տիպն է, այլ և միակ ձեր, փոք ընդունակ է ամենից շատ ազանովելու խոզադ անցումը գեպի սոցիալիզմ» («Թեղիսներ Սահմանադիր Ժողովի մասին»):

V. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ.

Այս նյութից յես կը վերցնեմ չորս խնդիր. ա) հարցադրություն, բ) զյուղացիությունը բուքժվագիտական հետական հեղափոխության ժամանակ, գ) զյուղացիությունը պրոլետարական հեղափոխության ժամանակ, դ) զյուղացիությունը Խորհրդային իշխանությունը հոգածառիւց հետո:

1 ՀԱՐՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ.—Վոճանք կարծում են, թե հիմնականը լենինիզմի մեջ—զա զյուղացիական խնդիրն ե, թե լենինիզմի յելակեար զյուղացիության, նրա դիրի, նրա տեսակարար կշռի ժաման յեղած խնդիրն ե։ Առ միանգամայն սխալ ե։ Լենինիզմի հիմնական խնդիրը, նրա յելակեար վոչ թե զյուղացիական խնդիրն ե, այլ պրոլետարիատի դիկտատորայի ու նրա նվաճման և ամրապնդման պայմանների խնդիրը։ Գյուղացիական խնդիրը պրոլետարիատի գաշնակցի խնդիրը լինելով իշխանության համար նրա մղած պայքարում, —հանդիսանում ե յերկրորդական խնդիր։

Այս հանդամանքը սակայն չի գրկում նրան ամենին այն լուրջ և կենսական նշանակությունից, վոր նա անկանած ունի պրոլետարական հեղափոխության համար։ Հայտնի յե, վոր զյուղացիական խնդիրը սկսեց լուրջ մրցակման առարկա դառնալ սուսական մարքսիսմների շրջանում հենց առաջին հեղափոխության նախորդակին (1905 թ.), յերբ ցարիզմի տապալման և պրոլետարիատի գերիշխանությունը իրականացնելու խնդիրն իր ամբողջ հասակով կանգնեց կուսակցության առաջ, իսկ պրոլե-

տարիատի դաշնակցի խնդիրը առաջիկա բուրժվական հեղափոխության համար ընդունեց կենսական ընույթ։ Հայտնի յե նույնպես, վոր գյուղացիական խնդիրը մուսատանում ավելի ակտուալ ընույթ ստացավ պրոլետարական հեղափոխության ժամանակ, յերբ պրոլետարիատի դիկտատորայի, նրա նվաճման և պահպանության խնդիրը առաջ բերեց պրոլետարիատի և առաջիկա պրոլետարական հեղափոխության դաշնակցի խնդիրը։ Դա շատ հասկանալի յե, ով ձգտում ե և պատրաստվում իշխանության՝ նա չի կարող չնետաքրքրվել իր իրական դաշնակիցների խնդրով։

Այս ահսակետից զյուղացիական խնդիրը պրոլետարիատի դիկտատորայի ընդհանուր խնդրի մի մասն և և վորպես այդպիսին՝ մեկը լենինիզմի ամենակենսական խնդիրներից։

11 Ինտերնացիոնալի կուսակցությունների անուարը և ազգակի բացառական վերաբերմունքը դրույցի ական խնդրին միայն Արևմտարի գարգացման առանձնահատուկ պայմաններով չի բացատրվամ։ Նա բացատրված է ամենից առաջ նրանով, վոր այդ կուսակցությունները չեն հագտառմ պրոլետարիատի դիկտատորային, վախենում են հեղափոխությունից և չեն մտածում տանել պրոլետարիատին դեպի իշխանություն։ Իսկ ով վախենում է հեղափոխությունից, ով չի կամենում պրոլետարներին դեպի իշխանություն առաջնորդել՝ նա չի կարող հետարրիքը պրոլետարիատի հեղափոխական գաշնակիցների խնդրով։ Նրա համար գաշնակիցների խնդիրն անհետարրիքի և վոր ակտուալ խնդիրներից ե։ 11 Ինտերնացիոնալի հերանների հեղնական վերաբերմունքը զեպի գյուղացիական խնդիրը համարվում և նրանց մոտ լավ տոնի, «խկական» մարքսիզմի նշան։ Հիրավի, այսուղ մի զբան մարքսիզմ չկա, վորովհետեւ սնտարբերությունը զեպի այնպիսի մի կարենը խնդիրը, վորպիսին գյուղացիական խնդիրն ե, պրոլետարական հեղափոխության նա-

խորյակին՝ պրոլետարիատի դիկտատուրայի ժխտման հակառակ յերեսն ե, մարքսիզմի հանդեպ ուղղակի դավաճանության անյերկը այսպահանջման:

Հարցը այսպես է դրված. սպառված են տրվեն  
գյուղացիության ծոցում ծածկված հեղափոխական հնա-  
րավորությունները նրա գոյաթյան հայտնի պայմաննե-  
րի հետ հանքով—թե՞ չե, և յեթե սպառված չեն, կտ  
հույս, հիմք ուստագործելու այդ հնարավորությունները  
պրոլետարական հեղափոխության համար, զյուղացիու-  
թյունը, նրա շահագործվող մեծամասությունը, վոր Ա-  
րիմուաքի բուրժվական հեղափոխությունների ժամանակ  
ծառայում եր և շարունակում ե ծառայել բուրժվագիտայի  
ոեզերվը, դարձնելու պրոլետարիատի սեզերվը, նրա դաշ-  
նակիցը:

Ենինիդմը այս հարցին զբական պատասխան եւ տալիս. այսինքն ընդունում է զյուզացիության մեծամասնության շարքերում հեղափոխական ընդունակությունների գոյությունը և պրոլետարական դիկտատուրայի շահերի համար նոցա ոգտագործելու հնարավորությունը:

Ռուսաստանի յերեք հեղափոխությունների պատմությունն ամբողջովին հաստատում է լենինիզմի յեղբակացություններն այս մասին:

Այսաեղից հանում ենք այն գործնական յեզրակացությունը, թե պետք է պաշտպանել պարապլիված կերպով պաշտպանել զյուզացիության աշխատավորական մասսաները կովելու ճարառության, կեղեքման դեմ, ոչ զատկելու համար ճնշումներից և չքափորությունից։ Առ չի նշանակում, ի հարկե, թե պըութարքատը պետք է պաշտպանի ամեն առաջ կի զյուզացիական շարժումը։

Խոսքն այսաեղ գյուղացիության այնպիսի շարժման  
և այնպիսի կովի պաշտպանության մասին ե, վորոնք  
հեշտացնում են ուղղակի կամ անուղղակի կերպով պըստ-  
տարիատի ազատագրական շարժումը, վորոնք այսպես  
կամ այնպես ջուր են ածում պըտեաթական հեղափոխու-

թյան ջրաղացին, վորոնք սժանդակում են դարձնելու պյուղացիությունը բանվոր գաստիլաբզի սեղերվը և զաշնակիցը:

2. ԳՅՈՒՂԱՑԻԹՅՈՒՆԸ ԲՈՒՐԺՎԱ. ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ. — Այս շրջանն ընդունված է պատական առաջին հեղափոխությունից (1905 թ.) սկսած մինչև յերկրորդ հեղափոխությունը (1917 թ. փետրվար) ներտոյալ — ժամանակամիջոցը. Այս շրջանի բնորոշ գիծը զյուղացիության կողմից լիբերալ բուրժվազիայի ազգեցությունը թոփափելու փասոնն ե, զյուղացիության հեռանալը կազեաներից, նրա շրջումը պրոլետարիատի, բոլշևիկական կուսակցության կողմը. Այս շրջանի պատմությունը կազեաների (լիբերալ բուրժվազիա) և բոլշևիկների (պրոլետարիատ) պայքարի պատմությունն ե զյուղացիությունը զրավելու համար. Այդ պայքարի ճակատագիրը վճռեց զումայական շրջանը, զօրովհետեւ չորս Դամաների շրջանը զյուղացիության համար տարիկայական զառ ծառայեց. նա ակներեւ կերպով ցույց տվեց զյուղացիության, վոր կազեաների ձևորից նա չի ստանա վոչ հոգ, վոչ ազատություն, վոր ցարը ամբողջապես կալվածատերերի կողմն ե, իսկ կաղեաները պաշտպանում են ցարին, վոր միակ ուժը, վորի ոգնությանը կարելի յե առավիճակը — դա քաղաքային բանվորությունն ե, պրոլետարիատը. Իմալերիալիստական պատերազմը միայն հաստատեց Դումայի ժամանակաշրջանի դասը, վերջնականապես բաժանելով զյուղացիությունը բուրժվազիայից և վերջնականապես մեկուսացնելով լիբերալ բուրժվազիային, վորովհետեւ պատերազմի արիները ցույց տվին, վոր ամբողջովին ապարդյուն և խաբուսիկ են այն ակնկալությունները, վոր ունի զյուղացիությունը ցարերից և նրա գաղնակիցներից խաղաղությունն ձեռք բերելու համար. Առանց գումայական ժամանակաշրջանի խրատական դասերի պրոլետարիատի դերիշխանությունը անհնարին կը լիներ զլուխ բերել:

Այսպես առաջ յեկավ բանվորների և զյուղացիների միությունը բուրժվարդեմոկրատական հեղափոխության ընթացքում։ Այսպես առաջ յեկավ պրոլետարիատի գերիշխանությունը (զեկավար գերը) ցարիզմի տապալման ընդհանուր կավում, գերիշխանություն՝ վոր հասցրեց 1917 թ. փետրվարյան հեղափոխության։

Արևմուտքի (Անդրիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա) բուրժվական հեղափոխությունները գնացին, ինչպես հայտնի յէ, այլ ճանապարհուով։ Այնտեղ գերիշխանությունը հեղափոխության մեջ պատկանում եր վոչ թե պրոլետարիատին, վորը չեր ներկայացնում և չեր կարող ներկայացնել իր անզորության շնորհիվ ինքնուրացյն քաղաքական ուժ, այլ իրերալ բուրժվագիտյին։ Այնտեղ զյուղացիությունը իր աղատությունը ճորտափիրական կարգերից ստացավ վոչ թե պրոլետարիատի ձեռքից, վորը փոքրաթիվ եր և անկազմակերպ, այլ բուրժվագիտյից։ Այնտեղ զյուղացիությունը գուրու յեկավ հին կարգերի զեմ լիրերալ բուրժվագիտյի հետ միասին։ Այնտեղ զյուղացիությունը ներկայացնում եր բուրժվագիտյի ուղերձը։ Այդ հանդամաների շնորհիվ այնտեղ հեղափոխությունը հսկայական չափերով առժեղացրեց բուրժվագիտյի քաղաքական կիրար։

Մուսասատանում, ընդհակառակը, բուրժվական հեղափոխությունը տվեց ուղղակի հակադիր հետևանքներ։ Հեղափոխությունը Մուսասատանում վոչ թե ուժեղացրեց, այլ ընդհակառակը թուլացրեց բուրժվագիտյին վորպես քաղաքական ուժ, վոչ թե բազմապատկեց նրա քաղաքաքաղաքական ուեզերինը, այլ ընդհակառակը զրկեց նրան իր զինավոր ուեզերից—զյուղացիությունից։ Բուրժվական հեղափոխությունը Մուսասատանում առաջ քաշեց վոչ թե լիրերալ բուրժվագիտյին, այլ հեղափոխական պրոլետարիատին, նրա շուրջը խմբելով բազմամիլիոն զյուղացիությունը։

Արանով և ի միջի այլոց բացարարվում այն փասար, վոր բուրժվական հեղափոխությունը Մուսասատանում ըն-

դարձակվեց և դարձավ պրոլետարական հեղափոխություն համեմատաբար կարճ ժամանակամիջոցում։ Պրոլետարիատի գերիշխանությունը սաղմն եր և անցման աստիճանը գեափի պրոլետարիատի գիկաւատության։

Ինչով բացատրել այս Արանատուկ յերեսույթը ուստական հեղափոխության միջ, վոր չունի իր նախորդները Արևմուտքի բուրժվական հեղափոխություններում։ Վարտեղից առաջ յեկավ այլ Արանատուկությունը։

Դա բացատրվում է նրանով, վոր բուրժվական հեղափոխությունը Մուսասատանում ծավալվեց դասակարգային կովի ավելի զարգացած պայմաններում, քան այդ զյուղյուննեներ Արևմուտքում, վոր ուստական պրոլետարիատին հաջողվել եր մինչ այդ քաղաքական ինքնուրացյն ուժ կազմելու, մինչդեռ լիրերալ բուրժվագիտն խրանիրով պրոլետարիատի հեղափոխական կրօնից կարցրեց իր հեղափոխական կերպարանքը (առանձնապես 1905 թվի գուերից հետո) և ցարի ու կալվածառերերի հետ միություն կնքեց հեղափոխության զեմ, բանվորների և զյուղացիների զեմ։

Արժե ուշագրություն դարձնել հետեւյալ հանդամանքների վրա, վորոնք ցուցազրում են ուստական բուրժվական հեղափոխության առանձնահատկությունը։

ա) Մուսասատանում արդյունուրերության չունենալիք կենարնացամբ հեղափոխության նախորդյակին։ Հայոնի յէ որինակ, վոր 500 մարդուց ավելի բանվար ունեցող ձեռնարկություններում աշխատում եր Մուսասատանում ամբողջ բանվորության 54 տոկոսը, մինչդեռ այնպիսի մի զարգացած յերկրում, ինչպիսին Հյուսիսային Ամերիկան և նման ձեռնարկությունների մեջ աշխատում ե ամբողջ բանվորության 33 տոկոսը։ Ավելորդ և ազացուցել վոր միակ այս հանգամանքը այսպիսի հեղափոխական կուսակցության գոյության ժամանակի, վորպիսին բոլշևիկների կուսակցությունն ե, պետք ե գարձներ Մուսասատանի

բանվոր դասակարգը յերկրի քաղաքական կյանքի մեծագույն ուժը:

բ) Շահագործման խայտառակ ձեւերը ձեռնարկություններում, պլյուս զբան ցարական թիկնապահների ստեղծած անհանդարժելի գոտտիկանական ուժիմբ, — մի հանգամանք, վոր բանվորների յուրաքանչյուր լուրջ գործադրությանում եր մի հակայական քաղաքական ակտ և բանվոր դասակարգին մարգում և նախապատրաստում, վորպես հետեւղական հեղափոխական մի ուժ:

գ) Խուսական բուրժվագիտայի քաղաքական գյուրաբեկությունը, վոր 1905 թ. հեղափոխությունից հետո գույքեց ցարիկմի սպասավորության և ողջակի հակաֆոխության և վարպիսի հանգամանքը բացատրվում է վոչ միայն ռուսական պրոլետարիատի հեղափոխականությամբ, վոր նետեց ռուսական բուրժվագիտային ցարիկմի գիրկը, այլ և այդ բուրժվագիտայի ողջակի կախումով պետական պատվերներից:

դ) Ճորտատիբական կարգերի ամենախայտառակ և ամենամհանգուրժելի մեացորդների գոյությունը զյուղում, վորոնց լրացնում եր կալվածատերերի աճառնում իշխանությունը — մի հանգամանք, վոր ձգեց զյուղացիությանը հեղափոխության գիրկը:

յե) Յարիկմը, վոր խեղզում եր ամեն մի կենդանի բան և իր կամայականությամբ կը կնասպատկում կապիտալիստների և կալվածատերերի ձնշումը, — մի հանդամանք, վոր միացնում եր բանվորների և զյուղացիների սլայքուրը և զարձնում մի միացյալ հեղափոխական հեղեղ:

զ) Իմպերիալիստական պատերազմը, վոր ձուլեց Առաստանի քաղաքական կյանքի այս բոլոր ներհակությունները, վեր ածեց նրանց մի խորունկ հեղափոխական առաջնորդի հեղափոխությանը հաղորդեց գրոհի անորկ:

Ուր փախչեր զյուղացին այսպիսի պայմաններում, ում մոտ պաշտպանություն վորոներ կալվածատերի ան-

սահման իշխանության, ցարի կամայականության և կործանարար պատերազմի դեմ, վորը քայլքայեց նրա տնտեսությունը: Լիբերալ բուրժվագիտայի մոտ: Բայց նա իր թշնամին եւ, — այս և ասում բոլոր չորս Դումաների յերկարամյա փորձը: Եսերների մոտ: Եսերները ի հարկեավելի լով են» կագետներից և նրանց ծրագիրն ել «Ճեղնատու յե», համարյա զյուղացիական, բայց ինչ կարող են տալ եսերները, յեթե նոքա մտածում են հենվել միան զյուղացիների վրա և յեթե նոքա թույլ են քաղաքում, ուր ամենից առաջ քաղում ե իր ուժերը հակառակորդը: Վարտեղ և այն նոր ուժը, վորը վոչ մի բանի պուած կանգ չի առնի, վոչ զյուղում, վոչ քաղաքում, վորը համարձակ կանցնի առաջին շարքերը կովելու համար ցարի և կալվածատերերի դեմ, վորը կոզնի գյուղացուն աղատվելու ճորտաւթյունից, սակավահողությունից, ճընշումից և պատերազմից: Յեղել և առհասարակ այգափիսի մի ուժ Ռուսաստանում: Այս, յեղել և: Դա ռուսական պրոլետարիատն եր, վոր ցուցահանել եր իր ուժը, իր ընդունակությունը կովելու մինչև վերջ, իր համարձակությունը, իր հեղափոխական կորովը տակավին 1905 թվին:

Համենայն դեպօտ այգափիսի մի այլ ուժ գոյություն չուներ և նրան գտնելու ել հույս չկար:

Ահա ինչու զյուղացիությունը հեռանալով կագետներից և գնալով եսերների մոտ, միաժամանակ ըմբռնեց յենթարկվելու անհրաժեշտությունը այսպիսի մի քաջ առաջնորդի զեկավարության, վորպիսին ռուսական պրոլետարիատն եւ:

Սոքա յեն այն հանգամանքները, վորոնք ռուսական բուրժվական հեղափոխության առանձնահատկությունը զրուերեցին:

Յ. ԳՅՈՒՂԱՅՅԻՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԹՅՅԱՆ ՖԱՄԱՆԱԿ. — Այս շրջանն ընդգրկում է այն ժամանակաժիջոցը, վոր բաժանում և փետրվարյան (1917)

հեղափոխությունը Հոկտեմբերյան (1917) հեղափոխությունից Համեմատաբար կարճ մի շրջան է այս, — ընդամենը ութ ամիս, սակայն այդ ութ ամիսները մասսաների քաղաքական լուսավորության և հեղափոխական դաստիարակության տեսակետից համարձակ կարելի յե դասել սպորական սահմանադրական զարգացման ամբողջ տառամյակների շարքում — մինչույն աստիճանի վրա, վորովհետև նոքա հեղափոխության ութ ամիսներ են նշանակում: Այս շրջանի ընորոշ գիծը գյուղացիության հետագա հեղափոխականացումն է, նրա նուստիարությունը և հեռանալը եսերներից, նրա նոր շրջումը՝ պրոլետարիատի շուրջը անժիջանուրեն համախմբվելու կողմբ, վորովես միակ հետեղական հեղափոխական ուժը, վոր ընդունակ է յերկիրը զեսպի խաղաղության տառաջորդել: Այս շրջանի պատմությունը եսերների (մանր բուրժվական զետոկրատիա) և բոլշևիկների (պրոլետարական զետոկրատիա) պայքարի պատմությունն է գյուղացիության համար, նրա մեծամասությունը զրավելու համար: Այդ պայքարի ճակատագիրը վճռեցին՝ կուլտիվիայի՝ կերենչենայի շրջանը, եսերների և մենշևիկների հրաժարման փասող կարգածատերերի հողերը զրավման յենթարկելուց, նրանց պայքարը պատերազմը շարունակելու սղտին, հունիսիան արշավը ճակատում, զինվորների համար մահվան պատժի կիրարիումը և Կորնիլովի ազգամամբությունը:

Յեթե առաջ, նախընթաց շրջանում, հեղափոխության հիմնական նպատակը ցարի և կալվածատերերի իշխանության տապալումն եր հանդիսանում, այժմ արդեն, հետփետրվարյան հեղափոխության շրջանում, յերբ այս ցար գոյություն չուներ, իսկ անվերջ պատերազմը սպանել եր յերկրի տնտեսությունը, մինչի վերջին ծայր քայլակելով գյուղացիությունը, — հեղափոխության հիմնական նպատակը գարձավ պատերազմը վերացնելու խնդիրը: Մանրության կենարունը վորոշակի կերպով փոխադրվեց զուտ ներքին բնույթի կրող իրավունքությունը կամ ազգային իրավունքը:

Նական ինպրի վրա: «Վերջ տալ պատերազմին», «մի կերպ ազատվել պատերազմից», — սպ յեր ուժասովառ յեր կրի և ամենից առաջ գյուղացիության ընդհանուր ազագակը:

Բայց վորպեսպի մի կերպ կարելի լինի դուրս պլքնել պատերազմից, անհրաժեշտ եր տապալել ժամանակավոր կառավարությունը, բուրժվագիայի իշխանությունը, անհրաժեշտ եր տապալել եսերների և մենշևիկների իշխանությունը, վորովհետև նոքա և միայն նոքա յեն, վոր ձգձում են պատերազմը նրան «հաղթական վախճանի» հասցնելու համար: Պատերազմից գուրս գալու այլ ճանապարհ, բացի բուրժվագիայի տապալման միջոցից, զորձնականում գոյություն չուներ:

Սա մի նոր հեղափոխություն եր պրոլետարական հեղափոխություն, վորովհետև նա դեն շպրտեց իշխանությունից իմպերիալիստական բուրժվագիայի վերջին ծայրանեղ ձախական բախմակցությանը՝ եսերների և մենշևիկների կուսակցությանը, վորովհովի տօղջի նոր պրոլետարական իշխանություն, խորհուրդների իշխանություն, վորպեսպի իշխանության գլուխ նշանակի հեղափոխական պրոլետարիատի կուսակցությանը, — բոլշևիկների կուսակցությանը, զետոկրատական խաղաղության համար խմբերիալիստական պատերազմի դեմ հեղափոխականորեն մարտնչող կուսակցությանը: Գյուղացիության մեծամասությունը պաշտպանում եր բանվորների կոփվը խաղաղություն և Խորհրդային իշխանության համար:

Գյուղացիության համար ուրիշ յելք չկար և չեր կարող լինել:

Կերենչենայի շրջանը այսպիսով մեծագույն առարկայական դասն յեղավ գյուղացիության աշխատավորական մասսաների համար: Նա պարզ կերպով ցույց տվեց, վոր եսերների և մենշևիկների իշխանության ժամանակ յերկիրը չի կարող գուրս գալ պատերազմից, գյուղացին չի սահման վոչ և վոչ ել ազատություն, վոր մենշևիկներն

ու ևսերները տարբերվում են կազետներից միայն քաղցր ճառերավ և կեզծ խոսուումներով, իսկ զործի մեջ կիրարկում են նույն իմպերիալիստական, կազետական քաղաքականությունը, վոր միակ իշխանությունը, վորը ընդունակ է յերկրը հանելու գժվարին վիճակից, կարող է լինել սոսկ Խորհրդային իշխանությունը: Պատերազմի հետագա ձգձումը միայն հաստատեց այդ փորձի ճշտությունը: Նա զարկ տվեց հեղափոխության և մզեց գյուղացիների ու զինվորների միլիոնավոր մասամբներին պըոլետարական հեղափոխության շուրջը անմիջականորեն համախմբվելու ձանապարհը: Եսերների և մենշնիկների մեկուսացումը դարձավ անժխտելի մի փասոս: Առանց կոալիցիայի ժամանակաշրջանի խրատական գասերի պրոլետարիատի դիկտատուրան անհնարին կը դառնար:

Սոքա յեն այն հանգամանքները, վորոնք հեշտացրին բուրժվական հեղափոխությունը պրոլետարական հեղափոխության վեր ածելու զործողությունը:

Այսպիս կազմվեց պրոլետարիատի դիկտուրան Խոհեմայութեան:

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԲՆ ԻՇԽԱՆՈՒ-  
ԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒՅՆ ՀԵՏՈ, ՅԵթև առաջ, հեղափոխու-  
թյան առաջին շրջանում, գործը զիմանքութեա ցարիկութ-  
ուալայիւու մեջ եր կայանուժ, իսկ այնուհետեւ, վեարգա-  
րյան հեղափոխությունից հետո, նպատակը նախ և առաջ  
իմակերիալիստական պատերազմից դուրս գալը դարձավ  
բուրժվագիւայի տապալման միջնորդ, այժմ արդեն, քաղա-  
քացիական պատերազմը լիկվիդացիայի յենթարկվելուց և  
Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո՝ առ շ-  
նակարգ խնդիրը դարձել ե անտեսական շինարարությու-  
նը. Աւժեղացնել և զարգացնել ազգայնացրած արգյունա-  
քերությունը. այս նպատակով կապել արդյունաբերությու-  
նը զյուղական անտեսության հետ պետության կողմից կարգավորվող առևտությունների միջնորդ, պրոդրազվյունական (մաս-  
ցյալ կենսամթերքի գրավման հեղանակի) փոխարժինել բնա-

տուրքով այսպես՝ վոր հետո աստիճանաբար իջեցնելով  
բնատուրքի չափերը դորձը հասցնվի արդյունա-  
բերության արդյունքները՝ զյուղացիական անտեսու-  
թյան կենուամթերքների հետ փոխանակելուն. զարկ  
տու առևտուրին և զարգացնել կոստերացիան, քա-  
շելով վերջինիս մեջ սիլինավոր զյուղացիությունը, —  
ահա ինչպես եր գծում կենինը անտեսական շինարա-  
րության հերթական խնդիրները սոցիալիստական եկանո-  
միկայի հիմնադրության ձևագործություն:

Ասում են, թե այս խնդիրը կարող է մուսաստանի պես մի գյուղացիական յերկրի ուժերից վեր լինել. Մի քանի ոկեպտիկներ այդ խնդիրը մինչև իսկ պարզապես ուսուցիա յեն համարում, անիբազուրծելի մի բան, վորով հետեւ գյուղացիությունը գյուղացիություն է, նու բաղկացած և մանր արտադրողներից և նրան այդ պատճառով չի կարելի ոգտագործել ոսցիալիստական արտադրության հիմքերը կազմակերպելու համար:

Բայց սկսապիկները սխալվում են: Նոքտ հաշվի չեն առնում մի քանի համագամանքներ, վորոնք տվյալ պարագայում ունեն զնուական նշանակություն: Քննենք դրանցից զիսավորները:

**ԱՐԱՋԻՆ.** Զի կարելի շփոթել Խորհրդային Միության զյուղացիությունը Արևմուտքի գյուղացիության հետ. Այն գյուղացիությունը, վոր անցել է յերեք հեղափոխությունների գպրաց, վոր կովել է ցարի և բուրժիական իշխանության զեմ պրոլետարիատի հետ և նրա զլիավարությամբ, այն գյուղացիությունը, վոր հող և խաղաղություն և ստացել պրոլետարիական հեղափոխության ձեռքից և զրա հետեանքով դարձել է պրոլետարիատի ուղերձը, – այդպիսի մի գյուղացիություն չի կարող չզանազանվել այն գյուղացիությունից, վորը բուրժիական հեղափոխության ժամանակ կովել է լիբերալ բուրժիատիայի զլիավարությամբ, վորը ստացել է այդ հողը բուրժիագիտայի ձեռքից և զրա հետեանքով դարձել է բուրժիատիա

զիայի ոեղերվը։ Հարկ չկա ապացուցելու, վոր խորհրդացին գյուղացիությունը սովորած լինելով գնահատել քաղաքական բարեկամությունը և քաղաքական համագործակցությունը պրոլետարիատի հետ և վորը իր ազատությամբ պարտական և այս բարեկամության և համագործակցության, — չի կարող չկազմել մի բացառիկ բարենք պատ նյութ տնտեսական համագործակցության համար պրոլետարիատի հետ։

Ենդելոն առում եր, թե «քաղաքական իշխանության նրա վաճառքը սոցիալիստական կուսակցության ձեռքով դարձել և մատավոր ապագայի խնդիր», թե «այդ իշխանությունը նվաճելու համար կուսակցությունը պետք է նախ քաղաքից գյուղ գնու և դառնա ոժեղ գյուղում» (տես՝ Ենդելոնի «Գյուղացիական խնդիրը»)։ Նա այդ գրել ե անցյալ դորի 90-ական թվականներին, նկատի ունենալով արևմտյան գյուղացիությունը։ Կարիք կմ ապացուցելու, վոր ուս կուսանիսաները, վորոնք այդ տեսակետից հոկտյական գործ են կատարել յերեք հեղափոխությունների ընթացքում, կարողացել են արգեն ստեղծել իրենց համար գյուղում այնպիսի մի ողբեցություն և այնպիսի մի թիկունք, վարպիսին չելին համարձակվի յերազել անդամ մեր արևմտյան ընկերները։ Ինչուս կարելի յեժիսերել, վոր այս հանդումանքը չի կարող չթեթեացն արմատապես նուռաստանի բանվոր գասակարդի և գյուղացիության անտեսական զորձակցության կարգավորման խնդիրը։

Սկեպտիկները պնդում են, թե մանր գյուղացիությունն այն գործանն ե, վորը չի կարելի հօշտեցնել սոցիալիստական շնարարության հետ։ Բայց լսեցեք, թե ինչ ե առում Ենդելոն Արևմտարի մանր գյուղացիության մասին։

«Մենք կարուկ կերպով կանդնած ենք մանր գյուղացիության կողմը. մենք ամեն հնարավոր միջոցները գործ ենք գնելու, վոր նա ապրի տանելի կերպով վոր

հեշտացնենք նրա համար ընկերություն կազմելու գործը, յերբ նա վճռի կատարել այդ։ Այն գեպքում, յերբ նա տակավին հնարավորություն չի ունենա այդ վճռելու, մենք կաշխատենք նրան հնարավորության չափ ավելի շատ ժամանակ տալ մտածելու այդ մասին իր մի պատճենողի վրա։ Մենք այդպես ենք վարփելու վոչ միայն այն պատճառով, վոր անկախ աշխատող մանր գյուղացուն մեր կոմի անցնելը հնարավոր ենք համարում, այլ և զբուգած անմիջական կուսակցական շահերից։ Ինչը ան շատ լինի այն գուղացիների թիվը, վորոնց մենք թույլ չենք տա համեստու պրոլետարների վիճակին և մեր կողմը կը քաշենք տակավին գյուղացու վիճակում այնքան արագ և հեշտ կարող ե վերջանալ հասարակական վերակողմությունը։ Այդպիսի վերակողմության համար անսպասար այն ժամանակին, յերբ կապիտալիստական արտադրությունը ամենուրեք կզարդանա մինչ իր ծայրահեղ հետեանըները, յերբ թե վերջին մանր արհետագորը և թե վերջին մանր գյուղացին կը պանան խոշոր կապիտալիստական արտադրության զոհը։ Այն նյութական զոհաբերությունները, վոր այդ ազգությամբ սահմանադր կը լինենք կատարել հասարակական միջոցներից հազուազ գյուղացիության, կապիտալիստական եկանումիկայի սեռակետից կարագ են դեն զցված փողեր համարվել, մինչդեռ վոր կապիտալի հրաշալի զորձագրությունը կը լինի, վարովնետե այդ զոհաբերությունները կարող ե սպատահել ինային առան անգամ ամենի գումարությունների համարձական արմատագրության մեջ։

Այսպես եր առում Ենդելոն, նկատի ունենալով արեմբայան գյուղացիությունը։ Բայց միթե պարզ չե, վոր Ենդելոնի առածները վոչ մի տեղ չի կարելի իրազարծել այնքան հեշտ և կատարելապես, ինչպես այդ կարելի յե-

անել պրոլետարիատի դիկտատուրայի հայրենիքում։ Միթե պարզ չե, վոր միայն Խորհրդային Ռուսաստանում կարելի յե իրավուրծել կյանքի մեջ հենց այժմ և յետ ու ամբողջովին թե ռանկախ աշխատող մանր զյուղացուն մեր կողմն անցնելը, թե դրա համար անհրաժեշտ ռնյութական զոհաբերությունները և թե պետք յեղած ռասատաձեւնությունը զյուղացիների նկատմամբ։ Վոր այսպիսի և սոցա նման միջոցները հոգուտ զյուղացիության արդին իսկ գործադրվում են Ռուսաստանում։ Ի՞նչոքս կարելի յե ժխտել, վոր այս հանգամանքն իր հերթին ողեալ և հեշտացնի և մզի տառաջ խորհրդային յերկրի անտեսական շինարարության գործը։

ՅԵՐԿՐՈՐԴ. — Զի կարելի շփոթել Ռուսաստանի զյուղատնտեսությանը Արեմուտքի զյուղատնտեսության հետ Այստեղ զյուղատնտեսության զարգացումը բնիքանում և կապիտալիզմի սովորական ճանապարհով, զյուղացիության խորունկ շերտավորման պայմաններում, ունենալով մի բեփեսամ խոշոր կարգածներ և մասնավոր կապիտալիստական լատիֆունդյաներ, իսկ մյուսում պատշերիզմ, աղքատություն և վարձու ստրկություն։ Այս նկատի ունենալով բաժանումը և քայլքայումը այստեղ միանգամայն բնական է։ Այդպես չե Ռուսաստանում Մեզ մոտ զյուղատնտեսության զարգացումը չի կարող զնալ նման ճանապարհով, թեկուղ հենց այն պատճառով, վոր Խորհրդային իշխանության զոյտթյունը և արտադրության հիմնական գործիքների և միջոցների աղքայացումը թուղթ չեն տալիս այդ զյուղացիներից զնում և կտավատի ամբողջ արդյունքը, մեծ չափերով սովառում և նրան շուկայում ապահովում և զյուղացիների մասնակցությունը շահած գումարին և այսպիսով զյուղացիական տնտեսությունը կապում և Գյուղմիության միջոցով պետական արդյունաբերության հետ Ի՞նչպես անվանել արտադրության կազմակերպության այսպիսի ձեր Սու ըստ իս խոշոր պետական սոցիալիստական արտադրության տնտեսությունը յեղանակն և զյուղատնտեսության բնագավառում։ Յես պետական սոցիալիստական արտադրության անտեխնի յեղանակ եմ տառում, նմանեցնելով նրան կապիտալիզմի տնտեխնի յեղանակին, սրբնակ՝ տեքստիլ արտադրության բնագավառում, ուր տնտեխնագործները ստանալով կապիտալիստից հում նյութ և գործիքներ ու հանձնելով նրան ամբողջ ար-

վոր մեզ մոտ գյուղատնտեսության դարպացումը պետք երնթանա նոր ճանապարհով, գյուղացիության մեծամանությունը սոցիալիստական շինարարությանը կոռպերացիայի միջոցով հաղորդակից գարձնելու ճանապարհով, գյուղատնտեսության մեջ հավաքականության (կոլեկտիվիզմի) սկզբունքներն աստիճանաբար արմատացնելու ճանապարհով, նախ սպառման, առաջ գյուղատնտեսական մթերքների արտադրության ասպարեզում։

Զափազանց հետաքրքրական և այս տեսակետից զյուղատնտեսական կոռպերացիայի աշխատանքների հետ կապված մի քանի յերեսները զյուղում չայտնի յե, վոր Գյուղմիության մեջ բազմացել են Գյուղատնտեսական ճյուղերին պատկանող նոր խոշոր կազմակերպություններն, ինչպես որինակ՝ կապվատի, կարտոֆելի, յուղի և այն կազմակերպությունները, վորոնք մեծ ապագա ունեն։ Դրանցից որինակ՝ կտավատագործական կենտրոնը ընդգրկում է զյուղացի կտավատագործների արտադրական ընկերությունների մի ամբողջ ցանց։ Այդ կենտրոնը զյուղացիներին սերմ և արտադրության գործիքներ և մատակարարում, հետո նույն այդ զյուղացիներից զնում և կտավատի ամբողջ արդյունքը, մեծ չափերով սովառում և նրան շուկայում ապահովում և զյուղացիների մասնակցությունը շահած գումարին և այսպիսով զյուղացիական տնտեսությունը կապում և Գյուղմիության միջոցով պետական արդյունաբերության հետ Ի՞նչպես անվանել արտադրության կազմակերպության այսպիսի ձեր Սու ըստ իս խոշոր պետական սոցիալիստական արտադրության տնտեսությունը յեղանակն և զյուղատնտեսության բնագավառում։ Յես պետական սոցիալիստական արտադրության անտեխնի յեղանակ եմ տառում, նմանեցնելով նրան կապիտալիզմի տնտեխնի յեղանակին, սրբնակ՝ տեքստիլ արտադրության բնագավառում, ուր տնտեխնագործները ստանալով կապիտալիստից հում նյութ և գործիքներ ու հանձնելով նրան ամբողջ ար-

գյունքը՝ փաստորեն հանդիսանում ելին տանն աշխատաղ կիսավարձու բանվորներ։ Սա մեխն ե այն բազմաթիվ ուրինակներից, վորոնց ճանապարհով պետք ե ընթանա մեզ մոտ գյուղատնտեսության զարգացումը, Յես այստեղ չեմ խոսում գյուղատնտեսական այլ ճյուղերին պատկանող նույն տեսակի որիշ որինակների մասին։

Ավելորդ ե ասել, վոր գյուղացիության հսկայական մեծամասնությունը հաճույքով կը զնա զարգացման այս ուղիով, վանելով մի կողմ մասնավոր կապիտալիստական լատիֆունդյաների և վարձու ստրկության ուղին, ուղին աղքատության և քայլայման։

Ահա ինչ ե ասում Հենինը մեր գյուղատնտեսության զարգացման ողիների մասին։

«Պետության իշխանությունը արտադրության բոլոր խոշոր միջնությունների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքում, այս սրբությունաբարիատի միությունը բազմամիլիոն մանր և մանրագույն գյուղացիության հետ, վերջինիս վերաբերյալ սրբությունաբարիատին զեկույտություն վերտպահելը և այն,— միթե սա այն ամենը չե, ինչ պետք ե կոսպերացիայից, հենց միայն կոսպերացիայից, վորին մենք տուած վերաբերվում ենինք վորպես չարչիություն և վորին վորոշ կողմերից այլպես վերաբերվելու իրավունք ունինք և այժմ, նեսլի (նոր անտեսական քաղաքականության) ժամանակ, միթե սա այն լովանգակ անհրաժեշտը չե լիակատար սոցիալիստական հասարակության կառուցելու համար։ Սա տակավին սոցիալիստական հասարակություն կառուցել չե, բայց սա այդ կառուցման համար բոլոր անհրաժեշտն ու զոհացուցիչն ե» (տես՝ «Կոսպերացիայի մասին»)։

Խոսելով այսուհետեւ կոսպերացիային ֆինանսական և այլ պաշտպանություն ցույց տալու անհրաժեշտության մասին, վորպես «նոր սկզբունք աղքարնակության» և նոր «հասարակական կազմի» «կազմակերպության», պրո-

լետարիատի դիկտատուրայի ժամանակ՝ կենինը շարունակում է.

«Յուրաքանչյուր հասարակական կազմ ստեղծվում է միայն վորոշ դասակարգի ֆինանսական ոլաշտպանությամբ։ Ավելորդ ե հիշեցնել այն հարյուրավոր և հարյուրավոր միլիոն սուրլիների մասին, վոր նստեց «ապատ» կապիտալի ծնունդը։ Այժմ մենք պետք ե զիտուցենք և զործանենք վարձնենք կազմը, վորին մենք պետք ե պաշտպանենք սովորականից ավելի, կոռպերատիվ կազմն ե։ Բայց պետք ե պաշտպանել նրան բառիս իսկական իմաստով, այսինքն պաշտպանություն տաելով բավական չե հասկանալ վորելոց կոռպերատիվային շրջանառության պաշտպանություն, այլ պաշտպանություն այնպիսի կոռպերատիվային շրջանառության, վորին իրավես մասնակցում են ազգաբնակության իսկական մասսաները» (տես՝ նույնը)։

Ինչ են ասում այս բոլոր հանգամանքները։

Այն վոր սկեպտիկները իրավացի չեն։

Այն վոր իրավացի յե լենինիզմը, վորը գյուղացիության աշխատավոր մասսաները համարում ե պրոլետարիատի ոեզերվու։

Այն վոր իշխանության գլուխ կանգնած պրոլետարիատը կարող ե և պարտավոր և ոգտագործել այդ ոեզերվու արդյունաբերությունը գյուղատնտեսության հետ շաղկապելու, սոցիալիստական շինարարությունը ուժից զայնելու և պրոլետարիատի դիկտատուրայի տակ քաշելու համար այն անհրաժեշտ հիմքը, առանց վորի անհնար և անցումը գեղի սոցիալիստական եկանումիկա։

## VI. ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐ.

Այս նյութից յես կը վերցնեմ յերկու պլիտավոր խընդիք՝ ա) հարցադրություն, բ) ճնշված ժողովուրդների ազատազրական շարժումը և պրոլետարական հեղափոխությունը:

1. ՀԱՐՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ. — Վերջին յերկու տասնամյակներում ազգային խնդիրը մի շարք չափազանց լուրջ փոփոխություններ կրեց: Ու Խնտերնացիոնալի ժամանակաշրջանի ազգային խնդիրը և լենինիզմի ժամանակաշրջանի ազգային խնդիրը ամենակին միեննույն բաները չեն: Նոքա խորապես տարբերվում են իրարից վոչ միայն իրենց ծավալով, այլ և իրենց ներքին բնույթով:

Առաջներում ազգային խնդիրը պարփակվում էր սովորաբար զլիսավորապես «կուլտուրական» ազգություններին վերաբերող խնդիրների նեղ շրջանակով: Իրանցացիները, հունգարացիները, լեհերը, ֆինները, սերբերը և միքանի այլ յեվրոպական ազգերը կազմում եյին այն անիրավաճակար ժողովուրդները, վորոնց վիճակով հետաքրքրվում եյին Ու Խնտերնացիոնալի հերոսները: Տասնյակ և հարյուրափոք միլիոն ասիական և աֆրիկական ժողովուրդներ, վորոնք յենթարկվում եյին ամենազսեհիկ և գաֆան ազգային ճնշումների, սովորաբար դուրս եյին անշումների, սովորաբար դուրս եյին մնում տեսողության դաշտից: Սպիտակամորթներին և սեամորթներին, «քաղաքակիրթ» և «հետամնաց» ժողովուրդներին չեյին համարձակվում միեննույն մակարդակի վրա դասել: Եերկու-յերեք անբովանդական իրավունք, վորոնք ազգերի անկախութական գոյության իրավունքը նույն այդ միջոցով դուրս

ազատազրության խնդիրները շոշափելուց, — սոքա յենայն ամենը, վորոնցով կարող ելին պարձենալ Ու Խնտերնացիոնալի վործիչները: Այժմ այս յերկողիմությունն ու կեղծավորությունը ազգային խնդրում պետք է համարել վերացած: Լենինիզմը մերկացրեց այս ազատակաղ անպատշաճությունները, խորտակեց այն պատը, վոր բաժանում էր իրարից խմբերի ամպերի ստրուկներ գարձած սեփառթներին և սպիտակամորթներին, յելլուպացիոններին և ասիացիներին, «քաղաքակիրթ» և «հետամնաց» ժողովուրդներին ու այսպիսով շաղկապեց ազգային խնդիրը գաղութների նետ: Նույն միջոցով ազգային խնդիրը մասնավոր և ներքին-պետական խնդիրը լինելուց գարձրեց ընդհանուր և միջազգային խնդիրը, հպատակ յերկրների և գաղութների հալածական ժողովուրդներին խմբերի ամպերի լծից ազատազրելու համաշխարհային խնդիրը:

Առաջներում ազգերի խնդնորոշման սկզբունքը բացարկում էր սովորաբար սիսալ, սեղմիելով հաճախ մինչև ազգերի ինքնավարության իրավունքի շրջանակները: Ու Խնտերնացիոնալի լիդերներից վոմանք մինչև խակ այն տեղը հասան, վոր ինքնորոշման իրավունքը շինեցին կուլտուրական խնդնավարության իրավունք, մի իրավունք, վոր ճնշված ազգերին թույլ էր տալիս ունենալու միայն իրենց կուլտուրական հիմնարկությունները, թողնելով ամբողջ քաղաքական իշխանությունը իշխող ազգի ձեռքին: Այս հանգամանքը այն տեղը հասցեց, վոր ինքնորոշման իրավունքը աններսի սիսակաների զեմ ուայքարի զործիք ծառայելուց սպասնում էր զանալ այդ կցումներն արգարացնող դործիք: Այժմ այս խանաշփոթությունը պետք է վերացած համարել: Լենինիզմն ընդարձակեց ինքնորոշման հառկացողությունը, բացարելով այն վորոնք հապատակ յերկրների և գաղութների ճնշված ժողովուրդների լիակատար անշատման իրավունք, վորոնք ազգերի անկախութական գոյության իրավունքը նույն այդ միջոցով դուրս

Ու ֆորմիստի համար ու ֆորմն ամեն ինչ է, իսկ հեղափոխական աշխատանքը — վոչ լավ, վոչ վատ, ենոպես, խոսքի համար, աչքի թող փշելու համար: Այդ պատճառով ու ֆորմը ու ֆորմիստական տակարկայի կիրարկման ժամանակ բուրժվական իշխանության գոյության պայմաններում, անխուսափելի կերպով դասնառ և այդ իշխանության ամրապնդման և հեղափոխության կաղմաւուծման գործիք:

Իսկ հեղափոխականի համար, ընդհակառակը, գլխավորը հեղափոխական աշխատանքն ե և վոչ թե ու ֆորմը,

Նրա համար ոեֆորմը հեղափոխության կողմանակի արգասիքն է: Այդ պատճառով ոեֆորմը հեղափոխական տակտիկայի կիրարկման ժամանակակի բուրժվական իշխանության գոյության պայմաններում, բնականորեն դառնում է այդ իշխանության քայլայման և հեղափոխության ամրապնդման գործիք, դառնում է հենակետը հեղափոխական շարժման հետագա զարգացման:

Հեղափոխականը ընդունում է ոեֆորմը նրա համար, վորպեսզի ոգտագործի նրան վորպես շաղախ՝ լեզալ և անլեզալ աշխատանքը կապակցելու, վորպես ծածկոց՝ անլեզալ աշխատանքը ուժեղացնելու համար, մի աշխատանք, վոր նպատակ ունի հեղափոխականորեն նախապատրաստելու մասսաներին և տապալելու բուրժվագիան:

Սրա մեջ ե ոեֆորմների և համաձայնությունների հեղափոխական ոգտագործման եյությունը իմպերիալիզմի պայմաններում:

Իսկ ոեֆորմիսար, ընդհակառակը, ընդունում է ոեֆորմները ամեն տեսակի անլեզալ աշխատանքից խոսափելու, մասսաների հեղափոխական նախապատրաստության գործը պայթեցնելու և «շնորհված» ոեֆորմի հավանափորության տակ հանդչելու համար:

Սրա մեջ ե ոեֆորմիստական տակտիկայի եյությունը:

Այսպիսին ե ոեֆորմների և համաձայնությունների խնդիրը իմպերիալիզմի պայմաններում:

Խնդրի բնավորությունը, սակայն, մի քիչ փոխվում է իմպերիալիզմը խորառակելուց հետո, պրոլետարիատի դիկտատորայի ժամանակ: Վորոշ պայմաններում և հանդամանքներում պրոլետարական իշխանությունը կարող է հարկադրված լինել ժամանակավորապես գուրս գալ գոյություն ունեցող կարգերի հեղափոխական վերաշինության ճանապարհից և մտնել նրանց աստիճանական վերակազմության ճանապարհը, ուեփորմիստական ճանապարհը, ինչպես ասում է ընկ. Լենինը իր «Վոսկու նշանակությունը» նշանավոր հոգվածում, վոլորապտույտ շար-

ժումների ճանապարհը ոեֆորմների և վոչ պրոլետարական զասակարգերին արվող զիջումների, վոր նպատակ ունի քայլայել այդ դասակարգերը, հանգստության և իր ուժերը ժողովելու հնարավորություն ընձեռնել հեղափոխության և ստեղծել նոր պայմաններ հարձակման անցնելու համար: Զի կարելի ժխտել, վոր այս ճանապարհը փորոշ չափով ոեֆորմիստական ճանապարհ է: Անհրաժեշտ և միայն հիշել, վոր մենք այստեղ մի արմատական տարբերություն ունենք, այն՝ վոր ոեֆորմը ներկա զեղքում բղկառ և պրոլետարական իշխանությունից, վոր նա ամրապնդում է այդ իշխանությունը, տոլիս և նրան անհրաժեշտ հանգստի հնարավորություն, վոր նա կոչված ե քայլայելու վոչ թե հեղափոխությունը, այլ վոչ պրոլետարական զասակարգերը:

Ոեֆորմը այսպիսի պայմաններում դառնում է իր հակադրությունը:

Նման քաղաքականության գործադրությունը պրոլետարական իշխանության ձեռքով դառնում է հնարավոր միմիայն այն պատճառով, վոր հեղափոխության թափը նախընթաց զրջանում բավականաչափ մեծ եր և նա այդ պիսով ընձեռնեց նահանջի բավականաչափ ընդարձակ մի ասպարեզ, հարձակման տակտիկան ժամանակավոր նահանջի, վոլորապտույտ շարժումների տակտիկայի փոխելով:

Այսպիսով, յեթե առաջ, բուրժվական իշխանության որոք, ուեփորմները հեղափոխության կողմանակի արգասիքներն եյին, այժմ արդեն, պրոլետարիատի դիկտատորայի որով, ուեփորմների աղբյուրը պրոլետարիատի հեղափոխական նվաճումներն են, նրա ձեռքում կուտակված ուեղերը բաղկացած այս նվաճումներից:

Ոեփորմների և հեղափոխության հարաբերությունը ձիշտ և շիտակ վորոշել և միմիայն մարքսիզմը: Մարքսը կարող եր այդ հարաբերությունը տեսնել միայն մի կողմից, այն ե՝ այնպիսի պայմաններում, վորոնց հաջորդում և պրոլետարիատի քիչ թե շատ հաստատուն ու յերկարա-

տե հաղթանակը դոնե մի յերկրում։ Նման պայմաններում ուղիղ հարաբերության հիմքը հետևյալն է. ուժորմները հանդիսանում են պրոլետարիատի հեղափոխական դաստկարգային պայքարի կողմանակի արդասիքը ... Յերբ պրոլետարիատը հաղթանակում ե դոնե մի յերկրում՝ հեղափոխության և ուժորմների հարաբերության մեջ ինչպոր նոր բան և առաջ գալիս։ Ակզբունքորեն ինդիրը նույն և մնում, բայց ձեր փոխում ե, մի բան, վոր Մարքսը անձամբ նախատեսել չեր կարող, բայց վորը բմբոնել կարելի յե միմիայն կանգնելով մարքսիզմի փիլիսոփայության և քաղաքականության հողի վրա...»

Հաղթանակից հետո սեփորմները (մնալով միջազգային մաշտարով նույն «կողմանակի արդասիքը») հանդիսանում են զրանից զատ հանգստի անհրաժեշտ և իրավացի պայման այն դեպքում, յերբ ուժերի ծայր աստիճան լուրումից հետո այլևս ուժ չի մնում այս կամ այն անցումը հեղափոխական ճանապարհով կատարելու համար։ Հաղթանակը առաջ և ուժերի այնպիսի մի պաշտը, վորը նախավորություն և տալիս անդամ ստիպողական նահանջի դեպքում պաշտպանվել, պաշտպանվել թե նյութապես և թե բարոյապես...» (տե՛ս՝ «Վուկու նշանակությունը»):

### VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ.

Նախահեղափոխական և քիչշատ խաղաղ զարգացման շրջանում, յերբ լլ Ինտերնացիոնալի կուսակցությունները բանվորական շարժման մեջ իշխող ուժ ելին ներկայացնում, իսկ պայքարի պարլամենտական յեղանակները համարվում ելին հիմնական յեղանակներ, — այդ պայմաններում կուսակցությունը չուներ և չեր կարող ունենալ այն լուրջ և վճռողական նշանակությունը, վորպիսին նա ձեռք բերեց հետագայում, արձակ հեղափոխական կոփմների պայմաններում։ Պաշտպանելով լլ Ինտերնացիոնալը հարձակումներից, կառուցկին ասում ե, թե՝ լլ Ինտերնացիոնալի կուսակցությունները հանդիսանում են խաղաղության և վոչ թե պատերազմի գործիք, թե նոքա հենց այս պատճառով ել ի վիճակի չեղան պատերազմի ժամանակ, պրոլետարիատի հեղափոխական ընդունումների շրջանում ձեռնարկելու գորեե լուրջ բայլի։ Դա միանգամայն ձիշտ ե, Բայց ինչ և նշանակում դա։ Դա նշանակում ե, վոր լլ Ինտերնացիոնալին հարող կուսակցությունները անպետք են պրոլետարիատի հեղափոխական կովի համար, վոր նոքա վոչ թե պրոլետարիատի ուազմական կուսակցություններն են, վոր տանում են բանվորներին դեպի իշխանություն, այլ ներկայացնում են մի ընտրական ապարատ, հարմարեցրած պարլամենտական ընտրություններին և պարլամենտական պայքարին։ Հենց սրանով ել բացատրվում ե այն հանդամնութը, վոր լլ Ինտերնացիոնալի ուղորայունիսատների տիրապետության շրջանում պրոլետարիատի գլխավոր քաղաքական կազմակերպությունը

վոչ թե կուսակցությունն եր, այլ պարլամենտական ֆրակցիան, Հայտնի յե, վոր այս շրջանում կուսակցությունը իրապես մի հավելում եր, պարլամենտական ֆրակցիային ոժանդակող մի ելեմենտ։ Ավելորդ և ասել, վոր նման պայմաններում և նման կուսակցություն զլուխ ունենալով՝ խոսք լինել չեր կարող պրոլետարիատի հեղափոխական նախապատրաստության մասին։

Խնդիրը, սակայն, արմատապես կերպարանափոխվեց նոր շրջանի թեակոխումով։ Այդ շրջանը գասակարգերի արձակ բախումների, պրոլետարիատի հեղափոխական ընդդեմների շրջանն ե, իմպերիալիզմը խորտակելու և իշխանությունը պրոլետարիատի ձեռքով գրավելու համար ուժերի անսիջական նախապատրաստության շրջանը։ Այդ շրջանը պրոլետարիատին առաջարկում է նոր խնդիրներ՝ վերտկազմել ամբողջ կուսակցական աշխատանքը նոր հեղափոխական պահանջների համաձայն, դաստիարակել բանվորներին հեղափոխական կովի վոգով իշխանությունը դրավելու համար, ոեզերմները նախապատրաստել և առաջ շարժել, միություն առաջ բերել հարկան յերկրների պրոլետարիատի հետ, սերտ կապեր ստեղծել դադութների և նպատակ յերկրների ազատազրական շարժման հետ և այլն, և այլն։ Յենթադրել, թե այդ նոր խնդիրները կարող են լուծվել հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ուժերով, վորոնք դաստիարակիվել են պարլամենտարիզմի խաղաղ պայմաններում — կընշանակե իրեն մատնել անհույս վհատության և աճ-խուսափելի պարտության։ Նման խնդիրներն ուսի առած մնալ հին կուսակցությունների զեկավարության տակ՝ կընշանակե կատարելապես զինաթափակի մեջ դնել իրեն։ Խոսք չկա, վոր պրոլետարիատը չեր կարող հաշտվել նման վիճակի հետ։

Այստեղից ել ծագեց նոր կուսակցություն հիմնելու անհրաժեշտությունը, այնպիսի մի կուսակցություն, վոր լինի սազմուկան, հեղափոխական, բավականաշափ համարձակ՝ պրոլետարներին դեպի իշխանություն առաջնորդելու,

բավականաշափ փորձված՝ հասկանալու համար հեղափոխական հանգամանքների բարդ պայմանները և բավականաշափ ճարպիկ՝ նպատակի ճանապարհին փոված դժվարությունները խափանելու համար։

Առանց մի այդպիսի կուսակցության իդուր եր մինչև իսկ մտածել իմպերիալիզմը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան հաստատելու մասին։

Այդ նոր կուսակցությունը լենինիզմի կուսակցությունն ե։

Ինչի մեջ և կայանում այդ նոր կուսակցության առանձնահատկությունը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՄ ԲԱՆԳՈՐ ԴԱՍԿԱՅՐ-ԳԻ ԱՌԱՋԱՊԱՀ ԳՈՒՆԴԸ. — Կուսակցությունը ամենից առաջ պետք է լինի բանվոր դասակարգի առաջապահ գունդը։ Նա պետք է ամփոփի իր մեջ բանվոր դասակարգի բոլոր լավագույն տարրերին, նրանց փորձը, նրանց հեղափոխականությունը, նրանց անձնվեր հավատարմությունը պրոլետարիատի գործին։ Բայց իսկական առաջապահ գունդ լինելու համար կուսակցությունը պետք է զինվի հեղափոխական տեսությամբ, հեղափոխական շաժման և որենքների զիտությամբ։ Առանց դրան նա չի կարող զեկավարել պրոլետարիատի կոփվը, տանել իր յետել վից պրոլետարիատը, կուսակցությունը չի կարող իսկական կուսակցություն լինել, յեթե նա սահմանափակվում է տուժարազերով այն, ինչ ապրում է և մտածում բանվորական մասսան, յեթե նա քարշ և գալիս պոչի պես տարերային շարժումների յետելից, յեթե նա ընդունակ չե վերացնելու տարերային շարժման խորթությունն ու քաղաքական անտարբերությունը, յեթե նա ընդունակ չե բարձրանալու պրոլետարիատի բռպեյական շահերից և բարձրացնելու մասսան մինչև պրոլետարիատի դասակարգային շահերի զիտակցությունը։ Կուսակցությունը պետք է կանգնած լինի բանվոր դասակարգի առաջ, նա պետք է բանվոր դասակարգից ավելի հեռուն տեսնի, նա պետք է

կարգի գունդը, նրա մի մասը, սերտորեն կապված լինելով նրա հետ իր գոյության բոլոր արմառներով։ Տարբերությունը առաջապահ գնդի և բանվոր գասակարգի մասակցայլ մասաների, անկուսակցականների և կուսակցականների միջև չի կարող վերանալ, մինչև վոր չվերանան դասակարգերը, մինչև վոր պրոլետարիատը չդադարի լրացնել իր շարքերը մյուս դասագրքերից գույս յեկածներով, մինչև վոր բանվոր դասակարգը իր ամբողջությամբ չհասնի առաջապահի աստիճանին։ Բայց կուսակցությունը կը զարգարեր կուսակցություն լինելուց, յեթե այդ տարբերությունը փոխարկվեր բաժանման, յեթե նա կղզիանարու կարգեր անկուսակցական մասաներից, կուսակցությունը չի կարող զեկավարել պրոլետարիատն, յեթե նա կապված չե անկուսակցական մասաների հետ, յեթե շաղկապ գոյություն չունի կուսակցական և անկուսակցական մասաների միջև, յեթե այս մասաները մերժում են կուսակցության զեկավարությունն ընդունել, յեթե կուսակցությունը չի սպավում մասաների մեջ բարոյական և քաղաքական վարկով։ Մոտ անցյալում մեր կուսակցության մեջ ընդունվեցին յերկու հարյուր հազար նոր բանվոր անդամներ։ Այսուղ նշանակալից ե այն հանգամանքը, վոր այդ մարզիկ վոչ այնչափ իրենք յեկան իրենց կամքով զեպի մեր կուսակցությունը, վորչափ ուղարկվեցին մասակցայլ անկուսակցական մասաների կողմից, վորոնք ակտիվ մասնակցություն ցույց տվին նոր անդամների ընդունելության գործին և առանց նրանց հավանությունն առնելու ընդհանրապես նոր անդամներ չընդունվեցին կուսակցության մեջ։ Այս վաստան առում ե, վոր անկուսակցական բանվորների լայն մասաները մեր կուսակցությունը ընդունում են իրենցը, իրենց հարագացությունը ընդունելության գործին կուսակցությունը, վորի մեծացման և ամրապնդման մեջ նոքա խիստ շահագրգուված են և վորին նոքա վատահանում են իրենց ճակատագիրը, Ավելորդ և ասել, վոր առանց կուսակցությունը անկու-

տանի իր յետեից պրոլետարիատը և վոչ թե պոչի պես քարշ գա տարերայնության յետեից։ Ո ինտերնացիոնիլ «պոչականություն» քարոզող կուսակցությունները հանդիսանում են բուրժվագիայի քաղաքականության աջակիցները, վորոնք պրոլետարիատին դարձնում են բուրժվագիայի ձեռքի գործիքը։ Այս կուսակցությունը, վոր կանգնած ե պրոլետարիատի առաջապահ գնդի տեսակետին և ընդունակ է բարձրացնելու մասաները մինչև պրոլետարիատի դասակարգային շահերի գիտակցությունը, —միայն այդպիսի կուսակցությունը կարող է դուրս բերել բանվոր դասակարգին արեդ-յունիոնիցմի ճանապարհից և դարձնել նրան ինքնուրույն քաղաքական ուժ, կուսակցությունը բանվոր դասակարգի գործական առաջարկ չեն, յեթե վոչ ավելի, քան պատերազմի պայմանները։ Ով կարող է հասկանալ այս պայմանները, ով կարող է ճիշտ հասկացողություններ տալ պրոլետարիատի միլիոնավոր մասաներին։ Վոչ մի բանակ պատերազմում առանց փորձված շտարի չի կարող կառավարվել, յեթե նա չի կամենում իրեն պարունակության մատնել։ Միթե պարզ չե, վոր պրոլետարիատն առավել իս չի կարող կառավարվել առանց այդպիսի մի շտարի, յեթե նա չի կամենում կուլտուրայի թշնամիներին։ Բայց ուր ե այդ շտարը։ Այդպիսի շտար կարող է լինել սոսկ պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը։ Բանվոր դասակարգը առանց հեղափոխական կուսակցության—այդ միևնույն թե՛ բանակը առանց շտարի։ Կուսակցությունը պրոլետարիատի առաջարիատի ու առաջարիան շտարն է։

Բայց կուսակցությունը չի կարող միայն առաջապահ գունդը լինել. նա պետք է լինի միաժամանակ դասա-

սակցական մասսաների հետ շաղկապող այս անըմբոնելի բարոյական կապերի՝ կուսակցությունը իր դասակարգի վճռական ուժը դառնալ չեր կարող։ Կուսակցությունը բանվոր դասակարգի անքածանելի մասն եւ աՄենը, — ասում եւ լենինը, — դասակարգի կուսակցություն ենք և ուստի գրեթե ամբողջ դասակարգը (իսկ պատերազմական ժամանակներում, քաղաքացիական պատերազմի դարաշրջանում անպայման ամբողջ դասակարգը) պետք ե գործի մեր կուսակցության ղեկավարության տակ, պետք ե միանա մեր կուսակցությանն ինչքան հնարավոր ե սերտ կերպով։ Բայց մանիլովականություն և «պոչականություն» կը լիներ կարծել, թե կապիտալիզմի որով յերբեցե գրեթե ամբողջ դասակարգը կամ ամբողջ դասակարգը ի վիճակի երլինի բարձրանալու իր առաջապահ գնդի, իր սոցիալիստական կուսակցության գիտակցության ու ակտիվության աստիճանին։ Վոչ մի խելքը գրելին սոցիալիստ տակավին չի տարակուսել այն մասին, վոր կապիտալիզմի ժամանակ անդամ արհեստակցական կազմակերպությունները, վորոնք ավելի պրիմիտիվ են, ավելի մատչելի հետամնաց խափերի գիտակցությանը, ի վիճակի չեն ընդգրկելու գրեթե ամբողջ կամ ամբողջ բանվոր դասակարգը։ Մոռացության տալ առաջապահ գնդի և գեպի նա հակող մասսաների միջի տարբերությունը, մոռացության տալ այդ առաջապահի մշտական պարտականությունն—ավելի և ավելի բարձրացնել բանվորական լայն խափերը գեպի առաջապահի աստիճանը—կը նշանակեր լոկ զբաղվել ինքնախարեյությամբ, աչք դոցել առաջադրված ինդիրների սեծության առաջ և սահմանափակել այդ ինդիրները» (տես՝ «Մի քայլ առաջ»)։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՓԵՍ ԲԱՆԳՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՈՒԽՆԾԸ. — Կուսակցությունը միայն բանվոր դասակարգի առաջապահ գունդը չենթե նա կամենում ե իրապես ղեկավարել բանվոր դասակարգի կոփվը նա պետք ե միաժամանակ լինի իրապես ղեկավարել իրապես ղեկավարել բանվոր դասակարգի ամեն մի «պրոֆեսորի» և «դիմագիստի», ամեն մի «համակրողի» և «գործաթողի» վրա, գոտի»։

սակարգի կազմակերպված գունդը, կուսակցության պարտականությունները կապիտալիզմի պայմաններում չափազանց մեծ են և բաղմատեսակ։ Կուսակցությունը պետք ե ղեկավարի պրոլետարիատի կոփվը ներքին և արտաքին զարգացման չափազանց գժվարին պայմաններում, նա պետք ե ուստի պրոլետարիատին հարձակման, յերբ հարձակվել պահանջում են հանդամանքները։ Նա պետք ե գուրս քաշի պրոլետարիատին ուժեղ հակառակորդի հարվածի տակից, յերբ նահանջել պահանջում են հանդամանքները, նա պետք ե անկազմակերպ անկուսակցական բանվորների միլիոնավոր մասսաներին ներշնչի կարգապահության, պլանաշափության կազմակերպվածության և տօկունության վոգի։ Բայց կուսակցությունը այս խնդիրները կարող ե իրագործել միայն այն ղեպքում, յեթե նա ինքը հանդիսանում ե կարգապահության և կազմակերպվածության մարմնացում, յեթե նա ինքը հանդիսանում ե կարգապահության և կազմակերպվածության կազմակերպված կազմակերպված գունդը։ Առանց այս պայմանների խոսք լինել չի կարող կուսակցության ձեռնակազմակերպության առաջին կետով, կենդանի հայտնի ձեռնակերպությամբ, ուր կուսակցությունը զիտավոր է վորպես կազմակերպությունների գումար, իսկ կուսակցության անդամները—վորպես կուսակցության կազմակերպություններից մեկի անդամներ։

Մենակերպությունը մի կազմակերպված ամբողջություն եւ վավերացված ե մեր կուսակցության կանոնագրության առաջին կետով, կենդանի հայտնի ձեռնակերպությամբ, ուր կուսակցությունը զիտավոր է վորպես կազմակերպությունների գումարի և գիմագիստարածվածությամբ—վորպես կուսակցության կազմակերպություններից մեկի անդամներ։ Մենակերպությունը գործնք գեռ 1903 թվականին առարկում ելին այս ձեռնակերպման ղեմ, առաջարկում ելին ընդունել զրա փոխարեն ինքնախնդունման «սիստեմա», մի միաժամանակ զրա կուսակցության անդամի «կոչումը» «սիստեմա», զրա կուսակցության անդամի «պրոֆեսորի» և «դիմագիստի», ամեն մի «համակրողի» և «գործաթողի» վրա, գոտի»։

ըսնք այսպես կամ այնպես պաշտպանում են կուսակցությունը, բայց վորոնք չեն մտնում և չեն կամենում մըտնել կուսակցական կազմակերպություններից վորեւ և մեկը։ Ավելորդ և ասել, վոր յեթե այդ որիգինալ ռսիստեման ամբանար մեր կուսակցության մեջ՝ անխուսափելի կերպով կը լցներ կուսակցությունը պրոֆեսորներով և դիմապիտներով, կայլասերեր նրան ու կը գարձներ տարտամ, տձեւ, անկազմակերպ մի «կազմություն», վոր կորչում և «համակրողների» ծովի մեջ, վոչնչացնում և կուսակցության և մասսային բաժանող սահմանը և ի դերև հանում կուսակցության այն խնդիրը, վոր նըպատակ ունի բարձրացնել անկազմակերպ մասսաները մինչև առաջապահ զնդի աստիճանը։ Իդուք և անդամ ասել, վոր նման ոպորտյունիստական սիստեման կը զրկեր մեր կուսակցությունը հեղափոխության ընթացքում բանվոր գասակարգի կազմակերպող կորիզը դառնալու հնարավորությունից։

«Մարտովի կարծիքով, — ասում ե Լենինը, — կուսակցության սահմանները պետք ե մնան բոլորովին անորոշ, վորովինետեւ «յուրաքանչյուր գործաթող» կարող ե «հայտարարել իրեն կուսակցության անդամ»։ Այս տարտամությունն այն ոգուտը կարող ե տալ, վոր կը տարածվի լայն չափերով կուսակցության «անունը», իսկ զրանից կառաջանա այն վնասը, վոր կուսակցության մեջ մուտք կը գործի գասակարդ և կուսակցություն իրար հետ շփոթող կազմակուծող գաղափարը» (աե՞ս՝ «Մի քայլ առաջ»)։

Բայց կուսակցությունը լոկ կուսակցական կազմակերպությունների գումար չեւ կուսակցությունը միաժամանական սիստեմանակ այս կազմակերպությունների միասնական սիստեման է, նրանց ձևական միությունը մի միացյալ ամբողջության մեջ, զեկավարության բարձրագույն և ստորին օրգաններով, վոր յենթարկում և փոքրամասնությունը մեծամասնության, վորի գործնական վճիռները պարտադիր են կուսակցության բոլոր անդամների համար։ Առանց այս

պայմանների կուսակցությունն անկարող ե կազմել մի միասնական կազմակերպված ամբողջություն, ընդունակ իրագործելու բանվոր դասակարգի կովի պլանաչափ և կազմակերպված ղեկավարությունը։

«Առաջներում, — ասում ե Լենինը, — մեր կուսակցությունը մի կազմակերպված ձեական ամբողջություն չեր, այլ մասնավոր խմբակների մի գումար եր, և ուստի՝ այլ հարաբերություններ այս խմբակների միջև, բացի գաղափարական ներգործությունից չեր կարող լինել։ Այժմ մանք դարձել ենք կազմակերպված կուսակցություն, իսկ սա նշանակում է իշխանություն ստեղծել, զաղափարների հեղինակությունը փոխարինել իշխանության հեղինակությամբ, կուսակցության ստորին ինստանցիաները յենթարկել բարձր ինսանցիաներին» (աե՞ս՝ «Նույնը»)։

Փոքրամասնությունը մեծամասնության յենթարկելու և կուսակցական աշխատանքը կենարունից ղեկավարելու սկզբունքը հաճախ առաջ և բերում յերերուն տարրերի կողմից հարձակումներ, «բյուրոկրատիզմի», «ձեապաշտության» մեղադրանքներ և այլն։ Կարիք չկա ապացուցելու, վոր կուսակցության, վորպես ամբողջի պլանաչափաշխատանքը և բանվոր գասակարգի կովի ղեկավարությունն անկարելի կլղառնար առանց այս սկզբունքները կիրարկելու, Լենինիզմը կազմակերպական խնդրում այս սկզբունքները անհողողող կերպով կիրարկուն եւ։ Պայքառ սկզբունքների գեմ՝ Լենինը համարում է «ուսումնական սկզբունքների գեմ» և առաջական անիշխանականություն», վոր արժանի յեւ միայն ծաղրի և զեն նետիկոււ։

Ահա ինչ և ասում Լենինը այս յերերուն տարրերի մասին իբ «Մի քայլ առաջ» զրքի մեջ։

«Ուսւնիթիստին առանձնապես հատուկ ե այս աղայական անիշխանականությունը։ Կուսակցական կազմակերպությունը թվում ե նրան հրեշային «Փարբիկա», մասնիկն ամբողջին և փոքրամասնությունը մեծամասնության յենթարկելը նրան թվում ե «ձորտություն», աշխա-

տանքի բաժանումը կենտրոնի ղիկավարությամբ՝ առաջ երեսում նրա կողմից արագի-կոմիթեական արտօնված մարդկանց «անվակներ և պատւակներ» դարձնելու համար, հիշատակությունը կուսակցության կանոնադրության մասին՝ առաջ երեսում արհամարհական ծամածություն և ծաղրական նկատողություն, թե կարելի յեր և իսպառ առանց կանոնադրության... Կարծեմ պարզ ե, վոր հըռչակավոր բյուրոկրատիզմի մասին յեղած աղաղակները պարզապես քողարկումն ե, թգենու տերեւ կենտրոնի անձնականի կազմի նկատմամբ ունեցած անբավականության... Դու բյուրոկրատ ես, քանի վոր դու նշանակված ես համագումարի կողմից վոչ իմ կամքով, այլ նրան հակառակ, դու ձեապաշտ ես, վորովհետեւ դու հենքում ես համագումարի ձեական վճռին և վոչ իմ համաձայնության վրա, դու դործում ես կոստությամբ, մեքենայորեն, վորովհետեւ հենքում ես կուսակցական համագումարի «մերենայական» մեծամասնության վրա և հաշվի չես առնում կոռպատցիայի յենթարկվելու իմ ցանկությունը։ Դու ինքնակալ ես, քանի վոր չես կամենում հանձնել իշխանությունը հին, մտերիմ կամականիայի ձեռքը»\*):

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՅՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԶԵՎ. — Կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված դունկն ե, բայց կուսակցությունը բանվոր դասակարգի միակ կազմակերպությունը չեւ։ Պրոլետարիատը ունի գարձյալ մի ամբողջ շարք այլ կազմակերպություններ։ Առանց այդպիսի կազմակերպությունների նա չի կարող կանոնավոր կոփվ մղել կապիտալի դեմ։ Այդ կազմակերպություններն են՝ արհեստակցական միությունները, կո-

\*) Խոսքը Ակսելոսի, Մարտոսի, Պոտրեսովի և մյուսների «Կամականիայի» մասին ե, վորոնք չեյին հնագանգվում լի համագումարի վորոշումներին և մեղադրում եյին լենինին «բյուրոկրատիզմի» մեջ։  
Ի. Ս.

ոպերատիվները, մամուլը, կուլտուր-լուսավորական կազմակերպությունները, յերիտասարդական միություննը, հեղափոխական-մարտական կազմակերպությունները (արձակ հեղափոխական ընդգրությունների ժամանակ), ներկայացուցչական խորհուրդները, կազմակերպության պետական յեղանակը (յեթե պրոլետարիատը կանգնած է իշխանության գլուխ) և այլն։ Այս կազմակերպությունների խոշոր մեծամասնությունը անկուսակցական ե և միայն նրա վորոշ մասը հարում և անմիջական կերպով կուսակցության կամ կազմում և նրա ճյուղավորությունը։ Այս բոլոր կազմակերպությունները վորոշ հանգամանքներում բացարձակապես անհրաժեշտ են բանվոր դասակարգի համար, վորովհետեւ առանց անկարելի յեւ ամբացնել պրոլետարիատի դասակարգային գիրքերը պայքարի զանազանակերպ շրջաններում, վորովհետեւ առանց նրանց չի կարելի մարզել պրոլետարիատը վորպես մի ուժ, վոր կոչված և փոխելու բուրժվական կարգերը սոցիալիստական կարգերի։ Բայց ինչպես իրագործել միացյալ գեկավարությունը, ունենալով այդքան առատ կազմակերպություններ։ Ուր և յերաշիբերը, թե բազմաթիվ կազմակերպությունների գոյությունը դեկավարության մեջ խառնաշըփոթություն առաջ չի բերի։ Կարող են ասել, թե այս կազմակերպություններից յուրաքանչյուրն իր աշխատանքը տանում և առանձնացած շրջանում, և ուստի՝ նորա իրար չեն կարող խանգարել։ Աս, ի հարկե, ձիշտ ե։ Բայց ձիշտ ե և այն, վոր այս բոլոր կազմակերպությունները պետք ե տանեն իրենց աշխատանքը մի ուղղությամբ, վորովհետեւ նոքա աշխատառ են մի զասակարգի պրոլետարիատի դասակարգի համար։ Հարց ե արվում, — ով և վորոշում այն գիծը, այն ուղղությունը, վորով պետք ե տանեն իրենց աշխատանքները այս բոլոր կազմակերպությունները։ Ուր և այն կենտրոնական կազմակերպությունը, վորը վոչ միայն ընդունակ է (նկատի ունենալով անհրաժեշտ փորձի գոյությունը) մշակելու այս ընդհա-

նուր զիծը, այլ և հնարավորություն ունի (նկատի ունենալով դրա համար բավականաշափ հեղինակության գոյությունը) գրդելու այդ բոլոր կազմակերպություններին կիրարկել կյանքի մեջ այս զիծը՝ ստեղծելու համար զեկավարության միաժամանություն և խափանելու հնարավոր անկանոնությունները:

Այսպիսի կազմակերպություն հանդիսանում է պրուետարիատի կուսակցությունը:

Կուսակցությունը դրա համար ունի բոլոր տվյալները՝ առաջին՝ վորովհետեւ կուսակցությունը դասակարգի բավագույն տարրերի հավաքագայլն է, վորոնք անմիջական կազիր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ զեկավարում են նրանց. յերկրորդ՝ վորովհետեւ կուսակցությունը, վորպես բանվոր դասակարգի լավագույն մարդկանց հավաքագայր, ներկայացնում է ամենալավ դպրոցը բանվոր դասակարգին զեկավարներ անարու համար, վոր ընդունակ են զեկավարելու իրենց դասակարգի բոլոր տեսակի կազմակերպությունները, յերրորդ՝ վորովհետեւ կուսակցությունը, վորպես լավագույն դպրոցը բանվոր դասակարգին զեկավարներ անարու համար՝ հանդիսանում է իր ունեցած վորձառության և հեղինակության շնորհիվ միակ կազմակերպությունը, վորը ընդունակ է կենտրոնացնելու պրոլետարիատի պայքարի զեկավարությունը և այսպիսով դարձնելու բանվոր դասակարգի բոլոր և ամեն տեսակի անկուսակցական կազմակերպությունները դասակարգին իր հետ միացնող սժանդակ մարմիններ և շարժիչ սեմենները. Կուսակցությունը պղը ու ետարիատի դակարգին կազմակերպության թարձը ձեւ է:

Սա չենշանակում, ի հարկե, թե անկուսակցական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, կոսպերատիվները և այլն պետք են ձեականորեն յենթարկին կուսակցության զեկավարության. Խոսքս միայն

այն մասին է, վոր կուսակցության անդամները, վորոնք մտնում են այդ կազմակերպությունների մեջ, վորուս անկասկած ազգեցիկ մարդիկ, ձեռք առնեն բոլոր միջոցները համոզելու անկուսակցական կազմակերպություններին իրենց աշխատանքների ըրջանում մտնենալու պրոլետարիատի կուսակցության և կամովին ընդունելու նրա քաղաքական զեկավարությունը:

Ահա ինչու յե կենինն ասում, թե՝ «Կուսակցությունը պրոլետարիատի գասակարգային միությունների բարձր ձեւն ե», վորի քաղաքական զեկավարությունը պետք ե տարածել պրոլետարիատի մնացած բոլոր տեսակի կազմակերպությունների վրա (տես. «Մանկ. հիվ.»):

Ահա ինչու անկուսակցական կազմակերպությունների «անկախության» և «չեղողքության» սպորտյունիստական տեսությունը, վոր ծնուժ և անկախ պարլամենտականներ և կուսակցությունից կարված մամուլի վործիչներ, նեղծակատ արհեստականներ և քաղքենիացած կոսպերատորներ, — միանդամայն հակասակ և լենինի նիզմի անսականին և գործնականին:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԳՈՐԾԻՔ ԳՐԱԼԵՏԱՐԻԿՏԻ ԴԻԿԱՏԱՐԱԿԻ ԲԱՅ. — Կուսակցությունը պրոլետարիատի կազմակերպության բարձր ձեւն է, կուսակցությունը հանդիսանում է պրոլետարական դասակարգի և նրա կազմակերպությունների նիմական զեկավարող սկզբունքը, Բայց սա ամենին չի նշանակում, թե կուսակցությունը կարելի յե գիտել վորպես ինքնանպատակ, վորպես ինքնամփոփությունը պրոլետարիատի դասակարգային միության վոչ միայն բարձր ձեւն ե, — նա միաժամանակ պրոլետարիատի ձեռքում գործիք ե գիտատուրա հաստատելու համար, յերբ նա տակապին չի հաստատված, գիտատուրան ամբազրն զելու և ընդարձակելու համար, յերբ նա արգեն հաստատված է, կուսակցությունը իր նշանակության մեջ չեր կարող այնքան բարձրանալ և չեր կարող ծածկել ի-

բենով պրոլետարիատի կաղմակերպության մնացած բոլոր ձեռքը, յեթե պրոլետարիատը չկանգներ իշխանության խնդրի առաջ, յեթե իմակերիալիզմի պայմանները, պատերազմների անխուսափելիությունը, տագնապի գոյությունը չպահանջելին կենտրոնացնել պրոլետարիատի բովանդակութելու մի կետի վրա, կենտրոնացնել հեղափոխական շարժման բոլոր թերերը մի տեղում՝ բուրժվագիտական շապալելու և պրոլետարիատի դիկտուրան հաստատելու համար։ Կուսակցությունը պրոլետարիատին պետք է նախ և առաջ վորապես նրա ուղղմական շատարը, վոր անհրաժեշտ է իշխանությունը հաջողությամբ դրավելու համար։

Հարկ չկա ապացուցելու, վոր առանց մի այնպիսի  
կուսակցության, վոր ընդունակ լիներ ժողովելու իր  
շուրջը պրոլետարիատի մասսայական կազմակերպություն-  
ներն ու կռվի ընթացքում կարողանար կենտրոնացնել ամ-  
բողջ շարժման գեկավարությունը՝ պրոլետարիատը Ռու-  
սաստանում չեր կարողանա իրականացնել իր հեղափո-  
խական գիշտատուրան:

Բայց կուսակցությունը սղբովետարիատին պետք է  
վոչ միայն իր գիլտատուրան հաստատելու համար, այլի  
պահելու, ամրապնդելու և ընդարձակելու այդ գիլտա-  
տուրան սոցիալիզմի լիակատար հազթանակի համար:

«Այժմ, հավանութեն, ամենքն ել տեսնում են, —ասում  
ե Լեսինը, —զոր բոլշևիկները չեցին կարող պահել իրենց  
ձեռքում իշխանությունը վոչ միայն յերկու և կես՝ տարի,  
այլ և յերկու և կես ամիս, յեթե մեր կուսակցության  
մեջ գոյություն չունենար խստագույն, կատարյալ յեր-  
կաթյա կարգապահություն, յեթե բանվորական մասսան  
(այսինքն այն ամենը, ինչ կա նրա մեջ խռնուն, ազնիվ  
անձնագոհ, ազդեցիկ, ընդունակ տանելու կամ քաշելու իր  
յետերից հետամնաց խավերին) ցույց չտար նրան ամենա-  
անձնվեր և լիակատար պաշտպանություն» (տես՝ «Մանկ-  
հիմ. 2»):

Բայց ինչ կընջանակե սպահելու և ըլնդարձակելու դիկ-

տատուրան։ Սա կընշանակե ներշնչել պրոլետարիների մի-  
լիոնավոր մասսաներին կարգապահության և կազմակերպ-  
վածության վողի։ Աս կընշանակե ստեղծել պրոլետարա-  
կան մասսաների մեջ ամրություն, պատվար՝ մանը բուրժ-  
վական տարրերի և սովորությունների քայլայիչ ազգե-  
ցության զեմ։ Աս կընշանակե՝ ուժեղացնել պրոլետար-  
ների կազմակերպչական աշխատանքները մանը բուրժվա-  
կան խափերը վերակրթելու և վերակազմելու համար։ Աս  
կընշանակե՝ ողնել պրոլետարական մասսաներին կրթվելու  
փորպես մի ուժ, վոր ընդունակ և վոչնչացնել դասակար-  
գերը և նախապատճառել սոցիալիստական արտակրու-  
թյան կազմակերպության պայմանները։ Բայց այս ամե-  
նը իրագործել անկարելի յէ, առանց իր միությամբ և  
կարգապահությամբ ուժեղ կուսակցության։

«Պրոլետարիատի գիկատուբան, — ասում ե էնիցիլ,  
— մի համառ կոխվ ե՝ անարյուն և արյունոտ, բանի և խա-  
ղաղ, ռազմական և անտեսական, մանկավարժական՝ և  
վարչական ուղղված հին հասարակության ուժերի և տրա-  
դիցիաների գեմ։ Միլիոնավորների և տասնյակ միլիոնա-  
վորների սովորույթի ուժը — ամենասոսկալի ուժն ե։ Ա-  
ռանց յերկաթյան և կովի մեջ բովված կուսակցության,  
առանց մի կուսակցության, վոր կարողանա ողափել արվ-  
յալ գասակարգի մեջ գոյություն ունեցող այն ամենի  
վստահությամբ, ինչ աղնիվ ե, առանց մասսաների տրա-  
մադրությանը հետեւ կարեցող և նրա վրա ազդող կու-  
սակցության՝ անհնար ե մզել այլպիսի հաջող կոփեք  
(տես՝ «Մանկ. հիվ.»)։

Կուսակցությունը պետք է պրոկտարիտախն նրա  
համար, վարպեսզի կարողանա նվաճել և պահել իր  
ձեռքում դիկտատուրան։ Կուսակցությունը պրոլե-  
տարիատի դիկտատուրայի գործիքներ։

Բայց ասածներիցս պետք է հետեցնել, զոր դաշտ-կարգերի անհետացմամբ, պըողետարիատի գիլտատուրա-յի մահով՝ պետք է մեռնի նաև կուսակցությունը:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՄԻՍՍԱԿԱՆ  
ԿԱՄՔ ՀԱԿԱՌԱԿ և ՖՐԱԿՑԻԱՆԵՐԻ ԳՈՅՑՈՒԹՅՈՒՆ.—Ա-  
ռանց իր միությամբ և յերկաթյա կարգապահությամբ  
ուժեղ կուսակցության անկարելի յե հաստատել պրոլե-  
տարիատի զիկտատուրան և պահել ձեռքում: Բայց կու-  
սակցության յերկաթյա կարգապահությունը անյերևա-  
կայելի յե առանց միասնական կամքի, առանց կուսակ-  
ցության բոլոր անդամների գործողությունների լիակա-  
տար և անպայման միասնականության: Սա չի նշանակում,  
ի հարկե, թե այդպիսով կուսակցության ներսում կար-  
ծիքների բախման ննարագորությունը վերացվում է:  
Ընդհակառակը, յերկաթյա կարգապահությունը չի բացա-  
ռում, այլ ընդունում է քննադատությունը և կարծիքնե-  
րի պայքարը կուսակցության ներքին կյանքում: Սա ա-  
ռավել ես չի նշանակում, թե կարգապահությունը պետք  
է լինի «կույր»: Ընդհակառակը, յերկաթյա կարգապահու-  
թյունը չի բացառում, այլ ընդունում է յենթարկվելու  
գիտակցականությունն ու կամովինությունը, գորսինեան  
միայն զիտակից կարգապահությունը կարող է լինել իս-  
կական յերկաթյա կարգապահություն: Բայց յերբ կար-  
ծիքների պայքարը արդեն վերջացել է, քննադատությու-  
նը փակված է և վճիռն արձակված՝ այդ ժամանակ կու-  
սակցության բոլոր անդամների կամքի և գործողություն-  
ների միասնականությունը հանդիսանում է այն անհրա-  
ժեշտ պայմանը, առանց վորի չի կարելի յերեակայել վոչ  
միացյալ կուսակցություն և վոչ ել կուսակցական յերկա-  
թյա կարգապահություն:

«Ներկայիս քաղաքացիական սրբած պատերազմի դա-  
րաշրջանում,—ասում ե Լենինը,—կոմունիստական կու-  
սակցությունը կը կարողանա կատարել իր պարտականու-  
թյունը միմիայն այն դեպքում, յեթե նա կազմակերպված  
է կենտրոնացման յեղանակով, յեթե նրա մեջ թշում է  
զինվորական կարգապահության պես յերկաթյա կարգա-  
պահություն և յեթե նրա կուսակցական կենտրոնը տի-

րականորեն հեղինակավոր որգան է, ոգտվում է կու-  
սակցության բոլոր անդամների ընդհանուր վստահությամբ  
և ոժագած է ընդարձակ լիազորություններով» (տես՝ «Կո-  
մինտերն ընդունվելու պայմանները»):

Այսպես է դրված կարգապահության խնդիրը կու-  
սակցության մեջ, պրոլետարիատի զիկտատուրան հաս-  
տատվելուց առաջ տեղի ունեցող կովի պայմաններում:

Նույնը պետք է ասել, բայց ավելի մեծ չափով, կու-  
սակցության ներքին կարգապահության մասին զիկտա-  
տուրան հաստատվելուց հետո:

«Ով վորկ է չափով թուլացնում է,—ասում է Լենի-  
նը, — պրոլետարիատի կուսակցության ներքին յերկաթյա-  
կարգապահությունը (առանձնապես պրոլետարիատի զիկ-  
տատուրայի ժամանակի), այդպիսին փաստորեն ոգնում է  
բուրժվագիտության պրոլետարիատի դեմք (տես, «Մանկ-  
հիվ»):

Բայց ասածներից պետք է հետեցնել, վոր Փրակ-  
ցիաների գոյությունը հակառակ է թե կուսակցության  
միության և թե նրա յերկաթյա կարգապահության:  
Ավելորդ և ասել, վոր Փրակցիաների գոյությունը առաջ  
է բերում մի քանի կենտրոններ, իսկ մի քանի կենտրոնն-  
երի գոյությունը նշանակում է ընդհանուր կենտրոնի  
բացակայություն կուսակցության մեջ, միասնական կամ-  
բացակայություն կարգապահության և զիկտատուրայի թու-  
լացում և քայլայում: Ի հարկե, Ա Ինտերնացիոնալի  
կուսակցությունները, վորոնք կովում են պրոլետարիա-  
տի զիկտատուրայի գետ և շեն կամենում պրոլետարնե-  
րին դեպի իշխանություն առնել, կարող են իրենց թուլ-  
ացում այնպիսի լիբերալիզմ, ինչպիս Փրակցիաների աղա-  
տականությունն է, վորովհետեւ նոքա ամենին կարիք չեն  
գումար յերկաթյա կարգապահության: Բայց կոմունիստա-  
կան Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք  
իրենց աշխատանքները կազմակերպում են պրոլետարիա-  
տի զիկտատուրայի նվաճման և ամրապնդման խնդիրնե-

ըր հիմք ընդունելով՝ չեն կարող ընդունել վոչ «լիբերա-  
լիզմ» և վոչ ել ֆրակցիաների ազատություն։ Կուսակ-  
ցությունը կամքի միամնականություն է, վոր բացառում  
ե ամեն տեսակի ֆրակցիոնականություն և իշխանու-  
թյան բաժանումն կուսակցության սահմաններում։ Մրանից  
ե բղիսում Լենինի բացարությունը «ֆրակցիոնականու-  
թյան վասնգավորության» մասին «կուսակցության միու-  
թյան և պրոլետարիատի առաջապահի կամքի միամնակա-  
նության իրազործման տեսակետից, վորպես հիմնական  
պայմանը պրոլետարիատի դիկտատորիայի հաջողության»,  
վորը վավերացված ե մեր կուսակցության ։ Հ համագու-  
մարում կուսակցության միամնականության վերաբերյալ  
հասուեկ բանաձեռք։

Մրանից ե բղիսում Լենինի պահանջը՝ «լիովին վոչըն-  
չացնել ամեն տեսակի ֆրակցիոնականությունը» և առնհա-  
պաղ, առանց վորե ե բացառության, արձակել այս  
կամ այն պլատֆորմայի վրա կազմակերպված խրմ-  
րակցությունը, անսպարժուն և անհապաղ կերպով կուսակ-  
ցությունից գուրս վարելու ապառնալիքի տակ (ահա՝  
բանաձեռք։ «կուսակց. միամնականության մասին»)։

6. ԿՈԽՍԿԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴՎՈՒՄ Ե ՆԻԱՆՈՎ,  
ՎԱԲ ՄԱՔՐՈՒՄ Ե ԻՐԵՆ ՈՊՈՐՏՅՈՒՆՆ ԻՍԱԿԱՆ ՏԱՐԵ-  
ԲԻՅ. — Ֆրակցիոնականության աղբյուրը կուսակցության  
մեջ կազմում են ոպորտյունիստական տարրերը։ Պրոլ-  
տարիատը փակված զասակարգ չե։ Նրա մեջ անընդհան-  
ուրուք են զործում գյուղացիությունից, քաղքենիներից,  
մասվորականությունից գուրս յելած տարրերը, յենթարկ-  
ված լինելով պրոլետարիզմիցի կապիտալի զարգացման  
հետևանքով։ Միաժամանակ տեղի յե ունենում պրոլետա-  
րիատի վերին շերտերի քայլացյում, գլխավորապես պրո-  
ֆեսիոնալիստներից և պարլամենտականներից, վորոնց  
մեռմ ե բուրժվագիան ի հաշիվ իր գաղութային հա-  
վելյալ արդյունքի «Բուրժվացած բանվորների այս խա-  
վը, առաջ և Լենինը — կամ «բանվորական աղնվակա-

նությունը», միանգամայն քաղքենիացած իր ապրելակեր-  
պով, իր աշխատավարձի չափերով, իր ամբողջ աշխարհա-  
հայացքով — հանդիսանում ե Ա Ինտերնացիոնալի գլխա-  
վոր նեցուկը, իսկ մեր որերում բաւրժ ժաղկայի գլխա-  
վոր սոցիալական (վոչ ուղմական) նեցուկը։ Վո-  
րովհետեւ գոքա բանվորական շարժման մեջ բուր-  
ժ ժաղկայի իսկական գործակալներն են, կապի-  
տալիստական գասակարգի բանվոր-գործակատարները, ոե-  
ֆորմիզմի և շովինիզմի իսկական առաջնորդները։ (տե՛  
«Իմպերիալիզմ»)։

Բոլոր այս մանր բուրժվական խմբակները մուտք են  
գործում այս կամ այն ձեռվ կուսակցությունն ու մտցնում  
նրա մեջ անհաստատամություն, սպորտյունիզմ, քայ-  
քայում և անվատահություն։ Նոքա յեն հանդիսանում գլո-  
խավորապես ֆրակցիոնականության և բաժանման աղ-  
բյուրը, աղբյուրը կազմակուծման և կուսակցության ներ-  
քին պայմանու Պատերազմել իմպերիալիզմի գեմ՝ ունենա-  
լով թիկունքում այդպիսի «գոշնակիցներ»։ Սա նշանակում  
ե ընկնել այն մարդկանց դրության մեջ, վորոնք գնդա-  
կակոծվում են յերկու կողմից թիւ ճակատից և թե թի-  
կունքից։ Ուստի անողորմ պայքարը այսպիսի տարրերի  
գեմ, նրանց վատրումը կուսակցությունից՝ իմպերիալիզ-  
մի գեմ մղվող կովի հաջողության նախապայմանն և  
հանդիսանում։

Ոպորտյունիստական տարրերը կուսակցության ներ-  
քին գաղափարական պայքարի միջոցով «չեղոքացնելու»,  
մեկ կուսակցության շրջանակների մեջ այս տարրերից  
շագատվելու տեսությունը փտած և փտանգավոր մի տե-  
սություն ե, վոր սպառնում ե կուսակցությունը մասնել  
անգամալուծության և պարբերական տկարացման, սպառ-  
նում ե յենթարկել նրան ոպորտյունիստների կամ այսակա-  
նությանը, բաժանել պրոլետարիատին իր հեղափոխական  
կուսակցությունից և այդպիսով զբկել նրան զիսավոր  
զենքից իմպերիալիզմի գեմ մղվող կովում։ Մեր կուսակ-

ցությունը չեղ կարող դուրս գալ աղատ ճանապարհ, Նա չեղ կարող վեցնել իշխանությունը և կազմակերպել պրոլետարիատի դիկտատուրան, չեղ կարող քաղաքացիական պատերազմից դուրս գալ հաղթական, յեթե նա իր շարքերում ունենար Մարտովսերին և Դաներին, Պոտրեսովսերին և Ակսելրոդներին: Յեթե մեր կոստակցությունը հաջողվեց ստեղծել ներքին միասնականություն և անհախլինթաց միախմբվածություն, ապա այդ նախ և առաջ այն պատճառով, զոր նա կարողացավ իր ժամանակին զտվել ոպորտյունիզմի աղանդությունից և վտարել կուսակցությունից լիկվիդատորներին և մենշևիկներին: Պրոլետարական կուսակցությունները զարգանում են և ամրապնդվում, ազատելով իրենց շարքերը ոպորտյունիստներից և ոեփորմիստներից, սոցիալ իմակերիալիստներից և սոցիալ-շովինիստներից, սոցիալ-պատրիոտներից և սոցիալ-պացիֆիստներից: Կուսակցությունն ամրապնդվում է նրանով, զոր զտում է իրեն սպորտյունիստական տարրերից:

«Ունենալով սեփական շարքերում ոեփորմիստների, մենշևիկների, —ասում ե Լենինը, —չի կարելի հաղթանակել պրոլետարական հեղափոխության ժամանակ, չի կարելի պաշտպանել այդ հեղափոխությունը: Սա սկզբունքային հարց ե: Սա հաստատված է թե Ռուսաստանի և թե Վենգրիայի հանրահայտ փորձով... Ռուսաստանում շատ անգամ եյին լինում ծանր զրություններ, յերբ հաստատապես կարող եր տապալվել խորհրդային ոեթիմը, յեթե մենշևիկները, ոեփորմիստները, մանր բուրժվական դեմոկրատները մնային մեր կուսակցության մեջ... Բոտլիայում, ամենքի խոստվամությամբ, հասունանում է բուրժվագիայի և պրոլետարիատի վճռական կոիվը իշխանությունը ձեռք ձգելու համար: Այդպիսի մոմենտին վոչ միայն անհրաժեշտ ե անզայման հեռացնել մենշևիկներին, ոեփորմիստներին և տուրութիւններին կուսակցության շարքերից, այլև անողութ չի լինի հեռացնել պա-

տասխանատու պրոտերից այն լավագույն կոմունիստներին, վորոնք ընդունակ են տատանվելու և արտահայտում են ոեփորմիստների հետ «միանալու» հակում... Հեղափոխության նախորյակին և հեղափոխական կովի ամենակատադի վայրկյաններին ամենաչնչին տատանումները կուսակցության ներսում՝ ընդունակ են խորտակելու ամեն ինչ, փացնելու հեղափոխության գործը, խլելու իշխանությունը պրոլետարիատի ձեռքից, վորովնետե այդ իշխանությունը տակավին ամուր չե, վորովնետե գրոհը նըրա դեմ տակավին չափազանց ուժեղ է: Յեթե տատանվող զեկավարները այդպիսի ժամանակ մի կողմ են քաշվում՝ դա չի թուլացնում, այլ ուժեղացնում ե և կուսակցությունը, և բանվորական շարժումը, և հեղափոխությունը (տես՝ «Ազատության կեղծ ճառերը»):

## IX. ՎՈՃԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԶ.

Խոսքս գրական վոճի մասին չեւ Այստեղ յես նկատի ունեմ աշխատանքի վոճը, այն առանձնահատուկը և ուրուցի լենինիզմի պրակտիկայի մեջ, վորն և ստեղծում և լենինական գործչի հատուկ տիպը։ Լենինիզմը տեսական և պրակտիկ մի զպրոց ե, վոր կերտում ե կուսակցական և պետական գործչի ուրույն տիպ, վոր ստեղծում ե աշխատանքի հատուկ լենինյան վաճ։ Վորոնք են այդ վոճի բնորոշ գծերը, նրա առանձնահատուկ կողմերը։

Այդ առանձնահատուկ կողմերը յերկուս են՝ ա) ստուկան հեղափոխական թափը և բ) ամերիկյան գործնականությունը։ Լենինիզմի վոճը այդ յերկու առանձնահատկությունները կուսակցական և պետական աշխատանքների բնագավառում իրար հետ միացնելու մեջ և կայանում։

Խուսական հեղափոխական թափը մի հակաթույն և անշարժության, հնամոլության, պահպանողականության, մտքի ճահճացման և պատենական տրագիֆիաներին ոտքը կորեն հնագանդվելու դեմ։ Խուսական հեղափոխական թափը այն փրկարար ուժն է, վորը զարթեցնում է միտքը, մղում առաջ, ջախջախում է անցյալը և տալիս ապագայի վառ հեռանկարներ։ Առանց նրան անկարելի յեւ վորնե շարժում դեպի տառաջ։ Բայց նու կարող ե այլասերվել պրակտիկայում և գառնալ «հեղափոխական» դատարկ մանիլովականություն, յեթե աշխատանքի մեջ նրան ամերիկյան գործնականության հետ չմիացնենք։ Այդպիսի այլակերտան որինակներ — ինչքան ուզեք։ Ամենքին հայտնի յեն «հեղափոխական» պարապ շարահարումների ու ծրագրներ

թիւելու այն հիվանդությունը, վորի աղբյուրն և հավատը դեկրետների ուժը, թե նոքա կարող են ամեն ինչ շինել և փոփոխել։ Մուս գրողներից մեկը, ի. երենբորդը, զուրու ե բերել իր «Ռւսկոմչել» (կատարելազործված կոմունիստական մարդը) պատմվածքում այդ հիվանդությամբ գարակված «բոլշեվիկի» տիպը, վորն իրեն նպատակ եր զրել ուրվագծել իդեալականապես կատարելազործված մարդու սինման, և... «խեղդվեց» այդ «աշխատանքի» մեջ։ Պատմվածքում չափազանցություններ շատ կան, բայց վոր հեղինակը հիվանդությունը ճիշտ և ըմբռնել՝ գրանում կասկած չկա։ Սակայն վոչ վոք, ինձ թվում ե, այնպես կծու և անողոք կերպով չե հեգնել նման հիվանդներին, ինչպես այդ արել և լենինը։ «Կոմունիստական ամբարտավանություն» անվանեց նա այդ հիվանդությամբ գեպի անիմաստ շարահարումների ու գեկրետներ թիւելու ուժը։

«Կոմունիստական ամբարտավանություն այն կընրանակե, ասում ե լենինը, վոր մարդը լինելով կոմունիստական կուսակցության մեջ և տակավին այնտեղից զարգած չլինելով, յերեակայում ե, թե իր բոլոր խնդիրները նա կարող ե լուծել կոմունիստական հրամանագրություններով» (տես՝ «Լենինի ճառը քաղ. լուս. աշխ. համագումարում»)։

«Հեղափոխական» շաղակրատություններին լենինը սովորաբար հակադրում եր սովորական և առորյա գործերը, դրանով իսկ ընդգծելով, վոր «հեղափոխական» պարապ շարահարութները գեմ են իսկական լենինիզմի թե վոգուն և թե տառին։

«Քիչ փքուն խոսքեր, — ասում ե լենինը, — շատ առորյա, սովորական գործ... քիչ քաղաքական աղմուկ, մեծ ուշադրություն գեպի կոմունիստական, շինարարության սովորական, բայց կենդանի փաստերը...» (տես՝ «Մեծ սկզբնավորություն»)։

Ամերիկյան գործնականությունը, ընդհակառակը, մի հակաթույն և «հեղափոխական» մանիլովականության և մտացածին շարահարութների դեմ, Ամերիկյան գործնականությունն այն անզուսպ ուժն է, զորք չգիտե և չի ճանաչում արգելքներ, զորք խափանում ե իր գործնական հաստատակամությամբ ամեն տեսակի խոչընդուաները, զորք չի կարող չհացնել իր վախճանին միանգամ սկսած գործը, յեթե դա անգամ աննշան գործ է, և առանց վարի անյերեվակայելի յել լուրջ շինարարական աշխատանքը՝ Բայց ամերիկյան գործնականությունը կարող է այլասերվել և վերածվել նեղ և անսկզբունք գործնական ցավագարության, յեթե նրան չմիացնենք ոռուսական հեղափոխական թափը. Ում հայտնի չեն եղ պրակտիկականության և անսկզբունք գործնականության հիվանդությունը, զոր մի քանի «բոլշևիկների» հաճախ կերպարանափոխում եր և շեղում հեղափոխության գործից. Այս ինքնահատուկ հիվանդությունն իր արտահայտությունն է գտել Բ. Պիլյակի «Մերկ տարին» պատմվածքի մեջ, ուր նկարագրված են ոռուս «բոլշևիկների» այնպիսի տիպեր, զորոնք լցված կամքով և պրակտիկ վճռականությամբ «գործում են» չափազանց «յեռանգուն», բայց զուրկ են հեռանկարներից, չգիտեն զլոր բանը ինչի համար ե» և զրա հետեանքով շեղվում են հեղափոխական աշխատանքի ձանապարհից. Վոչ զոք դեռ այնպես կծու չի հեղնել նման գործնականության հիվանդությունը, ինչպես այդ անում եր Լենինը. «Նեղակատ պրակտիկականություն» և «անգլուխ գործնականություն» եր անվանում նա այդ հիվանդությունը. Նա հակաղը եր նրան սովորաբար կենդանի հեղափոխական գործը և հեղափոխական հեռանկարների անհրաժեշտաթյունը մեր առորյա ամեն տեսակի աշխատանքների մեջ, ընդգծելով այդպիսով, թե անսկզբունք գործնականությունը նույնչափ հակառակ է խականի լենինիզմին, զորչափ «հեղափոխական» պարապ շարահարումները:

Թուսական հեղափոխական թափը ամերիկյան զործնականության հետ միացնելու մեջ և կայտնում լենինիզմի վորչեյությունը, թե կուսակցական և թե պետական աշխատանքների շրջանում։

Միմիայն այսպիսի միացումը կըստա մեզ լենինական  
գործչի ամբողջացած տիպ և աշխատանքի լենինյան վոճ:



July

ԲԱՎԱՆԴԱԿԱՒԹՅՈՒՆ

Լենինի մասին ✓ . . . .	3	յեր.
Լենինիզմի հիմունքների մասին ✓ . . . .	17—157	»
I. Լենինիզմի պատմական արժանաները ✓ . . . .	21	»
II. Մեթոդը ✓ . . . .	30	»
III. Տեսությունը ✓ . . . .	40	»
IV. Պրոլետարիատի դիկտատուրան . . . .	63	»
V. Գյուղացիական խնդիր . . . .	80	»
VI. Ազգային խնդիր . . . .	98	»
VII. Սարատեղիա և տակավիկա . . . .	111	»
VIII. Կառակցություն . . . .	133	»
IX. Վոճը աշխատանքի մեջ . . . .	154	»


35

«Ազգային գրադարան



NL0185632

Հովհաննես Տերյանի  
կողմէ



35

